

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒՆԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Հայրենիքին անկախությունը
առանցքն է ազգի հզորության 530

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը
Հայաստան Համահայկական Հիմնադրամին
24-րդ հեռուստամարաթոնին առիթով 533

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ 535

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ
(Turning to God)..... 539

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնություն
Յովհաննու Աւետարանի (2.13-25)..... 544

ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Դպրեվանքին 552

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսարանի Մատենադարանը 557

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԲԷՅԵԱԵԱՆ — Ընկեր - Ընկերություն 564

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ 574

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 582

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ 585

ՏՕՆԱԿԱՆ 589

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ 593

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ 595

ԴՊՐԵՎԱՆՔ 601

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ 603

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒԵՐ 610

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ 613

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ 615

Հ.Ե.Հ.Ո.Ս. 617

ԼՈՒԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ 622

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ 631



ՊԼՇՏՕՆԿԿՆ ԸՄՍԿԳԻՐ
ԿԸԹՈՂԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՅՈՅ
ՄԵԾԻ ՏԵՆ ԿԻԿԿԻՈՅ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՆՅՔՆ Է ԱԶԳԻ ՀԶՕՐՈՒԹԵԱՆ***

Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամեակին առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Անթիլիասի Մայրավան-
ժէն հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի
գաւակները:

Տիտր ու անորոշ պայմաններու մէջ կը նշենք Հայաստանի անկախու-
թիւնը: 44-օրեայ պատերազմին մեծ թիւով զոհեր տուինք, բազմաթիւ գե-
րիներ եւ վիրաւորներ ունեցանք ու հսկայ տարածքներ կորսնցուցինք:
Մեր ժողովուրդը յուսախաբութեան ու յուսահատութեան մէջ կը տուայ-
տի, անորոշ կը տեսնէ իր հայրենիքի ներկան եւ մութ՝ սպագան:

Արդարեւ, 30 տարիներ առաջ յողթական էինք. այսօր պարտուած
ենք: Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս...: Ժողովուրդը այս եւ բազմաթիւ այլ յարակից
հարցումներուն պատասխանը կը սպասէ, հաշուեմնութիւն ու հաշուե-
տուութիւն կը պահանջէ՝ համապարփակ ու իրապաշտ մօտեցումով: Կա-
րելի չէ անցեալը անցած նկատել: Ինքնաբերականութիւնը ու ինքնասրբազրու-
մը առաջին փայլն են Հայաստանը ներկայ անորոշ ու անկայուն վիճակէն

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին՝
խօսուած Կիրակի, 21 Սեպտեմբեր 2021, Հայաստանի Հանրապետութեան Վերանկախու-
թեան 30-Ամեակին առիթով:

դուրս բերելու:

Արտաքին նախարարի վրայ, վտանգալից ալիքներ կը մօտենան Հայաստանի արևելքում. մութ ամպեր կը կուտակուին Հայաստանի երկինքին վրայ: Պետք է ըլլալ արթուն ու իրատես՝ յստակօրէն տեսնելով ու ճիշդ արժեւորելով մեր շուրջը տեղի ունեցող երեւելի ու աներեւոյթ զարգացումները:

Հակառակ միջազգային համայնքի զգուշացումներուն, Ազրպէյճանը յիշտատանքով կը յայտարարէ, թէ ինք Հայաստանի հետ իր հարցը լուծած է, Արցախը իր հողային ամբողջականութեան մաս կը նկատէ եւ անկին՝ շարունակ Հայաստանի ամբողջականութիւնը հարցականի տակ դնող ու անվտանգութիւնը խախտող պահանջներ կը ներկայացնէ, եւ նոյնիսկ այս ուղղութեամբ որոշ քայլերու կը դիմէ:

Միւս կողմէն, Կովկասէն ներս ստեղծուած նոր իրավիճակէն օգտուելով, Թուրքիան «բարի դրացնութեան» ձեռք կ'երկարէ Հայաստանին, յայտարարելով, թէ դրական ուղերձներ կը յղէ Հայաստան եւ դրական ուղերձներ կը ստանայ Հայաստանէն: Թուրքիան եւս, իր կարգին, պահանջներ ունի Հայաստանէն՝ փոխ-ճանաչում շրջանի հողային տարածքներու ամբողջականութեան եւ դադարեցում Հայոց Յեղասպանութեան ճանաչման հետապնդումին:

Եւ փաստօրէն, մեր բարեկամ երկիրները շրջանի իրենց շահերէն թելադրուած, երբեմն լուռ եւ երբեմն բարձրաձայն, կը բաժնեն Ազրպէյճանի եւ Թուրքիոյ այսպէս կոչուած «խաղաղարար» մօտեցումները: Այսպէս, երկուսն էլ դատեալը այսօր դարձած է դատաւոր, ամբաստանեալը՝ պահանջատէր, ցեղասպանը՝ իրաւատէր. եւ հին ու նոր օրերու ցեղասպաններուն դիմաց Հայաստանը մնացած է առանձին եւ դժբախտարար, միշտ զիջողի դերին մէջ...:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ ռազմաբախտական շահերու վրայ հաստատուած ու ծաւալապաշտական հեռանկարներէ առաջնորդուած համա-թուրանական եւ համաթրքական նոր դաշնակցութիւն մը կը կազմաւորուի Կովկասէն ներս:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ Ազրպէյճանի պահանջներուն ընթացք տալով, Հայաստանը պիտի կտրատուի՝ կորսնցնելով իր հողային ամբողջականութիւնը եւ վտանգելով իր գերիշխանութիւնը:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ Թուրքիոյ երկարած ձեռքը սեղմելով, մոռացութեան պիտի դատապարտուի մեր ժողովուրդի հողային պահանջն ու ցեղասպանութեան ճանաչումը, ինչպէս նաեւ թուրք-ազերիական օղակի մէջ մնալով պիտի վտանգուի Հայաստանի անկախութիւնը:

Եւ այս բոլոր զարգացումները Հայաստանը պիտի դնեն անորոշ ապագայի դիմաց:

Փոքր երկիր եմք, շրջապատուած ոչ-բարեկամ երկիրներով: Շրջանի

աշխարհագրութիւնը կարելի չէ փոխել: Սակայն, կարելի է եւ՝ հրամայակա՛ն, աշխարհաբաղադրական յարափոփոխ պայմաններուն համահունչ այնպիսի մօտեցումներ որդեգրել ու դիրքորոշումներ ճշդել, որոնք չեն վտանգեր Հայաստանի գերագոյն շահերը ու անոր ապագան: Հայաստանի անկախութեան ու գերիշխանութեան, հողային ամբողջականութեան ու անվտանգութեան ամուր պահպանումը մեր ժողովուրդին համար ազգային անտեղիտալի սրբութիւն է:

Այո՛, դիւանագիտութեան մէջ հարկ է ըլլալ ճկուն, բայց ո՛չ պարտըւողական: Շրջանի աշխարհաբաղադրական ներկայ պայմաններու լոյսին տակ, հարկ է ըլլալ իրատես, բայց ո՛չ գիշող: Ռազմաբաղադրական մեր բարեկամներու տեսակէտները հարկ է յարգել, ի պահանջել հարկին նաեւ նկատի ունենալ անոնց շահերը: Սակայն, հեռատեսութիւնը ու քաջութիւնը պէտք է ունենալ Ո՛Ձ ըսելու բոլո՛ր պայմաններուն մէջ եւ բոլորի՛ն, մի՛շտ մեկնելով Հայաստանի ընդհանրական ու գերագոյն շահերէն:

Հայաստանը շրջապատող տագնապներն ու մարտահրաւերները իրենց էութեամբ, համահայկական բնոյթ եւ հետեւանք ունին: Հետեւաբար, կարելի՛ չէ, ճի՛շդ չէ, կտուարական ընթացիկ քննարկումներով որոշումներ կայացնել: Պատմութեան դիմաց հաւաքական պատասխանատուութիւն ունինք:

44-օրեայ պատերազմին առաջին շաբաթը Վարչապետին առաջարկեցինք համազգային խորհրդակցութիւն մը կազմակերպել՝ մի՛ասնաբար դիմագրաւելու Արցախին դիմաց կանգնող ահաւոր սպառնալիքը: Նո՛յնը կը կրկնենք այսօր: Հայրենիքին ներկան մթագնող ու ապագան վտանգող ֆակտագրական ինդիքները ու տագնապալից կացութիւնները անհրաժեշտ է համազգային ճիգով, կամֆով ու տեսլականով դիմագրաւել: Ա՛յս կը թելադրէ մեր դարաւոր պատմութիւնը: Ա՛յս կը պարտադրէ նաեւ ներկայ ճգնաժամային կացութիւնը:

Անկախութիւնը աստուածատուր պարգեւ է եւ անոր պաշտպանութիւնը՝ սրբազան առաքելութիւն: Հայրենիքի անկախութիւնը առանցքն է ազգի հոգորութեան եւ երաշխիքը՝ յանրժութեան: Արդ, Հայաստանի անկախութեան նշումը մեզի համար պէտք է դառնայ արթնութեան կոչ ու ազգային համախմբումի մարտահրաւեր: Բոլորուի՛նք հայրենիքին շուրջ եւ հաւաքական պատասխանատուութեամբ ու յանձնատուութեամբ կերտենք հայրենիքի պայծառ ապագան: Թող Աստուած անսասան պահէ ու պահպանէ Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը, մեր ազգին այս երեք անբաժանելի բեւեռները:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
24-ՐԴ ՀԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջու-
նենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Հինգշաբթի, Նոյեմբեր 25-ին,
տեղի պիտի ունենայ Հայաստան Համահայկական Հիմնադրամի 24-րդ
հեռուստամարաթոնը: Արդարեւ, Հայաստան Համահայկական Հիմնադր-
րամը իւրաքանչիւր հայու եւ ամբողջ հայութեան հիմնադրամն է: Ան
Հայաստանի ու Արցախի հօրացման ի խնդիր գործող հիմնադրամ է. այլ
խօսքով՝ ողջ հայութեան առաւել հօրացման ու առաւել ծաղկման հիմ-
նադրամ. որովհետեւ, ինչպէս յանախ կարեւորութեամբ կը շեշտենք, Հա-
յաստանի հօրացումը մեր ազգին հօրացումն է, եւ՝ փոխադարձաբար:
Ա՛յս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ իւրաքանչիւր հայ իր
ներդրումը կոչուած է բերել Հայաստան Համահայկական Հիմնադրամի
հանգանակութեան՝ զօրավիգ կանգնելով անոր նախաձեռնած բոլոր
հայաշէն ու հայրենակերտ ծրագիրներուն:

Ներկայ հեռուստամարաթոնը տեղի պիտի ունենայ *«Կենսունակ Սահ-
մանային Համայնքներ»* խորագիրին ներքեւ: Հաւաքուած գումարներով
պիտի իրագործուին այնպիսի ծրագիրներ, որոնց նպատակը Հայաստանի
ու Արցախի սահմաններուն մօտ ապրող համայնքներուն առաւել
կազմակերպումն ու բարգաւաճումն է: Արդարեւ, սովորական ծրագիր
մը չէ սա. անոր հիմնական նպատակը սահմանային համայնքներու ամրա-
ցումն ու պաշտպանութիւնն է՝ ի խնդիր Հայաստանի անվտանգութեան
առաւել ամրապնդման: Հետեւաբար, ռազմավարական նշանակութիւն
ունի նման ծրագիրներու իրագործումը՝ ընկերատնտեսական զարգաց-
ման առընթեր:

Այս առիթով, Մեր բարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Հայաստան
Համահայկական Հիմնադրամին, որ անցնող տարուան ընթացքին իր յառ-
կացուցած գումարներով կարեւոր նպաստ բերաւ մեր վիրաւոր գիւուոր-
ներու բուժման, արցախցիներու յատուկ բնակարաններու շինութեան,
համայնքներու կրթական ու տնտեսական կեանքի ծաղկման եւ յարակից

այլ ծրագիրներու, ինչպէս նաեւ ընկերատնտեսական տագնապի մէջ գըտնուող Լիբանանի հայութեան: Վստահ ենք, որ նման ծրագիրներ առաջնահերթութեան կարգով պիտի շարունակեն միշտ յատուկ տեղ գրաւել *Հայաստան* Համահայկական Հիմնադրամի առաքելութեան ծիրէն ներս:

Հետեւաբար, անգամ մը եւս կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի աշխարհացրիւ գաւակներուն. գործնապէս մասնակից դառնալու բազմաթիւ ու բազմազան տագնապներու ու մարտահրաւերներու դիմաց գտնուող մեր հայրենիքին՝ Հայաստանի ու Արցախի անկախութեան, անվտանգութեան ու գերիշխանութեան նպաստող ծրագիրներու իրագործման:

Թող Աստուած պահէ ու պահպանէ Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը եւ մեր ժողովուրդին կեանքը լեցնէ երկնային բարիքներով:

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Սերժ Սամոնեանցին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Հոգեկան գոհունակությամբ կարդացինք Հիսսիսային Ամերիկայի Արեւմրտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի վկայութիւնը՝ ընդհանրապէս գաղութի կեանքէն ու յատկապէս գրական-մշակութային մարզէն ներս Ձեր ունեցած կարեւոր ներդրումի մասին:

Արդարեւ, Ամերիկայի Արեւելեան շրջանէն ներս հրատարակուող մամուլին, մասնաւորաբար մեծաթիւ հայ թէ ամերիկացի ընթերցող հաշուող «Ասպարէզ»ի եւ «Քալիֆորնիա Քուրիըր»ի էջերուն մէջ Ձեր ստորագրած խմբագրականներով ու յօդուածներով, եղաք մեր համայնքի կեանքին մէջ նկատառելի նպաստ բերած ազգայիններէն մէկը: Նուիրումով ու հաւատքով կատարեցիք Ձեր գործը: Ու այդ նուիրումին ու հաւատքին պտուղն է, գոր կը վայելէք այսօր, "Ասպարէզ"ի հիմնադրութեան 105-րդ տարեդարձի նշման առթիւ Ձեզի ընծայուած պատիւին ու երախտագիտական արտայայտութեանց ճամբով:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի խնդրանքին, եւ անոր միացնելով Մեր բարձր գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր հարազատներուն շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 16-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԹԷ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
(Տ. Ներսէս Քինյ. Ճերմակեանի
Աւագութեան տիտղոս ստանալուն առթիւ)

Հոգեկան գոհունակութեամբ կարդացինք Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի վկայութիւնը՝ շուրջ քսանըփինգ տարիներ թեմէն ներս Ձեր մատուցած քահանայական բարւոք ծառայութեան մասին:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԱԻԱԳՈՒԹԵԱՆ

պատիւ եւ տիտղոս: Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը իրան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ ի սպաս Լիբանանի թեմին, եւ յատկապէս Ձահլէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հաւատացեալներուն:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջառողջութիւն եւ երկար ու աստուածահաճոյ կեանք:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Գիրս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28 Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԺԸ.*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Գուրգէն Քհնյ. Յովհաննէսեան, Ծաղկեալ սեւ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Գիրս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԺԹ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Նարեկ Քհնյ. Հէճինեանին, Ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Գիրս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Սեւակ Քինյ. Վասիլեանին, Քահանայական Լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԱ.*

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

**ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ
(Turning to God)**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հիմնադրաբար, 16 Ապրիլ 2020

Միացեալ Նահանգներու կողքին, Փորթուկալը, Իտալիան, Ֆրանսան, Սպանիան, Ջուիցերիան, Գերմանիան եւ Անգլիան ամենածանր վնաս կրողներն են համաճարակէն, որ նուազելու ոչ մէկ նշան ցոյց կու տայ: Եւրոպան, որ մեծ ցնցում կ'ապրի, գերմարդկային ճիգեր ի գործ կը դնէ հակակշռի տակ պահելու մեռնողներուն թիւը:

Վերջերս կարդացի Christopher Cardwell-ի *Մտածումներ Եւրոպայի Յեղափոխութեան մասին* (*Reflections on the Revolution in Europe*, 2010, Լոնտոն) գիրքը, որ զիս մղեց մտածումներս կեդրոնացնելու Եւրոպայի վրայ:

Համաշխարհային պատմութեան մէջ, Եւրոպան ունեցած է մեծագոյն դերակատարութիւնը, մարդկային կեանքի բոլոր մարզերէն ներս: Ան եղաւ ծննդավայրը մարդկայնութեան, վերածնունդի, ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներուն: Աշխարհի պատմութեան կարեւոր եղելութիւններն ու նշանաւոր իրագործումները, այս կամ այն ձեւով, փոքր թէ մեծ տարողութեամբ կը վերագրուին Եւրոպային, որ կը շարունակէ մնալ տիրական ներկայութիւն՝ իր սահմաններէն դուրս գտնուող շատ մը ընկերութիւններու կեանքին մէջ:

Իր գիրքին մէջ, Cardwell հարց կու տայ, թէ «Արդեօք Եւրոպան պիտի ըլլա՞ր այն ինչ որ է, եթէ իր ժողովուրդին փոխարէն տարբեր ժողովուրդ ունենար»: Ես լիովին կը բաժնեմ իր մտահոգութիւնը: Համաճարակի կողքին, Եւրոպան ներկայիս բազմաթիւ լուրջ խնդիրներ կը դիմագրաւէ, ինչպէս օրինակ՝ գաղթականութիւն, տնտեսական տագնապ, նոր ինքնութեան փնտրտուք, երկեակ հաւատարմութիւն եւ անհանդուրժողութիւն իսլամութեան նկատմամբ: Արդ, Եւրոպան ենթակայ է միջազգային համայնքէն ներս իր կեդրոնական տեղը եւ իւրայատուկ դերը կորսնցնելու վտանգին:

Դէպի Եւրոպա խուժող գաղթականներու ստուար թիւը, մասնաւորաբար

19-րդ եւ 20-րդ դարերուն, իր հետ բերաւ բազմատեսակ մշակոյթներ, կրօններ եւ ցեղեր: Այս ներխուժումը, աւելի քան երբեք, կը մնայ հրատապ եւ գոյութենական խնդիր այս ցամաքամասին համար: 2001-ի Սեպտեմբեր 11-էն քանի մը ամիս ետք, Անգլիոյ օրոտան վարչապետ Թոնի Պլէրը եւ Քէնթրպրի Արքեպիսկոպոսը զիս հրաւիրեցին, փոքրաթիւ մտաւորականներու խումբի մը հետ քննարկելու աշխարհի ապագային կապուած խնդրայարոյց հարցեր: Հաւաքի ընթացքին, իմ դիտարկումներուս մէջ մատնանշեցի, որ դէպի Եւրոպա մարդկային հոսքը բարդ խնդիր մըն է, որ Եւրոպան կը դիմագրաւէ եւ ընդգծեցի առանցքային կարեւորութիւնը միջ-կրօնական երկխօսութեան եւ համագործակցութեան, ինչպէս նաեւ՝ ընդհանրական հարցերու քննարկման միտող միջ-կրօնական նախաձեռնութիւններու առանցքային կարեւորութիւնը:

Անցեալին, քաղաքական, մշակութային, գինուորական, գիտական եւ ճարտարագիտական ուժը մեծ մասամբ առնչուած էր Եւրոպայի հետ. այսօր պարագան նոյնը չէ այլեւս: Քրիստոնէութիւնը տիրապետող ներկայութիւն էր Եւրոպայի մէջ, դարձեալ, պարագան նոյնը չէ ներկայիս: Աշխարհականացման շարժումին հետեւանքով, Եւրոպական մշակոյթին մէջ քրիստոնէական հիմնական արժէքները դարձած են լուսանցքային: Այս օրերուն Եւրոպան վերա-քրիստոնէացնելու եւ քրիստոնէական արժէքներուն վերադարձնելու կոչերը յաճախակիօրէն կը լսուին յատկապէս միջ-եկեղեցական շրջանակներու մէջ:

Առանց քրիստոնէական ժառանգութեան, Եւրոպան մեծ չափով պիտի կորսնցնէ իր ինքնութիւնը: Ուստի, քրիստոնէայ աստուածաբաններու եւ քաղաքական գործիչներու միջեւ երկխօսութիւն մը այս ցամաքամասի ապագային մասին, եւ յատկապէս՝ աշխարհականացման, մարդկայնացման եւ համաշխարհայնացման հարցերու գծով, կրնայ մեծապէս նպաստել՝ պահպանելու Եւրոպայի պատմական ու մշակութային իւրայատուկ ժառանգութիւնը: Այլ կրօններու հետ երկխօսութեան մէջ մտնելով, քրիստոնէութիւնը պէտք է որոնէ լաւագոյն միջոցները՝ եկոտորներու արժէքներն ու ավանդութիւնները ներդաշնակելու Եւրոպական ժառանգութեան հետ: Արդարեւ, ոչ-Եւրոպացիներուն հետ վերաբերիլ որպէս «ուրիշներ», զանոնք պահելով ընկերային կեանքի լուսանցքին վրայ, կրնայ լուրջ հետեւանքներ ունենալ:

Սովետական վարչակարգի անկումով եւ Պերլինի Պատին քանդումով, որպէս խորհրդանիշը Եւրոպային բաժանումին, կ'ակնկալուէր որ Եւրոպական միութիւնը իրականանար: Ազգայնական շարժումներուն վերազարթնումը ու նախկին համայնավար երկիրներուն մէջ կրօնական-ցեղային բախումները նոր բաժանումներ յառաջացուցին Եւրոպական ցամաքամասէն ներս: Փաստօրէն, Եւրոպան քաղաքական ուղղութենէ աւելի նոր արժեհամակարգի

կարիքը ունի, որպէսզի կարենայ իր ինքնութիւնը եւ ամբողջականութիւնը պահել ու միւս կողմէն՝ իրագործել ներդաշնակ համալրում՝ հեռու մնալով Միացեալ Նահանգներու նման «ձուլարան» դառնալու վտանգէն: Եւրոպայի ապագայի ինքնութիւնն ու իրավիճակը իրենց ուղղակի անդրադարձը կըրնան ունենալ աշխարհի համակարգին վրայ:

Ուրբաթ, 17 Ապրիլ 2020

Հին ժամանակներէ ի վեր բարիի ու չարի հարցը լուրջ բանավէճերու դուռ բացած է, մասնաւորապէս կրօնի եւ փիլիսոփայութեան մարզերէն ներս:

Քրիստոնէական աստուածաբանութեան համաձայն, ինչ որ Աստուած ստեղծեց, բարի է: Աստուածաշունչի ստեղծագործութեան պատմութեան մէջ, կը կարդանք, որ իր ստեղծագործութեանց իւրաքանչիւր հանգրուանին, Աստուած կանգ կ'առնէ՝ տեսնելու համար որ եթէ «բարի» է, եւ ապա կը շարունակէ իր գործը (Մնն 1.1–24): Բարութիւնը ոչ միայն առնչուած է ստեղծուածի դերին ու նպատակին, այլ գլխաւորաբար՝ անոր բնութեան: Աստուած չարը չստեղծեց: Չարը գոյութիւն չունի Աստուծոյ ստեղծագործութեան մէջ. անիկա ժխտումն է ստեղծագործութեան: Ստեղծագործութեան մէջ չարին ներկայութիւնը արդիւնք է մարդկային մեղքին, որ ծնունդ առաւ Աստուածապարզ եւ ազատութեան չարաշահումէն: Այս մօտեցումը կը բաժնեն երեք միաստուածեան կրօնները:

Քրիստոնէական աստուածաբանութիւնը կը մերժէ որեւէ երկուութիւն՝ հաւատքի հիմնական տարրերուն միջեւ, ինչպէս օրինակ՝ բարի եւ չար, դրախտ եւ դժոխք, հրեշտակ եւ սատանայ, Աստուած եւ հակա-Աստուած: Հակա-էակները գոյութիւն չունին: Չենք կրնար խօսիլ էակներու եւ ոչ-էակներու, գոյերու եւ ոչ-գոյերու գոյակցութեան մասին: Պէտք չէ շփոթել գոյութեան եւ ներկայութեան միջեւ: Բարին գոյութիւն է, իսկ չարը՝ ներկայութիւն: Ոչ-գոյին, այսինքն՝ չարին ներկայութիւնը՝ գոյին, այսինքն բարիին բացակայութեան հետեւանքն է: Չարին ներկայութիւնը ստեղծագործութեան մէջ սպառնալիք մըն է արարչութեան եւ կեանքին դէմ. պէտք է նուաճել զայն՝ «Ատեցէ՛ք ինչ որ չար է եւ բարիին կառչած մնացէ՛ք» (Հո 12.9) կը թելադրէ առաքեալը:

Մարդ արարածը աստուածային հրահանգով կոչուած է պաշտպանել ստեղծագործութեան մէջ բարին չարին դէմ, որ միշտ կը սպառնայ բարիին: Քրիստոնէական բարոյագիտութիւնը բաժանման յստակ գիծ մը կը դնէ բնական եւ բարոյական չարիքին միջեւ: Բնական չարիքի պարագային, ինչպէս երկրաշարժները, մարդ արարածը ոչ մէկ պատասխանատուութիւն ունի, թէեւ ան կրնայ կանխարգիլողի դեր ստանձնել. մինչ բարոյական չարիքի պարագային, ինչպէս օրինակ մարդասպանութիւն, ցեղասպանութիւն եւ

բնութեան չարաչահում, ամբողջական պատասխանատուութիւնը կ'իյնայ մարդուն վրայ:

Քորոնա վիրուսը արդեօք բնակա՞ն, բնապահպանակա՞ն թէ բարոյական չարիք մըն է: Այս եւ նման հարցումներ կարիքը ունին խոր ուսումնասիրութեան եւ քննարկումներով՝ բնապահպաններով, աստուածաբաններով, բարոյագէտներով եւ վիրուսագէտներով կողմէ:

Շաբաթ, 18 Ապրիլ 2020

Ժամանակակից աստուածաբանութեան մէջ, Քրիստոս կ'ըմբռնուի որպէս ազատարար եւ իր երկրաւոր առաքելութիւնը՝ որպէս Ազատագրում: Այս մօտեցումը առաջին անգամ հրապարակուեցաւ Պրազիլացի աստուածաբան Gustavo Guitierrez-ի կողմէ 1971-ին, եւ լայն արձագանգ գտաւ կարգ մը Լատին Ամերիկացի աստուածաբաններով կողմէ: Ազատագրման աստուածաբանութիւնը յոյսի աստուածաբանութեան, սեւ աստուածաբանութեան, բնապահպանութեան աստուածաբանութեան եւ իգական սեռի ջատագով աստուածաբանութեան եւ այլ շեշտաւորումներով բնորոշուող աստուածաբանական մտածողութիւններով կողքին, յատուկ տեղ կը գրաւէ արդի աստուածաբանութեան մէջ: Ան կը յառաջացնէ պայքար՝ ընդդէմ բռնութեան, տնտեսական անհաւասարութեան, ցեղապաշտութեան, եւ սեռային խտրականութեան, եւ կը նպատակադրէ պայքարիլ ի խնդիր լուսանցքայնացած դասակարգի ազատագրման:

Աստուածաշունչին համաձայն, Աստուած ազատարար Աստուած է: Հին եւ Նոր Կտակարանները լեցուն են մարդկային պատմութեան մէջ Աստուծոյ ազատարար միջամտութեան դրոշմներով: Քրիստոս իր առաքելութեան սկսաւ՝ մարդկութիւնը ազատագրելու համար մեղքէն եւ չարէն: Քրիստոս հրէական կրօնի ժողովարանին մէջ իր երկրաւոր առաքելութեան հիմնական նպատակը յայտարարեց՝ կարգաւորելու Եսայիի մարգարէութեան հետեւեալ տողերը. «Տիրոջ Հոգին վրաս է. որովհետեւ զիս օծեց եւ զրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները մխիթարելու, գերիներուն ազատութիւն բերելու, կոյրերուն աչքերը բանալու, հարստահարուածները ազատելու եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը, երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը» (ՂԿ 4.18-19): Արդարեւ, յիշեալ հատուածը յստակ ու ամբողջական բնորոշում մըն է Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան եւ անոր առաքելութեան էութեան ու նպատակին մասին:

Միջ-եկեղեցական համագումարներով ընթացքին, ընդհանրապէս Լատին Ամերիկայի եկեղեցիներու ներկայացուցիչները կը կեդրոնանան մարդ արարածը հարստահարութենէ եւ անարդարութենէ ազատագրելու հարցին վրայ՝ մեկնելով իրենց կեանքի իրողական վիճակէն: Ափրիկեցիները կը դատապար-

տեն ցեղային խտրականութիւնն ու գաղութատիրութիւնը, Ուղղափառները կը շեշտեն իրենց հակա-աշխարհական կեցուածքները եւ կաթոլիկները՝ եկեղեցւոյ տեսանելի միութեան կարեւորութիւնը: Արեւելքի եւ Արեւմուտքի, Հիւսիսի եւ Հարաւի եկեղեցիներու ներկայացուցիչներուն միջեւ յաճախ կը ստեղծուի լարուած մթնոլորտ՝ հակադիր շեշտաւորումներու հետեւանքով, սակայն ոչ բեւեռացած: Ա՛յս է իւրայատուկ նկարագիրը միջ-եկեղեցական հանդիպումներուն:

Միջ-եկեղեցական հանդիպումներու ընթացքին միշտ շեշտած եմ, թէ քրիստոնէական աստուածաբանութիւնը համապարփակ աստուածաբանութիւն մըն է: Ան տարբեր մօտեցումով, սակայն համապարփակ հայեցակէտով կը քննարկէ ստեղծագործութիւնը, մարդ արարածը, մարդկութիւնը եւ Աստուածաշունչը: Աստուածաբանական հարցերու կամ նիւթերու տարանջատուած քննարկումը խոտոր կը համեմատի քրիստոնէական աստուածաբանութեան հետ: Համապարփակ հասկացողութեամբ հարկ է մօտենալ աստուածաբանութեան:

Ներկայ համաճարակը անորոշութեան եւ անապահովութեան պատանդ դարձուցած է մեզ: Աւելի քան երբեք, մարդկութիւնը ստիպողական ու անմիջական կարիքը ունի ազատագրող ներկայութեանը բոլոր ժամանակներու Մեծագոյն Ազատարարին: Քրիստոս միշտ մեզի հետ է ազատագրելու համար մեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէ. մեր եսէն ու ազահովութենէն եւ մեր այլամերժութենէն, որոնք մեզ կը հեռացնեն Աստուծմէ: Քրիստոս միշտ մեզի հետ է նեցուկ կանգնելու եւ ընկերակցելու մեզի՝ պայքարելու փտած գաղափարախօսութեանց, անմարդկայնացնող եւ նուաստացնող կառոյցներուն եւ հարստահարող կառավարման համակարգերուն դէմ:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 4)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԲԵՏԱՐԱՆԻ (2.13-25)

«Հրեաներուն Զատիկը մօտ էր, եւ Յիսուս Երուսաղէմ գնաց» (ՅՀ 2.13):

1) Ասիկա առաջին Զատիկն¹ էր (Ապրիլ 27), որ Յիսուս տօնեց իր առաքելութեան սկսելէ ետք: Երկրորդն է՝ (ՅՀ 5.1: Ապրիլ 28): Երրորդն է՝ (ՅՀ 6.4, 7.1-2: Ապրիլ 29): Իսկ չորրորդն է՝ (ՅՀ 11.55, 13.1-2: Մտ 26.2,17: Մր 14.1,12: ՂԿ 22.1,7,16): Զորրորդ այս Զատիկին էր երբ Յիսուս իր խաչելութեամբ փոխարինեց զատկական գառնուկը, ինք գառնալով մեր «Զատիկին Գառնուկը» (Ա.Կր 5.7: Ա.Պտ 1.19: Յյտ 5.6): Ուշագրաւ է որ Մատթէոս, Մարկոս եւ Ղուկաս չեն անդրադառնար առաջին երեք Զատիկներուն, այլ միայն չորրորդին, որուն ընթացքին աշակերտները Տիրոջ հետ իրենց վերջին ընթրիքը կատարեցին: Տիրոջ առաքելութեան սկզբնաւորութենէն մինչեւ առաջին Զատիկը՝ ունինք վեց ամիսներու շրջան մը, անկէ ետք ունինք երեք ամբողջ տարիներ, որով հասած կ'ըլլանք չորրորդ Զատիկին: Այս առումով, Յիսուսի առաքելութեան տարիները երկրի վրայ երեքուկէս տարիներ կը հաշուեն:

2) «Զատիկ»ը Հրէական ամենէն կարեւոր տօնն էր, որ կը կատարուէր գարնան սկիզբը, հրէական Նիսան ամսուն 14-ին, մօտաւորապէս Ապրիլ 1-ին: «Զատիկ» բառին Եբրայերէն անունն է՝ «Պասեք», որ կը նշանակէ՝ անցնիլ: Առաջին հերթին կը նշանակէ Աստուծոյ հրեշտակին «անցքը» կամ «անցնիլը» Եգիպտոսէն՝ Եգիպտացիներու անդրանիկները հարուածելու, իսկ Եբրայեցիներու տուններուն վրայէն «անցնելու» համար (Ել 12.11-13): Անգլերէն բառն է Passover, որ ճիշդ «վրայէն անցնիլ» կը նշանակէ: Նոյն բառը կը նշէր նաեւ Եբրայեցի ժողովուրդին Կարմիր ծովէն «անցքը» դէպի ազատագրութիւն եւ խոստացուած երկիր (Զարեհ Արք. Ագնաւորեան):

3) Յիսուս փոքր տարիքէն Երուսաղէմ կ'երթար Զատիկը տօնելու համար (ՂԿ 2.42): Ան ի գործ դրաւ Մովսէսի ամբողջ Օրէնքը, որպէսզի մեզ ազատէ անոր անէծքէն (Գղ 3.13):

¹ Զատիկի մասին յաւելեալ լուսաբանութեան համար՝ տե՛ս Յի 1.29-ի բացատրութիւնը, թիւ 2:

«Տաճարին մէջ տեսաւ արջառ, ոչխար եւ աղաւնի ծախողները, ինչպէս նաեւ լումայափոխները, որոնք նստած էին սեղաններու ետին: Չուանէ խարազան մը շինեց եւ սկսաւ տաճարէն դուրս հանել բոլորը, իրենց ոչխարներով եւ արջառներով. լումայափոխներուն պղնձադրամները ցիրուցան ըրաւ եւ անոնց սեղանները շրջեց: Իսկ աղաւնեվաճառներուն ըսաւ. «Վերցուցէ՛ք ատոնք հոսկէ եւ Հօրս տունը վաճառատան մի՛ վերածէ՛ք» (Յհ 2.14-16):

1) «Տաճարին մէջ»: Անցեալի հասկացողութեամբ «տաճար» բացատրութիւնը չէր վերաբերեր պաշտամունքի վայր եղող կառոյցին միայն, այլ նաեւ կը ներառէր տաճարին արտաքին բակերն ու գաւիթները, որոնցմէ մին յատկացուած էր հեթանոսներուն: Տօներուն առիթով, սակայն, Հրեայ վաճառորդները միայն հեթանոսներուն յատկացուած բակին մէջ չէր որ կը հաւաքուէին՝ արջառ, ոչխար ու աղաւնի ծախելու ուխտաւորներուն, այլ՝ տաճարին ամբողջ շրջափակին մէջ, եւ ասիկա էր որ բարկացուց Յիսուսը: Լումայափոխներ ալ կու գային եւ իրենց սեղանները կը դնէին տաճարին բակերուն մէջ, որովհետեւ օտար երկիրներէ ուխտի եկող Հրեաները ընդհանրապէս կարիքը կ'ունենային իրենց դրամները փոխելու, որպէսզի կարենային տաճարին տուրքը վճարել եւ իրենց ընծաները գնել:

2) Կը կարդանք արջառ ու ոչխար ծախողներու, աղաւնեվաճառներու, եւ լումայափոխներու մասին: Դիտելի է իւրաքանչիւրին հանդէպ Յիսուսի վերաբերմունքին տարբերութիւնը: Ճիշդ է որ Յիսուս տաճարի շրջափակէն վտարեց բոլոր առուծախ ընողները, եւ սակայն, ուշադիր քննութիւն մը՝ ցոյց կու տայ որ ան յատուկ զգուանք ցուցաբերեց լումայափոխներուն հանդէպ, եւ որոշ մեղմութիւն՝ աղաւնեվաճառներուն հանդէպ: Օրինակ, կը կարդանք թէ ան ոչխար ու արջառ ծախողները վռնտեց տաճարէն, մինչդեռ լումայափոխներուն համար կը հաստատուի թէ անոնց «պղնձադրամները ցիրուցան ըրաւ եւ անոնց սեղանները շրջեց», ինչ որ որոշակիօրէն ցոյց կու տայ իր անհանդուրժողութիւնը մարդուն դրամասիրութեան հանդէպ: Տէրը կրնայ հանդուրժել մեղաւոր մարդոց ներկայութիւնը իր տաճարէն ներս, բայց դրամասէր մարդոց ներկայութիւնը իրեն համար անհանդուրժելի է: Գալով աղաւնեվաճառներուն, ճիշդ է որ Յիսուս անոնց «ախողները շրջեց» (Մր 11.15: Մտ 21.12), եւ սակայն անոնց հանդէպ իր վերաբերմունքին մէջ աւելի մեղմ էր: Ինք չէր որ դուրս դրաւ աղաւնիները, այլ զանոնք վաճառողներուն պատուիրեց ընել ատիկա. «Վերցուցէ՛ք ատոնք հոսկէ եւ Հօրս տունը վաճառատան մի՛ վերածէ՛ք»:

3) Ինչո՞ւ համար Յիսուս չուանէ խարազան շինեց, թէպէտ գիտենք որ անով ոեւէ վաճառորդի չզարկաւ: Չուանէ խարազանը մէկ կողմէ կը պատկերացնէ իր բարկութիւնը Աստուծոյ տունը սրբապղծողներուն հանդէպ, իսկ միւս կողմէ ցոյց կու տայ մարդիկը դատելու ու պատժելու իր իշխանութիւնը:

4) Յիսուս միայն ոչխարներն ու արջառները դուրս չդրաւ տաճարէն, այլ նաեւ՝ զանոնք ծախողները: Միայն դրամները դուրս չդրաւ տաճարէն, այլեւ՝ դրամասէրները. եւ սա ցոյց կու տայ, թէ երբ Տէրը մերժէ մեղքը՝ կրնայ մեր-

ժել նաեւ մեղաւորը, եւ ասիկա մեզ պէտք է զգաստութեան եւ զգօնութեան հրաւիրէ: Երբ Տէրը որոշեց մերժել Կայէնին բերած ընծան՝ մերժեց նաեւ Կայէնը, եւ երբ որոշեց ընդունիլ Աբէլին բերած ընծան՝ ընդունեց նաեւ Աբէլը (Ծն 4.4-5):

5) Քահանաներուն պարտականութիւնն էր հսկել տաճարին մաքրութեան, բայց Յիսուս իրենց չպատուիրեց որ դուրս չպրտեն վաճառորդները, այլ ինք անձնապէս ըրաւ ասիկա, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ իր տաճարը մաքրելը՝ իր գործն է:

6) Տաճարին մաքրագործումը ցոյց կու տայ Յիսուսի քահանայապետական պաշտօնը, եւ նախօրինակն է այն մեծ մաքրագործումին որ ան պիտի ընէ իր յայտնութեան օրը (Մղ 3.1-3):

7) «Վերցուցէ՛ք ատոնք հոսկէ եւ Հօրս տունը վաճառատան մի՛ վերածէ՛ք»: Այս բառերը մէկ կողմէ ցոյց կու տան թէ պէտք է վերցնել, այլ խօսքով՝ արմատախիլ ընել եկեղեցւոյ կեանքէն ոեւէ բան որ կը պղծէ զանիկա, իսկ միւս կողմէ՝ կը պարզեն, թէ Յիսուս ուժգնօրէն կը մերժէ որ կրօնքն ու հոգեւոր ճշմարտութիւնները դրամ շահելու աղբիւրի վերածենք:

8) Չ՛ըսեր «ձեր Հօրը տունը», այլ՝ «Հօրս տունը»: Որովհետեւ Յիսուս գիտէր որ ճշմարիտ գաւազը իր Հօրը հետ եւ իր Հօրը տան հանդէպ այդպէս չի վարուիր: Տարբեր առիթով ալ Յիսուս մերժեց զԱստուած կոչել Հրեաներուն հայրը (ՅՀ 8.42):

«Այն ատեն իր աշակերտները յիշեցին Սուրբ գիրքին մէջ գրուածը. "Տանդ հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս զիս պիտի այրէ"» (Յհ 2.17):

1) Երբ աշակերտները տեսան Յիսուսի արդար ընդվզումը տաճարի սրբապղծութեան պատճառով, յիշեցին Սաղմոսին բառերը. «Տանդ հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս զիս պիտի այրէ» (Սղ 69.9): Անոնք Յիսուսի ըրածը հասկցան՝ Սուրբ գիրքի լոյսին ներքեւ: Մենք եւս, ինչ որ կը պատահի մեր կեանքին մէջ, ինչ փորձութիւններու որ կը հանդիպինք Աստուծոյ թոյլտուութեամբ՝ այդ բոլորը կրնանք ու պէտք է հասկնալ Աստուածաշունչին լոյսին տակ միայն: Օրինակ, եթէ մէկը կը հաւատայ Քրիստոսի ու կը չարչարուի իր հաւատքին համար, փոխանակ գայթակղելու՝ պէտք է իսկոյն յիշէ Աստուծոյ խօսքը. «Աստուած ոչ միայն Քրիստոսի հաւատալու շնորհքը տուաւ ձեզի, այլ նաեւ՝ անոր համար չարչարուելու շնորհքը» (Փլպ 1.29): Բայց որպէսզի ամէն դժուարութեան կամ դէպքի մը դիմաց յիշենք Աստուծոյ խօսքը ու գօտեպնդուինք անով՝ պէտք է գիտնանք Աստուծոյ խօսքը, ինչպէս առաքեալները գիտէին:

2) Յիսուս տաճարը կը կոչէ իր Հօրը տունը, ու կ'ըսէ. «Տանդ հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնս զիս պիտի այրէ»: Յիսուս նախանձախնդիր հոգի ունէր: Նախանձախնդիր մարդը չի հանդուրժեր սխալին ու սուտին

ներկայութիւնը: Նախանձախնդիր մարդը կ' ուզէ ամէն ինչ մաքուր ու կատարեալ տեսնել: Յիսուս կը սիրէր տաճարն ու տաճարական կեանքը, եւ որովհետեւ կը սիրէր՝ նախանձախնդրութեան կրակը իր մէջ բորբոքեցաւ, երբ տեսաւ տաճարին կեանքը պղծուած դրամասիրութեան, ազահուութեան, կեղծաւորութեան ու անտարբերութեան մեղքերով: Այսօր եւս, Տէրը կը տեսնէ իր եկեղեցիին իրավիճակը. իրավիճակ մը՝ որ կ' այրէ գինք նախանձախնդրութեան կրակով, եւ նոյն այդ կրակով է որ ժամանակի աւարտին պիտի մաքրէ իր եկեղեցին, հեռացնելով անկէ փայտը, խոտը ու եղէգը, եւ ձգելով ոսկին, արծաթը ու թանկագին քարը (Ա.Կր 3.12-15):

«Սակայն Հրեայ դեկավարները հարցուցին Յիսուսի. "Ի՞նչ նշանով կրնաս ցոյց տալ մեզի, թէ իրաւունք ունիս այս բաները ընելու"» (Յե 2.18):

1) Հրեայ կրօնական դեկավարները պահանջեցին Յիսուսէն նշան մը՝ որով կարենար հաստատել այդպիսի բան մը ընելու իր իրաւունքը: Այդ նշանը Յիսուս տուաւ իրենց, բայց իրենք չտեսան այդ նշանը: Այդ նշանը Աստուծոյ տաճարին հանդէպ իր ցուցաբերած նախանձախնդրութիւնն իսկ էր: Աշակերտները Սաղմոսին խօսքը յիշելով՝ այդ նշանը տեսած եղան, մինչդեռ Հրեայ դեկավարները Սաղմոսին խօսքը չյիշեցին, եւ անոր համար ալ նշան պահանջեցին: (Յովհան Ոսկեբերան):

2) Հրեայ դեկավարները չկրցան յանդիմանել Յիսուսը... , բայց անկէ նշան մը պահանջելու միջոցին դիմեցին, մէկ կողմէ՝ որպէսզի վաճառորդներուն տաճարի շրջափակէն դուրս շարտուած ձգձգէին, [քանի անոնցմէ կ' օգտուէին նիւթապէս], իսկ միւս կողմէ՝ [ժողովուրդին ձեւականօրէն] պարզելու թէ իրենք առանց հետազօտութեան չէին կրնար հետեւիլ Յիսուսին կամ ընդունիլ գինք իբրեւ Աստուծոյ Որդի (Կիւրեղ Աղեքսանդրացի):

3) Խորքին մէջ, անոնք նշան պահանջեցին Յիսուսէն, ո՛չ թէ որովհետեւ կ' ուզէին հաւատալ անոր, այլ՝ որովհետեւ կ' ուզէին գինք ետ կեցնել տաճարին շրջափակը մաքրելու գործէն, որ մեծ վնաս հասցուց իրենց. վնաս՝ մէկ կողմէ որովհետեւ իրենց շահու աղբիւրը կրնար փակուիլ, իսկ միւս կողմէ՝ որովհետեւ բոլորին առջեւ խայտառակ եղան, քանի կը տեսնէին տաճարին պղծուիլը եւ լուռ կը մնային: Զիրենք հետաքրքրողը տաճարին սրբապղծութիւնը չէր, այլ՝ Յիսուսի ըրածը, եւ ատիկա ինքնին ապացոյց է, որ իրենք Տիրոջ ըրածէն խստապէս յանդիմանուած զգացին: Եթէ սիրէին տաճարն ու անոր մաքրութիւնը՝ անոնք պէտք էր ուրախանային Յիսուսի ըրածով, եւ ոչ միայն ուրախանային, այլեւ՝ զօրավիգ կենային անոր:

«Յիսուս պատասխանեց. "Քանզի եղէ՛ք այս տաճարը, եւ երեք օրէն ես պիտի վերաշինեմ գայն": Հրեաները ըսին. "Դուն երեք օրէ՞ն պիտի վերաշինես. քառասունվեց տարի առաւ ասոր շինութիւնը": Բայց տաճարը որուն մասին Յիսուս կը խօսէր, իր մարմինն էր: Եւ երբ ինք մեռելներէն յարութիւն ա-

ուալ, աշակերտները յիշեցին թէ ա'յդ էր ըսածը եւ հաւատացին Սուրբ գիրքին մէջ գրուածին եւ Յիսուսի խօսքին» (Յհ 2.19-22):

1) *Կրօնական ղեկավարները նշան պահանջեցին Յիսուսէն, եւ Յիսուս տուաւ իրենց այդ նշանը. «Քանզեցէ՛ք այս տաճարը, եւ երեք օրէն ես պիտի վերաշինեմ զայն»:* Տաճարը որուն մասին Տէրը խօսեցաւ՝ իր մարմինն է, ինչպէս բնագիրն իսկ կը հաստատէ: Տէրը իր մահն ու յարուցիլունը նշան իբրեւ ներկայացուց, բայց անոնք չանդրադարձան անոր, որովհետեւ խորհեցան թէ Յիսուս Երուսաղէմի նիւթական տաճարին մասին էր որ կը խօսէր: Տարբեր առիթով ալ երբ Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները նշան պահանջեցին Յիսուսէն, ան դարձեալ իր մահն ու յարուցիլունը ներկայացուց իբրեւ նշան, երբ երեք օր կէտ ձուկին մէջ մնացած ու անկէ դուրս եկած Յովնան մարգարէին օրինակը յիշեցուց անոնց (Մտ 12.40): Յիսուսի յարուցիլունը մեծագոյն ապացոյցն է, թէ քրիստոնէութիւնը կեանք պարզեւող ու երկինք առաջնորդող մէկ ու միակ ճշմարիտ ճամբան է:

2) *«Ես պիտի վերաշինեմ զայն»:* Այս բառերով Տէրը կը պարզէ իր բացարձակ իշխանութիւնը՝ յարուցանելու իր մարմինը: Ճիշդ է որ որոշ տեղեր կը հաստատուի թէ Աստուած յարուցանեց Յիսուսը մեռելներէն (Հռ 8.11: Ա.Կր 6.14: Բ.Կր 4.14), բայց այլ տեղեր կը վկայուի թէ Յիսուս իր ազատ կամքով իր կեանքը տուաւ եւ իր ազատ կամքով իր կեանքը ետ առաւ. *«Ես իմ կամքովս կեանքս կու տամ: Իրաւունք ունիմ զայն տալու, ինչպէս նաեւ իրաւունք ունիմ զայն կրկին առնելու»* (ՅՏ 10.18), եւ սա ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ Հօր եւ Որդիին կամքին ու գործին մէկութիւնն ու միութիւնը:

3) Յիսուս ինքզինք տաճարի չնմանցուց, այլ ինքզինք կոչեց տաճար: Ինքզինք տաճար կոչելով, Տէրը լուրջաբար կերպով ուղեց պարզել, թէ ինքն է այն իսկական տաճարը՝ որուն շուրջ եւ որուն մէջ մարդիկ պէտք է մէկտեղուին, եւ ինքն է այն տաճարը՝ որ ժամանակներու աւարտին մարդոց պաշտամունքին, փառաբանութեան ու երկրպագութեան կեդրոնը պիտի դառնայ:

4) Տաճարի Բուն Սրբարանի բաժինին մէջ կը գտնուէր Ուխտի Տապանակը, որ Աստուծոյ ներկայութիւնն ու բնակութիւնը կը խորհրդանշէր: Յիսուս ինքզինք տաճար կոչելով՝ ոչ միայն ցոյց տուաւ թէ ինք Աստուծոյ բնակուած է ու Աստուծոյ ներկայութիւնն է մարդոց կեանքին մէջ, այլեւ՝ պարզեց թէ ինք մարդոց կեանքին մէջ բնակող ու ներկայ եղող Աստուած է, իր Հօրը հետ միասին՝ մարդոց կենդանի տաճարն է, ինչպէս կը վկայէ Յովհաննէս. *«Ամենակալ Տէր Աստուածը եւ Գառնուկը իրե՛նք էին տաճարը»* (Յյտ 21.22):

5) Յիսուս ինքզինք տաճար կոչելով՝ փոխարինած եղաւ Հին Կտակարանի տաճարը: Իսկ Պօղոս ու Պետրոս առաքեալները Քրիստոսի հետեւորդները տաճար կոչելով (Ա.Կր 3.16-17, 6.19: Բ.Կր 6.16: Ա.Պտ 2.5)՝ ցոյց տուին թէ Քրիստոսի եկեղեցին փոխարինեց Հին Կտակարանի եկեղեցին:

6) «Քառասունվեց տարի առաւ ասոր շինութիւնը»: Այս խօսքը բառացիօրէն պէտք չէ հասկնալ, որովհետեւ տաճարին վերակառուցումը ո՛չ թէ 46, այլ՝ 84 տարի տեւեց: Այս բառերով անոնք ըսել կ'ուզէին՝ «այսքան տարի է կը շինուի»: Ք.Ա. 20 թուին Մեծն Հերովդէսի նախաձեռնութեամբ սկսաւ տաճարին վերակառուցումը եւ իր աւարտին հասաւ Ք.Ն. 64 թուին:

Տաճարին կեանքը երեք գլխաւոր մասերու կը բաժնուի: Առաջին անգամ Սողոմոն ի'նք կառուցեց տաճարը (Գ.Թգ 6.1-13: Ա.Մն 28.6,10), Ք.Ա. 966-ին: Կործանեցաւ 587-ին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին դահապետին՝ Նաբուզարդանի կողմէ: Վերստին կառուցուեցաւ Զօրաբաբէլին եւ Յեսուքահանային ճիգերով Ք.Ա. 520-516 թ.: Ք.Ա. 63-ին, Հռոմայեցի զօրավար՝ Պոմպէոս, գրաւեց Պաղեստինը: Այս հանգրուանին տաճարը ապրեցաւ լքուածութեան շրջան մը: Մեծն Հերովդէս, Ք.Ա. 37-4 թուական իշխեց ամբողջ Պաղեստինի վրայ: Սիրաշահելու համար Հրեաները, ուզեց նոր տաճար մը կառուցել անոնց, մանաւանդ որ հինը սկսած էր քայքայուիլ: Ք.Ա. 20 կամ 19 թուին փոքիւ բերաւ Զօրաբաբէլի օրով շինուած տաճարը եւ սկսաւ նորը կառուցել: Տաճարը առանց իր այլ եւ այլ յարակից մասերուն շինուեցաւ ինը տարիներու ընթացքին, եւ Հրեաներ Ք.Ա. շուրջ 10 թուականէն սկսեալ կարող էին տաճար երթալ եւ պաշտամունք մատուցել Աստուծոյ: Տաճարին շինութիւնը իր բոլոր յարակից մասերով իր աւարտին պիտի հասնէր Ք.Ն. 64 թուին միայն: Հրեայ մատենագիրներ կը վկայեն թէ Մեծն Հերովդէսի կողմէ շինուած տաճարը իր յարակից մասերով շատ աւելի՛ մեծ ու գեղեցիկ էր քան Զօրաբաբէլի շինած տաճարը, ինչպէս Զօրաբաբէլի շինած տաճարը աւելի՛ մեծ էր քան Սողոմոնի շինած տաճարը: Այս ամենէն մեծ տաճարը՝ ունեցաւ ամենէն կարճ կեանքը: Իր աւարտումէն քանի մը տարի ետք, Ք.Ն. 70 թուին, Հռոմէական բանակները գլխաւորութեամբ Տիտոսի, յարձակեցան Երուսաղէմի վրայ եւ կործանեցին տաճարն ու անոր յարակից բոլոր մասերը:

7) Ոչ միայն կրօնական ղեկավարները չհասկցան որ Յիսուս իր մարմինի տաճարին մասին էր որ կը խօսէր, այլ նոյնիսկ աշակերտները չհասկցան: Իր յարութենէն ե'տք միայն «աշակերտները յիշեցին թէ ա'յդ էր ըսածը եւ հաւատացին Սուրբ գիրքին մէջ գրուածին եւ Յիսուսի խօսքին»: Նոյնիսկ իր յարութենէն ետք, աշակերտները կրնային չհաւատալ ու չհասկնալ (Ղկ 24.25), եթէ Յիսուս ինք անոնց միտքերը չբանար, «որպէսզի հասկնան Սուրբ գիրքերը» (Ղկ 24.45): Ասիկա թող դաս ըլլայ մեզի: Մենք յաճախ կը մեղադրենք աշխարհը որ չի հասկնար Քրիստոսն ու անոր խօսքերը, եւ կը մոռնանք, որ մենք՝ Քրիստոսի հետեւորդներս ալ յաճախ կը դժուարանանք հասկնալու Քրիստոսը եւ հաւատալու իր խօսքերուն: Եթէ Տէրը չչնորհէ մեզի զինք հասկընալու, իր խօսքն ու կամքը հասկնալու կարողութիւնը՝ մենք երբեք ալ պիտի չկարենանք զինք հասկնալ:

«Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղեմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները» (Յհ 2.23):

1) Յովհաննէս աւետարանիչ թէեւ կը յիշէ թէ Յիսուս հրաշքներ գործեց Երուսաղէմի մէջ՝ երբ յիշեալ Զատիկին առիթով հոն էր, եւ թէեւ կը հաստատէ թէ «շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները», եւ սակայն, Յիսուսի գործած ոեւէ մէկ հրաշքին յիշատակութիւնը չ'ընեն: Ուստի երբ գրի կ'առնէր իր Աւետարանը, կ'անդրադառնար թէ շատ բան կայ որ չարձանագրեց. ահա թէ ինչու ըսաւ. «Յիսուս իր աշակերտներուն ներկայութեան ուրիշ բազմաթիւ հրաշքներ ալ կատարեց, որոնք այս գիրքին մէջ գրուած չեն: Իսկ այսքանը գրուեցաւ, որպէսզի հաւատաք թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստուծոյ Որդին, եւ իրեն հանդէպ ձեր ունեցած հաւատքին միջոցաւ յաւիտենական կեանք ունենաք» (ՅՆ 20.30–31):

2) «Շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները»: Գալով մեզի, արդեօք մե՞նք ալ հաւատալու համար իրեն պէտք է հրաշք տեսնենք իրմէ: Ի՞նչ աւելի մեծ հրաշք կայ քան իր սէրը մեզի հանդէպ: Մեր կեանքը փրկելու համար իր կեանքը զոհեց. սա բաւարար պատճառ մը չէ՞ որ հաւատանք իրեն:

«Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ֆանջնար եւ պէտք չուներ ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ մարդոց սիրտին մէջ» (Յհ 2.24–25):

1) Նախորդ համարին մէջ հաստատուեցաւ թէ «շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները», իսկ այստեղ կը հաստատուի, թէ «Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց»: Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն, թէ «շատեր հաւատացին իրեն» խօսքը կը վերաբերի անոնց՝ որոնք երբ տեսան Յիսուսի գործած հրաշքները եւ ակնատես եղան տաճարը մաքրելու անոր արարքին՝ հաւատացին թէ ան խոստացեալ Մեսիան է. ճիշդ այսպիսիներուն էր որ «Յիսուս ինքզինք չէր վստահեր», որովհետեւ գիտէր թէ անոնք սխալ գաղափար ունէին Մեսիային առաքելութեան վերաբերեալ: Անոնք երկրաւոր թագաւորութեան մը հաստատումը կ'ակնկալէին Մեսիայէն: Մեսիան սակայն երկնաւոր թագաւոր է, եւ աշխարհ բերած իր թագաւորութիւնը՝ երկնային թագաւորութիւն է, ուստի ան ի՞նչպէս կրնար իր անձը վստահիլ անոնց՝ որոնք հետապնդիչներն էին երկրաւոր թագաւորութեան մը: Մտաբերենք որ հինգ հազարին կերակրումէն ետք, շատեր հաւատացին ու հետեւեցան Քրիստոսի, եւ նոյնիսկ ուղեցին բռնութեամբ զինք թագաւոր ընել, եւ սակայն Տէրը հեռացաւ անոնցմէ (ՅՆ 6.15), որովհետեւ իրեն հաւատալու իրենց դիտումը՝ ճիշդ չէր. «Դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք» (ՅՆ 6.26):

2) «Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց»: Այս հաստատումը բան մը կ'ըսէ՞ մեզի: Յիսուս կը վստահի՞ մեզի, կրնա՞յ վստահիլ մեզի: Եթէ կապ-

ուած ենք երկրին ու երկրաւորին, ան ի՞նչպէս կրնայ վստահիլ մեզի երկինքի ջահակիրները դառնալու առաքելութիւնը: Եթէ կը սիրենք նիւթն ու նիւթականը, ան ի՞նչպէս կրնայ վստահիլ մեզի աննիւթական Հացին մատակարարումը: Եթէ կառչած ենք գնայուն այս աշխարհին, ան ի՞նչպէս կրնայ գալիք յաւիտենական աշխարհը յանձնել մեզի: Եւ տակաւին, Յիսուս կրնա՞յ իր ներկայութիւնը վստահիլ սրտիդ, այլ խօսքով՝ կրնա՞յ գալ եւ մէջդ բնակիլ: Եթէ սրտիդ մէջ մեղքը կը բնակի՝ Տէրը իր բնակութիւնը քեզի չի կրնար վստահիլ: Եթէ պղծութիւն կայ հոգիիդ մէջ՝ Սուրբը իր տեղը չի կրնար ունենալ հոգիիդ մէջ:

3) «Բոյորն ալ կը ճանչնար...», քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ մարդոց սիրտին մէջ»: Այս հաստատումը յստակ ցոյց կու տայ, թէ անոնք, որոնք հաւատացին Քրիստոսի՝ տարբեր-տարբեր հաշիւներէ մեկնած հաւատացին, եւ Յիսուս գիտէր ատիկա, որովհետեւ սրտագէտ Աստուած է ան: Հաւանաբար ոմանք հաւատացին Քրիստոսի՝ որպէսզի փրկուէին, իսկ ուրիշներ հաւատացին՝ որպէսզի իրենց դիրքն ու իշխանութիւնը ապահովէին Մեսիային հաստատելիք «երկրաւոր» թագաւորութեան մէջ: Եթէ Քրիստոսի հաւատացողները՝ ճշմարիտ ու անկեղծ հաւատացողներ ըլլային, անկարելի էր որ Յովհաննէս աւետարանիչ հաստատէր, թէ՛ «Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց», կամ ըսէր՝ ան «գիտէր թէ ի՞նչ կայ մարդոց սիրտին մէջ»: Այս հաստատումները ցոյց կու տան, թէ Յիսուս անմաքրութիւն տեսաւ իրեն «հաւատացող» մարդոց սիրտերուն մէջ: Ինչ կը վերաբերի մեզի, իրեն հաւատացողներու, իր անունը կրողներու, իր անունով խօսողներու ու գործողներու, Տէրը գիտէ՛ թէ ինչ կայ մեր սրտին մէջ: Գիտէ թէ մեր սէրը իրեն հանդէպ անկեղծ է թէ կեղծ: Գիտէ թէ մեր աղօթքները սրտաբուխ են թէ շրթնաբուխ:

4) Մենք ճանչնալու համար ուրիշը՝ կրնանք այլոց վկայութեան կարիքը ունենալ, բայց Յիսուս «պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան»: Ան կը ճանչնայ իր ոչխարները. կը ճանչնայ էպպէս, իրենց ամբողջ բնութեամբ: Ան կը ճանչնայ մեր սիրտը ու սրտի ցանկութիւնները: Կը ճանչնայ մեր հոգին ու հոգիի փափաքները: Կը ճանչնայ մեր միտքը ու մտքի մտածումները: Կը ճանչնայ մեր գործերը ու գործելակերպը: Կը ճանչնայ մեզ մեր բոլոր տկարութիւններով ու մոլորութիւններով, բայց չի դատապարտեր մեզ անոնց համար, այլ կ'օգնէ որ ձերբազատինք անոնցմէ:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 10)

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

Ծնած է 1867-ի Դեկտեմբերին, Ճիւղանշիր գաւառի Մարաղի Չարտախլու գիւղին մէջ: Աւագանի անունն է Գարեգին: Չաւակն է ղարաբաղցի ընտանիքի մը: Մօրը հօրեղբայրն էր Անտոն Վարդապետը, որ կարեւոր դեր կատարած է պատանի Գարեգինի կեանքին մէջ, սկսեալ 4-5 տարեկան հասակէն: Ան երբ կնոջ մահէն ետք Աբեղայ ձեռնադրուելու համար Գանձասարի Վանքը քաշուած է, փոքրիկին նուէր բերած է այբբենարան մը, որմէ ետք Գարեգին հայերէն առաջին բառերը հեգած էր ծնողքին բարեկամ խանութպանի մը մօտ:

Այբբենարանի ստացումէն քանի մը ամիս ետք՝ հայրը իմանալով որ Մարաղի մէջ դպրոց բացուած է, հոն փոխադրած է որդին, ուր հազիւ քանի մը ամիս տեւող ուսումէն ետք, աշնան Մարաղա ծնողներուն վերադարձած եւ աշկերտած է Ասլան Ապրոյի խանութը:

Գարեգինի գիւղական վերջին եւ ամենակարեւոր վարժապետը եղած է Տէր Զաքարիան, որուն քով ժամագիրք կարդալ սորված է եւ եկեղեցւոյ մէջ «փոխ» կարդալ սկսած է:

Մայրը առաջին փոխասացութեան՝ Ս. Սարգիսի պահքին (Առաջաւորաց պահքին) վառեակ մը նուիրած է վարժապետ-քահանային, որպէսզի Աստուած գաւկին շնորհք պարգեւէ: Տէր Զաքար աշակերտներէն փոքր գումար մը կը գանձէր իբրեւ ամսաթոշակ: Երբ Գարեգինի հայրը աղքատութեան պատճառաւ թոշակը չէ կրցած վճարել՝ ստիպուած ուզած է տղան դպրոցէն հանել եւ գործի ուղարկել, Տէր Զաքար իմանալով այս պարագան՝ Գարեգինը ճրիաբար դպրոց ընդունած է, եւ հայրը ասոր փոխարէն խոստացած է քանի մը օր մշակութիւն ընել Տէր Հօր այգիին մէջ:

Այդ թուականին Անտոն Վարդապետ վանահայրն էր Ամարասի, այն սրբավայրին՝ ուր նահատակուած էր Լուսաւորչի թողը՝ Գրիգորիս Հայրապետ: Ան մտածած է իր հետ Ամարաս տանիլ Գարեգինը՝ ուսումը կատարելագործելու համար, ուր պիտի սորվէր հայերէն, ռուսերէն եւ թուրքերէն:

Թիւն: Իսկ հետեւեալ տարին՝ 1878-ին, մօրեղբայրը՝ Անտոն Վարդապետ, յարմար նկատած է գայն դրկել Շուշիի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրոցը: Գարեգին տարի մը միայն ուսանած է Շուշիի մէջ, հօրը նիւթական անձուկ վիճակին պատճառով չէ կրցած շարունակել: Անտոն Վարդապետի կարգադրութեամբ Գարեգին այս անգամ փոխադրուած է Զրաբերդի Կուսապատ գիւղը, ուր Փինաչեան Յովսէփ Վարդապետ, էջմիածնէն հեռանալով՝ գիւղական դպրոց մը բացած էր: Հոս ալ աշակերտութիւնը դժբախտաբար երկար չէ տեւած, որովհետեւ Վարդապետը դպրոցը փակած եւ քաշուած է Ինն Մասանց կոչուած ուխտատեղին, մեղիքներու հին դրեակի մը մէջ, ուր դպրոցը շարունակելու փորձն ալ ձախողած է: Եւ ահա օր մըն ալ, յանկարծ դարպասէն ներս մտնելով Գարեգինի հայրը՝ առջեւը էջ մը ձգած, առած է Գարեգինը, համբուրած ուսուցչին՝ Փինաչեան Վարդապետին ձեռքը եւ գիրքերը իշուն վրայ բեռցուցած վերադարձած են իրենց գիւղը:

Գարեգինի ուսումնառութեան ընթացքը դարձեալ տարիով մը ընդհատուած է, ան ստիպուած տունը մնալով, Մինախաթուն եւ Նաչխուն երկու քոյրերուն հետ օգնած է հօրը: Գարեգին, որպէս ընտանիքի կրտսեր զաւակը արժանացած է քոյրերուն հոգատարութեան ու գուրգուրանքին: Ան օգտակար դառնալու համար ծնողաց, ձմեռը իրենց գիւղացի Պապկենց Կարապետի խանութը ամիսը 3 ուրբի թոշակով ծառայութեան մտած է:

1980–81 տարեշրջանին Գարեգին վերադարձած է Շուշի եւ դարձած՝ Թեմական Դպրոցի ուսանող: Այդ տարին ուսանող Գարեգինի կեանքը դժուարութիւններով անցած է: Մայիսի սկիզբը Անտոն Վարդապետ նիւթական անձուկ պայմաններու հարկադրանքին տակ գիւղ վերադարձած է:

Անտոն Վարդապետ մտածած է այս անգամ Գարեգինը էջմիածին դրկել:

Յունիսէն մինչեւ Յուլիսի կէսերը՝ հայրը ստիպուած է պատրաստութիւն տեսնելու գինք Գէորգեան ձեմարան դրկելու համար: Պէտք էր ճեմակեղէններ եւ ճանապարհածախս պատրաստել: Մայրը տեսնելով ամուսնոյն այդ մասին մտահոգութիւնը՝ իր ճակտի գարդին չորս ոսկիներէն երկուքը կտրած ու տուած է անոր, որ պէտք եղածները հոգայ: Գարեգին այս առթիւ գրած է իր յուշատետրին մէջ. «Խեղճ մայր, որպիսի՛ գոհողութիւն էր մի կնոջ համար զրկուել իւր ճակտի փոքրիկ գարդերից անգամ, որդու ուսմանն օգնելու նպատակաւ»:

Գարեգին ութը օր ֆուրգոնով ճամբորդելէ ետք, 2 Օգոստոս 1882-ին հասած է Երեւան:

Օր մը ճեմարանի տեսուչ Նահապետեան (յետագային Եպիսկոպոս) օտարական մը տեսնելով աշակերտներու շարքին մէջ, հարցուցած է.

- Ինչի՞ ես եկել:
- Եկել եմ ուսանելու, – պատասխանած է Գարեգին:
- Ապա թէ որ չընդունենք, – յարած է տեսուչը:
- Ինչի՞ պիտի չընդունէք, – ըսած է ուսումնատենչ պարմանը, – չէ՞ որ փափաքում եմ ուսանել:

Այս պատասխանը դիւր եկած է տեսուչին, եւ յաջորդ Սեպտեմբերին Գարեգին մտած է ճեմարանի Ա. դասարանը եւ յաջող դուրս գալով՝ անցած է Երկրորդ: Հայերէնի եւ թուաբանութեան մէջ անպատրաստ ըլլալով՝ մասնաւոր դասեր առած է Եփրեմ Վարդապետէն եւ Գ. դասարանէն սկսեալ մինչեւ ճեմարան ավարտելը՝ միշտ իր կարգին առաջիններէն մէկը հանդիսացած է: Երբ Ե. դասարան էր, հայրը մահացած է: Մայրը եւ երկու կրտսեր քոյրերը ապրեցնելու տագնապով, ուզած է ուսումը թողուլ եւ գործի ասպարէզ նետուիլ. բայց ճեմարանի տեսուչ՝ Խոսրովեան, համոզած է զինք եւ չէ թողած, որ երթայ: 1880-ին ավարտած է Զ. դասարանը եւ մտած՝ Լսարան: Նոյն ամառը Մանուկ Աբեղեանի գլխաւորութեամբ եւ ընկերակցութեամբ Կարապետ Տէր Մկրտչեանի, Սէթ Յարութիւնեանի եւ ուրիշներու, ինք եւս երբ հազիւ 18 տարեկան էր, Արագածի վրայով Անիի հնութիւնները տեսնելու գացած է: Այս 14 օրուան պտոյտն ու այցելութիւնը շատ խոր տպաւորութիւն թողած են ապագայ հնագէտ-բանասէրին վրայ եւ տողորած զինք հայրենասիրական զգացումներով:

Գարեգին դեռ Երրորդ Լսարանն էր, երբ տեսուչ Նահապետեանի, Կարապետ Տէր Մկրտչեանի, «Գէորդ Չօրէքճեանի հետ (յետագային Կաթողիկոս Գէորդ Զ.), 1889 Յունիսին, Մեծն Ներսէսի տօնին օրը, Սարկաւազ ձեռնադրուած է Մակար Կաթողիկոսի հրամանով եւ դարձած՝ միաբան էջմիածնի: Նոյն տարին, դեռ ուսումը չաւարտած, սկսած է իր գրական աշխատանքները՝ ճեմարանի մոկացի ծառաներէն եւ Ապարանի գիւղերէն բանահիւսութիւններ հաւաքելով, եւ իր առաջին յօդուածը տպուած է էջմիածնի «Արարատ»ին մէջ, «Լուսաւորիչ եւ Հայաստանեայց Եկեղեցին» վերնագրով:

1890-ին Մակար Կաթողիկոսի վախճանումը պատճառ դարձած է, որ Գարեգին Սարկաւազի ուսման համար Եւրոպա ղրկուելը ուշանայ: Խրիմեանի ընտրութեան առթիւ, 1892-ին, Օրմանեանի գլխաւորութեամբ, տաճկահայոց կողմէ պատգամաւորներու մեծ բազմութիւն մը եկած է: Գարեգին Սարկաւազ նախապէս ներկայացած է Օրմանեան Սրբազանի եւ պատմած իր արտասահման երթալու դժուարութիւնները, թէեւ նիւթական միջոցները պատրաստ էին, եւ Կովկասեան Հայոց Բարեգործականը իբրեւ սան զինք ընտրած է աստուածաբանութիւն ուսանելու համար: Օրմանեան Սրբազան միջամբտած է Տեղակալ Երեմիա Արքեպիսկոպոսի մօտ, եւ նոյն տարւոյն Օգոստոս 3-ին Գարեգին Սարկաւազ Պերլին մեկնած է:

Ուսանողութեան շրջանի չորրորդ վեցամսեան վերջնալէ ետք, 1894-ի ամառը, Գարեգին Սարկաւազ փափաքած է արձակուրդը Փարիզ անցընել, Ֆրանսերէնը զարգացնելու մտադրութեամբ, բայց Կարապետ Սարկաւազի թելադրութեան վրայ այցելած է Վէսթֆալիայի Բիլէֆիլտ քաղաքին մօտ Քրիստոնէական գիտութեան եւ բանասիրութեան մեծ հաստատութիւնը, որուն տեսուչն էր նշանաւոր Պասդոր Ֆոն Բողիլշվենգ: Երկուքուկէս ամիս ուսումնասիրած է այդ սքանչելի հաստատութիւնը եւ մեծապէս օգտուած, թէ՛ հոն տեսածներէն, թէ՛ կարդացած գիրքերէն: Հաստատութեան վարչու-

Թիւնը այնքան ազնիւ գտնուած է իրեն նկատմամբ, որ իր Սարկաւազ եւ օտար եկեղեցւոյ պատկանելուն պատճառով՝ շուրջ 300 մարքի վճարելի ամսականները չէ ընդունած, գնահատելով հոն եղած շրջանին կատարած աշխատանքները: Այս մասին յետոյ յօդուածաշարք մը գրած է «Արարատ»-ի մէջ «Եկեղեցին եւ Աղքատների Խնամատարութեան Գործը» վերնագրով:

Գարեգին Սարկաւազ երկու տարի Լայպցիգի եւ երկուքուկէս տարի ալ Հայէի եւ Պերլինի համալսարաններուն մէջ ուսանած է աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան ճիւղերը, ուսուցիչ ունենալով Հայնրիցէ, Գոթթէ, Հաուք, Վոնդ, Լոֆօ, Հառնաք, Գաֆթան եւ ուրիշ նշանաւոր ուսուցիչներ: 1897-ի սկիզբը, յետ քննութեան, ստացած է Լայպցիգի համալսարանէն փիլիսոփայութեան Դոկտորական (Ph. D.), իբրեւ աւարտաճառ ներկայացրնելով «Մի կամքի Վարդապետութեան Ծագումը՝ Հայ եւ Յոյն Աղբիւրների Քննադատութեամբ»:

Գարեգին Սարկաւազ 1897-ի աշնան, Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի կարգադրութեամբ Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած է, ձեռամբ Սուքիաս Արք. Պարգեանցի, Ս. Գայիանէ Վանքին մէջ, եւ վերակոչուած՝ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱՅ (աշխարհական անունը պահելով):

Գարեգին Արեղայ ճեմարանի Աստուածաբանական նիւթերու դասախօս կարգուած է, աւանդելով նաեւ Հայոց Մատենագրութիւն: Իր սովորական դասախօսութիւններէն զատ, զորս կանխաւ գրաւոր կը պատրաստէր, ուսանողներուն մէջ հայրենի հնութիւններու նկատմամբ սէր արթնցնելու եւ անոնց պատմութեան, արուեստի եւ մշակոյթի ունեցած մեծ արժէքը գործնականապէս բացատրելու համար՝ հնագիտական ճամբորդութիւններ կազմակերպած է: Այս կերպով ուսանողները առիթ ունեցած են անձամբ տեսնելու եւ անջնջելի տպաւորութիւններ ստանալու հայրենի աւերակներէն՝ գործնական դասեր առնելով մեր պատմութենէն:

Ճեմարանի մէջ աշխատանքը շատ էր, եւ իբրեւ առաջին տարիներու դասախօս՝ պէտք էր ուսումնասիրէր իր ուսուցանելիքը, գրէր դասախօսութիւնները: Առանց անոնց ալ արդէն յոգնած վերադարձած է արտասահմանէն, անոր հետեւանքը եղած է ջիղերու բաւական ծանր հիւանդութիւն մը, բժիշկի ու բարեկամներու խորհուրդով ստիպուած եղած է ընդհատել դասախօսութիւնները: Խրիմեան Հայրիկ այս հանգամանքներէն օգտուելով զինք նշանակած է Թիֆլիսի Առաջնորդական Փոխանորդ:

Թիֆլիսի Առաջնորդական Տեղապահութեան կեանքէն եւ գործունէութենէն յիշատակելի դէպքեր շատ կան, որոնք գրգիռ հանդիսացած են ժողովրդային մեծ համակրանքի մը ստեղծման իր անձին շուրջ:

Մտաւորականներու, վաճառականական դասուն եւ ժողովուրդին կողմէ ստորագրութիւններով հանրագրութիւն հաւաքուած է եւ դիմում կատարուած Մկրտիչ Ա. Կաթողիկոսի, որպէսզի զինք առաջնորդ նշանակէ՝ Եպիսկոպոս ձեռնադրելով: Բայց Խրիմեան Հայրիկ ուրիշ ծրագիրներ ունենալով, վաղաժամ նկատած է երիտասարդ վարդապետի մը եպիսկոպոսացումն ու

առաջնորդութիւնը՝ Թիֆլիսի նման առաջնակարգ թեմի մը:

Էջմիածնի կալուածներու գրաւման տարիներուն, ան վերատեսուչ նշանակուած է Երեւանի Թեմական Դպրանոցին, զոր վարած է 1901-1904 թուական, առանց աղմուկի եւ խռովութիւններու, որոնք այդ դպրոցին համար սովորական էին: Միեւնոյն ատեն դասաւանդած է Հայ Եկեղեցւոյ պատմութիւն նիւթը:

Գարեգին Վարդապետ 1905-ին նշանակուած է վերատեսուչ Գէորգեան Ճեմարանի, ուր միաժամանակ դասաւանդած է աստուածաբանական եւ հնագիտական նիւթերը: 1906-1907 ստանձնած է «Արարատ» պաշտօնաթերթին խմբագրապետութիւնը, որուն բերած է նաեւ մնայուն իր աշխատակցութիւնը: Խրիմեան Հայրիկի վախճանումէն ետք, 1907-ին, նշանակուած է Վանահայր Ս. Հռիփսիմէի Վանքին, իսկ Մատթէոս Իգմիրլեանի Կաթողիկոսութեան շրջանին՝ խորհրդական. այն ատեն, երեք շաբթուան ընթացքին յաջողած է Մայր Եկեղեցւոյ ծոցը վերադարձնել Կեչըռու գիւղաքաղաքի հայ համայնքը, որ հողային խնդրի պատճառով ռուսադաւանութեան դիմած էր:

Մասնակցած է Գառնիի Տրդատայ Թախտի պեղումներուն, իբրեւ անդամ Փրոֆ. Մառի կազմած գիտական արշաւանքին: Գտած է Տրդատ Թագաւորի յունարէն մէկ արձանագրութիւնը Քասախ գետի ափունքներուն մօտ, Արագածի արեւելեան կողմը, եւ յառաջացուցած է մեծ շահագրգռութիւն Փրոֆեսորներ Մառի, Ռոստովցեվի, Սմիլնովի մօտ: Փրոֆ. Մառի առաջարկով ընդունուած է որպէս իսկական անդամ Կայսերական Հնագիտական Ընկերութեան:

1911-ին ճամբորդած է դէպի Երուսաղէմ եւ Կ. Պոլիս՝ ընկերակցութեամբ նկարիչ Եղիշէ Թադէոսեանի, որ արտանկարած է սքանչելի հարազատութեամբ Ս. Յակոբեանց Վանքի եւ Կ. Պոլսոյ Ազգ. Մատենադարանի կարեւոր ձեռագիրներէն ոմանց մանրանկարները, ի մասնաւորի թագաւորական եւ իշխանական դիմանկարները, որոնք բոլորը մաս կազմած են իր հոյակապ ու գրեթէ գլուխ-գործոցը նկատուող «Հայ Մանրանկարչութեան Քարտէզ»ին, եւ որոնք այժմ կը պահուին, այլ սքանչելի արտանկարներու հետ Գարեգին Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ անտիպ գործերու արխիւին մէջ: Իսկ Գարեգին Վարդապետ միւս կողմէ ուսումնասիրած է եւ նկարագրած՝ գրչագրական ու մանրանկարչական արժէք ունեցող ձեռագիրները, միաժամանակ արտագրելով անոնց յիշատակարանները, որոնք հետզհետէ բազմանալով, կազմած են իր «Յիշատակարան Ձեռագրաց» հաստափոր ու մեծարժէք գործին շարքը:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
(Պատմական Ակնարկ)**

11.– Յաջորդ գրողթիւնը՝ Շահէ Սրբազանին նամակն է ուղղուած Քերոբ Փափազեանին¹:

«Անթիլիաս, Յունիս 24, 1932

*Մեծ(այարգ)
Տիար Քերոբէ Փափազեան
Կ. Պոլիս*

*Սիրեցեալ Քերովբէ
Կը հաստատեմ Մայ(իս) 29, 1932 թուակիր յանձնարարեալ նամակս եւ ներփակ 200 տոլարի չէքը Ձեր անունին²:*

Կ'երեւի թէ գործեր եւ զբաղումներդ արգելք եղան եւ անկէ ի վեր քենէ նամակ չստացայ:

Այս անգամ ներփակ կը դրկեմ Քեզի հարիւր տոլարի չէք մը եւս: Կը խնդրեմ որ հասնելուն ինծի իմաց տաս ի միամտութիւն:

Այնպէս կ'երեւի թէ տակաւին վերջնապէս գինը ճշդած չես. եւ կամ որեւէ արգելք եղած է:

Հաճիր ինչ որ ընել պէտք է, քու լաւագոյն դատումիդ համաձայն ընել եւ կարելի եղածին չափ շուտով վերջացնել այս գործը, որ գիտեմ կնճռոտութիւններ ունի. եւ զորս Դուն կրնաս հարթել, ծանօթ ըլլալով պրն. Տ(էր) Մի-նասեանին գործելու կերպին:

Ես նոր որեւէ գրելիք չունիմ. ամէն ինչ կանխաւ ընդարձակ գրած եմ քեզի եւ կ'ակնկալեմ որ շուտով լսեմ քենէ խնդրոյն վերջնական կարգադրութեան մասին:

Հաճիր անվերապահօրէն գրել ինծի մտերմաբար, վասնզի այս վերջերս միտքէս անցաւ որ չըլլայ որ Տ(էր) Մի-նասեան Պատ(րիարք) Մ.ին դիմած ըլլայ աւելի նպաստաւոր գին մը ձեռք բերելու համար, ինչ որ գուցէ սրտնեղութիւն պատճառեց քեզի, եւ լռելուդ պատճառը այդ իսկ է:

Ես Պատր(իարք) Մ.ին չպատասխանեցի³, միշտ սպասելով քու նամակիդ,

¹ Գրուած Դպրեվանքի պաշտօնական նամակի՝ միագիծ թուղթի վրայ, կապոյտ մելանով, երկու էջ:

² Տե՛ս 10րդ նամակը:

³ Անհրաժեշտ է ստուգել ստացուած նամակը: Առ այժմ տեսած չունինք:

տեղեկանալով նախ քեզմէ վերջնականը, որպէսզի չխաչաձեւուի գործը:

10 օրէ ի վեր Դպրեվանքի ամսվերջի քննութեանց զբաղած ենք: Գրեթէ ուրիշ գործի նայած չունինք⁴:

Օղերը քանի մը օրէ ի վեր տարապայման կերպով տաքցան⁵: Տակաւին բաւական գործ ունինք:

Վեհ(ափառ) Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը քեզ սիրով կ'ողջունէ. կ'ըսէր թէ վերջերս քենէ չէ լսած:

Ես Մայիսին 20-25ին հիւանդ էի, այժմ աւելի լաւ եմ⁶. ամառը շնորհքով հանգիստի պէտք ունիմ⁷:

Կ'ողջունեմ զքեզ ջերմ սիրով: Նմանապէս ողջոյններս հաղորդէ Օր. Ֆիմիին:

Սպասելով նամակիդ,

Մնամ Ձերդ
Շահէ Եպիսկոպոս»:

12.– Յաջորդ գրութիւնը՝ Քերոբ Փափազեանին նամակն է ուղղուած Շահէ Սրբազանին⁸:

«Istanbul, 30 Յունիս 1932

Սիրելի Սրբազանս,

Ամէն անգամ որ ցրուիչը մեզի կու գայ, կը վախնայի որ ինծի պիտի հասնէր Ձեր մէկ նամակը, որ իրաւամբ պիտի յիշեցնէր ինծի՝ որ Ձեր Մայիս 29 թ. նամակը (զոր ժամանակին ստացած եմ՝ կցեալ \$200նոց չէքով մէկտեղ) անպատասխանի ձգելով առիթ տուի Ձեր մտահոգուելուն, ինչ որ բնական է նմանօրինակ պարագաներու տակ:

Ասոնք գիտնալով հանդերձ չ'կրցի երկտող մը գրել, որպէսզի միամտիք, վասնզի մէկ կողմէն՝ թէ՛ Ս. Պատրիարքը եւ թէ՛ Ա(բիկ) Տէր Մինասեանը տեսնելու եւ անոնց հետ խօսելու պատեհութիւնները չ'ներկայացան՝ ուղղուած ժամանակ, եւ միւս կողմէն՝ խնդիրը լրացնելէ վերջ ալ, պարագաներու հարկադրանքին տակ, յակամայս եղայ անճշդապահ, մինչեւ որ հիմա ձեռքս հասաւ Յունիս 24 թ. պատուական նամակդ, միասին ըլլալով հոն \$100նոց չէք մը: Երկու չէքերն ալ պիտի պահեմ առանց négocié ընելու, մինչեւ որ Ա(բիկ)

⁴ Տե՛ս Աթոռակից Կաթողիկոսի Օրագրութեան Ուրբաթ, 17 Յունիս 1932 «Այսօր սկսան վերջին քննութիւնները գրաւոր»:

⁵ Տե՛ս անդ համապատասխան օրը՝ Ուրբաթ, 20 Մայիս 1932 «Տաք է նեղացուցիչ օր մը այսօր, ջերմաչափ 20° առտուն կանուխ»:

⁶ Տե՛ս անդ համապատասխան օրերը՝ Ուրբաթ, 20 Մայիս 1932 կը խօսի «աջ ուսին սուր յոդացաւի» մասին:

⁷ Տե՛ս անդ Երեքշաբթի, 24 Մայիս 1932 «Շահէ Եպս. որոշած է Գրքագ-խան երթալ ջերմուկի համար»:

⁸ ERMIS (Konserve) Fabrikasi-ի թուրքերէն-ֆրանսերէն պաշտօնական անգիծ թուղթի կէս էջին երկու երեսներուն վրայ, սեւ մելանով գրուած: Նիւթին չաղերսուած հատուածները դուրս ձգեցինք:

Տէր Մինասեան ձեռք բերէ եւ մեզի յանձնէ՝ ընդունելի, այսինքն օրինական ամէն արժէք ներկայացնող ժառանգ(ական) վաւերացումները, եւ հոս կեցող ժառանգորդներու բաժինները գանձելու իրաւասութեան գիրը կամ գրերը: Այս պարագան իրեն ըսինք՝ Ս. Պատրիարքը եւ ես, ու ինք յանձնառու եղաւ:

Ամփոփեմ ինդրոյն ներկայ վիճակը.-

Ա.- Յանկին մէջ եղած եւ անկէ դուրս ալ մնացած (եթէ կայ) բոլոր գրքերուն համար պիտի տանք (1000) հազար թրքական թղթոսկի:

Բ.- Գրքերը պիտի յանձնաձենք՝ Շիշլիի Գերեզմանատան մէկ սենեակին մէջ, ուր կը գտնուին, եւ անկէ սկսեալ մինչեւ Պէյրութ բոլոր ծախքերը մեզի պիտի վերաբերին:

Գ.- Առ առաւելն մինչեւ մէկ ամիս, (Յուլիս 20ը) պիտի լրացնէ ժառանգական ձեւակերպութիւնը:

Դ.- Եթէ բացակայ ժառանգորդներէ օրինական փոխանորդագիր չունենայ, պատրիարքարանը պիտի առնէ եւ ղրկէ անոնց բաժինը:

Գրքերը տեղաւորելիք եւ բեռցնելիք վստահելի մարդ մը պատրաստ է: Երբ գործողութիւնը լրանայ, եւ կամ պէտք ըլլայ Ձեզի գրել, փոսթով պիտի իմացնեմ: Մինչեւ որ ինձմէ նամակ չ'ստանաք դրամ մի՛ ղրկէք:

*Կարօտով եւ սիրով կը համբուրեմ Աջդ եւ աչքերդ
Քոյդ
Ք. Փափագեան»*

13.- Յաջորդ գրութիւնը՝ Քերոբ Փափագեանին նամակն է ուղղուած Շահէ Սրբազանին⁹:

«Կ. Պոլիս, 4 Օգոստոս 1932¹⁰

Սիրեցեալ Սրբազանս,

Ամփոփ պատասխան մը միայն պիտի կրնամ գրել Յուլիս 23 թուակիր նամակիդ¹¹, որպէսզի միամտիս, թէ նամակդ առած եմ, եւ արդէն իսկ մոռցած չեմ գրքերու ինդիրը՝ նաեւ ներկայ բացառիկ զբաղումներուս մէջ.-

Ս. Պատրիարքին պաշտօնական գրութիւններուն վրայ, Բերայի¹² Թաղականութիւնը ճշդած էր Տ(էր) Մկրեանի ժառանգորդները գրով մը, զոր ինձի յանձնեց Ն. Սրբազնութիւնը, շաբաթ մ'առաջ, փորձառու իրաւագէտներէ ստուգելու համար թէ այդ գրով յիշուածներէն որո՞նք եւ ի՞նչ քանակութեամբ ժառանգորդ են: Ասի ընել անհրաժեշտ էր որպէսզի ա) մեր գործը

⁹ Գծաւոր թուղթի երկու երեսներուն եւ լուսանցքին վրայ, սեւ մելանով գրուած: Նիւթին չաղերսուած հատուածները դուրս ձգեցինք:

¹⁰ Ասոր ներքեւ, մատիտով գրուած է «9 Օգոստոսին ստացած»:

¹¹ Սոյն նամակին պատճենը առ այժմ տեսած չենք:

¹² Կ. Պոլսոյ երոպական բաժնին մէկ շրջանին հին անուանումն է: Այժմ՝ Պէյթոլլու: Տե՛ս 1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, Կ. Պոլիս, 1909, էջ 227-228:

ապահով հիմերու վրայ ըրած ըլլանք եւ բ) ժառանգորդներն ալ զրկուած չըլլան, քանզի՝ Ս. Պատրիարքը եւ ես համամիտ ենք, որ Ա(բիկ) Տէր Մինաս-եանին պէտք չէ անպայման հաւատանք եւ թուրքիայէն դուրս գտնուող ժառանգորդաց փափուկ դիրքը եւ իրաւունքը նկատի առնենք:

Նկատելով որ Տ(էր) Մկրեան 1909ին վախճանած է, իր ժառանգութիւնը հին (Տէրայիզի¹³) օրէնքով պիտի բաժնուի: Արդ, իր ներկայ ողջ ժառանգորդներն են ա) իր հոս գտնուող Մարիանէ աղջիկը (1/3 բաժինով) բ) իր մեռած աղջկան Սուլթանին (+ 1927 ին) 3 զաւակները (Աբիկ եւ 2 քոյրեր, մին ի Փարիզ 1/3 բաժինով) եւ գ) իր մեռած եղբորորդիին՝ Արտաշէս Մկրեանի (Իտալիա գտնուող) այրին եւ 3 զաւակները, նմանապէս 1/3 բաժինով: Ըստ այս ստուգութեան՝ 1000 լիրան 1/3 ականէն 3 բաժինով կը պատկանի՝ ա. բ. եւ գ. խումբերուն:

Ս. Պատրիարքին հետ թէլէֆօնով խօսելէ եւ այս եզրակացութիւնը նկատի առնելէ վերջ, իր հաւանութեամբ եւ գիտութեամբ Աբիկը այսօր կանչեցի Ղալաթիոյ¹⁴ Խորհրդարանը եւ եզրակացութեան մասին խօսեցայ իրեն հետ: Իր տեսակէտը կը հարկադրէ զիս վերստին խորհրդակցիլ Ս. Պատրիարքին հետ, որ այսօր եւ վաղը (Ուրբաթ) պատրիարքարան չ'ըլլալուն Շաբաթ օր միայն հնար պիտի ըլլայ գինքը տեսնել: Հարկ եղած ուղղութիւնը միասին կ'որոշենք եւ կ'ընենք, ինչ որ պէտք է:

Անհրաժեշտ եղաւ այսքան ուշադիր գտնուիլ, թէեւ գրքերու առաքումը կը յապաղեցնէ, որպէսզի սխալ եւ գլխացաւ պատճառելիք քայլ մ'առած չ'ըլլանք: Եթէ այս մատենադարանին հաւասար ուրիշ մը ըլլար հոս կամ այլուր, եւ այս գնով, ես պիտի թելադրէի, որ նախընտրութիւնը անոր տրուէր, բայց քանի որ մեր գործին յարմար է ասոր գնումը եւ քանի 3 ճիւղի մէջ 8 ժառանգորդ կայ, որոնց միայն 3ը հոս եւ 5ը դուրսն են եւ այսպէսով միայն (333 + 222) 555 լիրան հոս եղողներուն, իսկ (111 1/2 + 333 1/2 =) 445 լիրան դուրս գտնուողներուն կը պատկանի, Ս. Պատրիարքը եւ ես պարտաւոր ենք գտնել ձեւ մը, որ թէ գնող հաստատութիւն եւ թէ իրաւատէրներ չվնասուին: Արդ, Զեզի կը մնայ սպասել մեր միւս նամակին, եւ անխուսափելի յապաղումներէ չ'մտահոգուիլ, գիտնալով որ թէ Պատրիարք Ս.ը եւ թէ ես պիտի ջանանք փութացնել, որքան որ հնար է:

Ես եւ Ֆիմին կը համբուրենք Աջդ եւ աչքերդ,
Քոյդ
Ք. Փափագեան»

¹³ Տե՛ս Աբիկեան, Ս., Երեքլեզուեան Ընդարձակ Բառարան, Տաճկերէն, Հայերէն, Գաղղիերէն, Կ. Պոլիս, 1888, էջ 728 (ֆէրաիզ, ժառանգական բաշխում. répartition d'héritage) եւ էջ 732 (ֆէր, ճիւղ, բաժանում): Նաեւ Ինճէեան Արմենակ, «Օսմ. ժառանգական Իրաւունքը, Միւլք, Վագֆ եւ Միւրի Ինչքերու մասին», 1909 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, Կ. Պոլիս, 1910, էջ 119-129:

¹⁴ Տե՛ս 1908 Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, Կ. Պոլիս, 1909, էջ 231:

14.– Յաջորդ գրուածիւնը՝ Շահէ Սրբազանին նամակն է ուղղուած Քերոբ Փափազեանին¹⁵:

«Անթիլիաս, Հոկտեմբեր) 7, 1932

Սիրելի Պ. Քերոբէ Փափազեան

Ստացայ Սեպտ(եմբեր) 25 թուակիրդ: Խնդիրը պարզեր էիր իր բովանդակ տգեղութեան մէջ:

Եւ սակայն կայ եւ կը մնայ Դպրեվանքին համար այդպիսի գրադարանի մը հրամայական եւ անմիջական անհրաժեշտութիւնը: Դիւրին չէ նման ճոխ մատենադարան մը գտնել մանաւանդ այն գիրքերուն պատճառաւ որ Տ(էր) Մկրեանինը ունի:

Երկար մտածեցինք Բաբգէն Ս. Կաթող(իկոսը) եւ ես, եւ եկանք սա եզրակացութեան. Ձեզի պէս թէ խղճի հակառակ գտնելով հանդերձ Տէր Մինասեանի պահանջը, միւս կողմէ նկատի առնելով խնդրոյն զանազան հանգամանքները, յօտար ենք մենք զոհողութիւն ընել անիրաւ Աբիկին, եւ մաս մըն ալ զոհողութիւն պէտք է ընեն ժառանգորդները, քանի որ լքեալ գոյքի հարց կրնայ յարուցուիլ գուցէ Աբիկի կողմէն իսկ:

Ուստի, թող ապիրատն Աբիկ ստանայ 170 – եթէ կարելի չէ նուազագոյնով կարգադրել.– իսկ ժառանգորդք 333–ի տեղ ստանան 250 եւ մենք զոհենք 87 թուրք(ական) ոսկի եւս ու այս կերպով թող լմնայ:

Ամեն(ապատիւ) Ս. Պատրիարքէն կը խնդրեմ յատկապէս որ հաճի նկատի առնել իմ ու Դպրեվանքի կացութիւնը՝ Առանց Մատենադարանի, յետոյ նաեւ լքեալ գոյքի օրէնքը¹⁶, որ Աբիկի պահանջէն աւելի արդար չէ եւ սակայն իրողութիւն (fact) մըն է՝ որմէ խուսափում չկայ: Բաց աստի Տ(էր) Մկրեան ժառանգորդներ այս կարգադրութեամբ թէ՛ իրենց իրաւունքին 3/4–ը գանձած պիտի ըլլան այս քրիզի միջոցին, թէ՛ լուսահոգի Աւագ Քահանային Մատենադարանը թշուառական Աբիկին իշխանութենէն փրկած պիտի ըլլան, եւ թէ այդ յիշատակը անկորուստ եւ ապահով պահելով հանդերձ Կիլ(իկիոյ) Կաթող(իկոսութեան) Դպրեվանքին ալ իրենց կողմէ նուէք քրքած պիտի ըլլան:

Ս. Պատրիարքը քաջ գիտէ թէ համակերպութիւնը քաղաք(ական) պայմաններու ստեղծած կացութեան մէջ՝ մեծագոյն բարոյ(ական) շահեր ապահովելու տեսակէտէն շխարհի իմաստութեան պարտքերէն մէկն է: Մեծապէս պիտի գնահատենք այս ուղղութեամբ այս վերջին հանգրուանին ալ ընծայելիք բարոյ(ական) օժանդակութիւնը:

Նամակիդ մէջ այս մասին ժառանգորդաց ընելիք զոհողութեան համար

¹⁵ Գրուած Դպրեվանքի պաշտօնական նամակի միագիծ թուղթի վրայ, կապոյտ մելանով, երկու էջ: Նիւթին չաղերսուած հատուածները դուրս ձգեցինք:

¹⁶ Այս առնչութեամբ բազմաթիւ ուսումնասիրութիւններ՝ յօդուածներ եւ գիրքեր կան, որոնցմէ կը յիշենք՝ Baghdjian, K.K., The Confiscation of Armenian Properties by the Turkish Government said to be abandoned, Antelias, 2010 եւ Akçam, T., & Kurt, U., The Spirit of the Laws. The Plunder of Wealth in the Armenian Genocide, New York & London, 2015.

վերստին ժառանգորդներուն գրելու պէտք չեմ տեսներ, զի անվերջ թղթակցութեամբ ու գուցէ Աբիկին դէմ անձնական ատելութեամբ գործը վիժման կը տանի: Պէտք է գործը կարճ կապել ու վերջացնել:

Ահա մեր կարծիքը. որոշումը:

Քեզի կը մնայ գործը իրականացնել, լրացնել ո՛րքան հնար է վայրկեան մը առաջ, քաջ գիտնալով թէ բարոյապէս տառապողը ես եմ. տուժողը՝ Դըպրեվանքի 40 սաները պիտի ըլլան:

... իսկ Ֆիմիին ալ հաճիր Դուն հաղորդել ողջոյններ սիրալիր,

Կարօտալիր սիրով Քեզ
Շահէ Եպիսկոպոս»

15.- Յաջորդ գրութիւնը՝ Քերոբ Փափազեանին նամակն է ուղղուած Շահէ Սրբազանին¹⁷:

«Կ. Պոլիս, 23 Հոկտեմբեր 1932

Սիրելի Տ. Շահէ Սրբազան

Հոկտեմբեր) 7 թուակիրդ առի 13ին եւ այսօր կրնամ պատասխանել՝ գրքերու խնդիրը վերջացած ըլլալով:

Ձեր նամակին պարունակութիւնը հեռաձայնով հաղորդեր էի Ս. Պատրիարքին, որ յարմար չ'դատեց Աբիկին հետ ի նմին ալ խօսիլ՝ խղճի դէմ եղող այդ առաջարկութեան համար, եւ ինծի թողուց որ վերջին փորձ մըն ալ ընելով՝ զեղչով մը լրացնելու նպատակաւ բանակցութիւնը, խնդիրը վերջացընեմ: Հագիւ քանի մ'օրէն կարելի եղաւ տեսնել այդ թշուառականը, որ հոտ առած ըլլալով թէ անպատճառ պիտի համաձայնիմ իրեն հետ, փորձեց նոր պայմաններով արծարծել, եւ սակայն ի վերջոյ որպէս թէ զիջաւ, եւ իր նախորդ պահանջման վրայ պնդած ըլլալուն, հարկադրուեցայ ընդունիլ իր անիրաւ պայմանը, զոր կը պարտադրէր մեզի Դպրեվանքին անգիրք վիճակը, եթէ ո՛չ այս գրքերը մեր տուած գնով բնաւ չէր կրնար ծախել, եւ արդէն Պատրիարք եւ Քաղ(աքական) Ժողով մտադիր էին իրենք չ'յանձնել Աբիկին այդ Մատենադարանը՝ առանց դատական որոշումի մը, ուրկէ ապահովաբար Աբիկը վնասով դուրս պիտի գար: Արդ, մենք պիտի վճարենք 1000+84= 1084, որ ըստ հետեւեալին պիտի բաժնուին ժառանգորդք՝

- 500 Աբիկին եւ երկու քոյրերուն,
- 334 Աբիկին մօրաքրոջը
- 250 Տ(էր) Մկրեան ժառանգորդք
- 1084

Վերջիններուն պիտի գրէ Ս. Պատրիարքը իր յարակից անհրաժեշտ ծախ-

¹⁷ Գծաւոր թուղթի երկու զուգահեռ երեսներուն վրայ, սեւ մելանով գրուած: Նիւթին չաղերսուած հատուածները դուրս ձգեցինք:

քերը եւ ի վերջ իրենց բաժնին զուտ մնացորդ (250 ոսկի) պատրիարքարանի սնտուկը կը գտնուի, նմանապէս Աբիկի Փարիզ գտնուող քրոջը բաժինն ալ (166.66/00) պիտի մնայ պատրիարքարան, իր հրամանին վճարելի: Իսկ 334ը պիտի տանք անձամբ Մաննիկ Տ(էր) Մկրեանին, որ հոս է:

Ս. Պատրիարքին հաւանութեամբ Աբիկին վճարեցի =100= ոսկիի կանխավճար մը: Պատրիարքարանէն երէկ իսկ գրուեցաւ Բերայի թաղականութեան թէ «Տ(էր) Մկրեանին Մատենադարանը գնուած ըլլալով Անթիլիասի Դպրեվանքին կողմէ, յանձնարարուի Շիշլիի Գերեզմանատան Յանձնաժողովին՝ յանձնել Ք(երորէ) Փափագեանի, որ պաշտօն ունի գրքերը փոխադրելու եւն.»։ Վաղը Բերայի թաղականութեան գումարման օրն է, Յանձնաժողովին գիրը ԳՇ. (Երեքշաբթի) կամ ԴՇ. (Չորեքշաբթի) կը յանձնուի, եւ կը յուսամ թէ՛ այդ թուականէն մէկ շաբաթ վերջ գրքերը շոգենաւ կը դրուին: Մտահոգ մի՛ ըլլաք, հնար եղածին չափ պիտի փութացնեմ: Ս. Պատրիարքը ըսաւ թէ Իսազուլեան էֆէնտի եւս մաս մը գրքեր նուիրած է Դպրեվանքին, անոնք ալ մասնաւոր ցանկով մը միւսներուն հետ պիտի ղրկուին Ձեզի¹⁸: Թուագրուելիք մէն մի սնտուկի պարունակած գրքերը ցուցակագրուելով ըստ այնմ ցանկը պիտի կազմել տամ, որպէսզի հող ալ անոր համեմատ յանձանձէք: Ի լրումն իր չարաչահութեան Աբիկ պնդեց, որ միոյն տեսակէն մէկէ աւելի եղող օրինակները ինք պիտի առնէ: Ըսի թէ այս պարագան առաջուրնէ որոշուած է, այսինքն այդ կարգի գրքերը մերն են: Պատրիարքը թէլէֆօնով յանձնարարեց ինծի որ խնդիր չ'հանեմ, համաձայնիմ: Յանձնառու չեղայ, թէ կարելի ըլլայ թղթի կտոր մըն ալ պիտի չ'տամ այդ ստորին մարդուն, որ մեր դիրքին հարկադրած անհրաժեշտութիւնը շահագործեց:

Գալով դրամին, նկատի առնելով սնտուկ, բեռնաւորման ծախք եւ վարձ, նաւիլօն (sic), սիկորթա եւն եւայլն, 300 տոլար եւս ղրկեցէք փութով, որով 600 տոլար կ'ըլլայ ամբողջը, ատկէ եթէ աւելնայ կը ղրկենք Ձեզի, եւ թէ պակսի կը ղրկէք մեզի: Թէպէտեւ բազմազբաղ եւ այս կամ այն պատճառներով ոչ-գոհացուցիչ դրութեան մը մէջ, սակայն փա՛ռք Աստուծոյ ողջ եւ առողջ ենք:

Կարօտալիւր համբոյրներով՝ Աջիդ եւ աչքերուդ,
Քոյդ,
Քերորէ Փափագեան»

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Մատենադարանապետ

(Շար. 5)

¹⁸ Շահէ Սրբազան Քերոք Փափագեանին ուղղուած նամակին մէջ, 13 Յունուար 1933-ին, կ'ակնարկէ Ս. Պատրիարքին ջանքերով 55 գիրքերու ստացումին մասին:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԸՆԿԵՐ - ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ* FRIEND - FRIENDSHIP

Ո՞վ է ընկերը եւ ի՞նչ է ընկերութիւնը:

Ընկերութիւնը փոխադարձ համակրանքի, վստահութեան, սիրոյ եւ յարգանքի վրայ հիմնուած ինքնակամ կապը կամ յարաբերութիւնն է՝ երկու անձերու միջեւ: Նմանօրինակ յարաբերութեան մը մէջ գտնուող անձը կը կոչուի՝ ընկեր կամ ընկերուհի:

Մարդկային պատմութեան մէջ ընկերութիւն (անգլ.՝ Friendship, յուն.՝ philía, լատ.՝ amicitia, ֆրնս.՝ Amitié, գերմ.՝ Freundschaft) հասկացութիւնը, հնադարեան ժամանակներէն մինչեւ այսօր, հասարակութեան մէջ ունեցած է իր կարեւոր դերը եւ քննարկութեան առարկայ է փիլիսոփայութեան ոլորտի մէջ, ինչպէս նաեւ՝ ընկերաբանութեան, հոգեբանութեան եւ ազգաբանութեան ոլորտներուն մէջ: Ընկերութեան կամ ճշմարիտ ընկերներու բազմաթիւ օրինակներ կը գտնենք նաեւ գրական ճիւղերու մէջ, ինչպէս համաշխարհային, նոյնպէս հայկական գրականութեան մէջ:

Հայերէնի մէջ ընկեր եզրը, ինչպէս կը տեսնենք կարգ մը բառարաններու մէջ, կազմուած է «ըն(դ)» նախդիրով եւ «կեր» արմատով եւ կը նշանակէ՝ միասին ուտող, հացակից: Նաեւ լատիներէն՝ companio եւ ֆրանսերէն՝ compain, compagnon բառերը կազմուած են նոյն ձեւով, «հացակից» իմաստով: Անգլերէն հոմանիշը՝ Friend, գերմաներէնը՝ Freund, ֆրանսերէնը՝ ami, լատիներէնը՝ amicus իսկ յունարէնը՝ φίλος:

Ընկերը այն մտերիմ, նմանամիտ, սրտակից, համակրելի, ինքնակամ ընտրեալ ու վստահելի ծանօթ բարեկամն է, որուն հետ ժամանակ կ'անցնես: Ընկերը նաեւ կրնայ գործակից, աշխատակից, դասարանակից, միաբանակից կամ զինակից ըլլալ, կրնայ ուղեկից կամ ճամբորդակից ըլլալ, կրնայ նաեւ գաղափարակից կամ խորհրդակից ըլլալ եւ վերջապէս ընկերը կրնայ կողակից ամուսին ըլլալ:

* Նիւթը քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակի «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքի Բ. հրատարակութեան (632 էջ), որ նոր լոյս տեսած է (2021 թ.) Անթիլիասի տպարանէն:

Հայերէնի մէջ, **ընկերութիւն** եզրը կը նշանակէ նաեւ՝ հաստատութիւն (Institution), որ կրնայ արդիւնաբերական, առեւտրական, հայրենակցական, բարեսիրական, կրթական, քաղաքական կամ այլ բնոյթ ունենալ: **Ընկերութիւն** եզրը կը նշանակէ նաեւ՝ **ընկերային հասարակութիւնը** (Community), որ ընդհանրապէս ժողովուրդն է կամ համախմբուած բազմութիւն մը: Երկու երկիրներու կամ երկու ժողովուրդներու միջեւ եւս **ընկերական** (բարեկամական) յարաբերութիւն կրնայ յառաջանալ: Այստեղ, վերոյիշեալ հաստատութեան, հասարակութեան, երկիրներու եւ ժողովուրդներու **ընկերութեան** իմաստները քննարկումի նիւթ պիտի չըլլան, այլ պիտի շեշտուի միայն երկու անձերու միջեւ գտնուող «ես-դուն-յարաբերութիւնը», որպէս նեղ անհատական ու մտերիմ կապ, որ հիմնուած է փոխըմբռնման եւ փոխադարձ արժեւորումներու վրայ:

Այս առնչութեամբ կը ծագին բազմաթիւ հարցադրումներ.՝ ո՞վ է ընկերը եւ ո՞վ է ճշմարիտ ու լաւագոյն ընկերը: Աւելի լաւ է քանակական տեսակէտէն բազմաթիւ ընկերներ ունենալ, թէ սակաւաթիւ ընկերներ կամ միայն մէկ որակաւոր ընկեր: Արդեօք ընկերութեան տարբեր ձեւեր կա՞ն եւ վերջապէս կարելի՞ է մտերիմ ընկեր ունենալ, ներկայ ժամանակներուն, երբ ամենուրէք կը տիրէ համացանցը (Internet), իր բազմաթիւ կարելիութիւններով, ինչպէս օրինակ դիմատետրը (Facebook) եւ իր նմանները, ուր կարելի է հազարաւոր «ընկեր» ("Friend") ունենալ:

Ընդհանրապէս փիլիսոփայութեան եւ մասնաւորաբար փիլիսոփայական բարոյագիտութեան ոլորտին մէջ, **ընկեր** – **ընկերութիւն** նիւթին անդրադարձած եւ քննարկած են բազմաթիւ փիլիսոփաներ ու բարոյագէտներ... թուենք անոնցմէ օրինակներ.՝

- Յոյն քաղաքական գործիչ **Պերիկլէսի** (Pericles, յուն.՝ Periklês, 490 – 429 մ.թ.ա.) համաձայն՝ «մենք ընկերութիւններ կրնանք հաստատել ո՛չ թէ առնելով, այլ՝ տալով»:

- Նախասոկրատեան յոյն «խնդուն» փիլիսոփայ **Դեմոկրիտոս** (Democritus, յուն.՝ Dêmókritos, 460 – 370 մ.թ.ա.) կ'ըսէ՝ «ով որ մէկ ազնիւ մարդ, որպէս ընկեր չունենայ, ան արժանի չէ ապրելու»:

- Յոյն դասական փիլիսոփայ **Պլատոնի** (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) համաձայն, «ընկերութիւնը ձգտումն է՝ դէպի յաջողակ կեանքը», ընկերակիցներու խոհեմութեան եւ իրենց միջեւ եղած վստահութեան միջոցով:

- Յոյն դասական փիլիսոփայ **Արիստոտէլի** (Aristotle, յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.) համաձայն՝ «դէպի ընկերութիւն հակումը, յաճախ, կը յառաջանայ յանկարծակիօրէն, մինչ ինքնին ընկերութիւնը՝ ժամանակ կը պահանջէ»:

- Յոյն բարոյախօս փիլիսոփայ **Էպիկուրոսի** (Epicurus, յուն.՝ Epíkouros, 342 – 271 մ.թ.ա.) համաձայն՝ «ընկերութիւնը հաստատուած է փոխադարձ օգուտին վրայ»:

• **Հռոմէացի ստոյրիկեան փիլիսոփայ Կիկերոնի** (Marcus Tullius Cicero, 106 – 43 մ.թ.ա.) **Համաձայն**, «*իմաստութիւնը եւ ընկերութիւնը, աստուածներու կողմէ մարդուն շնորհուած ամենարժէքաւոր նուէրներն են*»: **Նոյն փիլիսոփային Համաձայն՝** «*կարեկից ընկերութիւնը, երջանկութիւնը աւելի կը պայծառացնէ, իսկ դժբախտութիւնը՝ կը թեթեւցնէ*»:

• **Անգլիացի քաղաքագէտ-փիլիսոփայ Ֆ. Բեկոն** (Francis Bacon, 1561 – 1626 թ.) **Կիկերոնի հետ Համաձայն է**, որ «*ընկերութիւնը՝ մեր ուրախութիւնը կը կրկնապատկէ, իսկ մեր հոգերն ու ցաւերը՝ կը կիսէ*»:

• **Ֆրանսացի բարոյախօս փիլիսոփայ Լա Ռոշֆուկո** (Francois de La Roche-foucauld, 1613 – 1680 թ.) **կ'ըսէ՝** «*իսկական ընկերը բարիքներու մեծագոյնն է*»: **Նոյն փիլիսոփային Համաձայն՝** «*որքան որ հազուադէպ է իրական սէրը, շատ աւելի հազուադէպ է իսկական ընկերութիւնը*»:

• **Գերման յոռետես փիլիսոփայ Ֆ. Նիցշէ** (Friedrich Nietzsche, 1844 – 1900 թ.) **կ'եզրակացնէ**, որ «*ընկերութիւնը պարզապէս՝ սխալանք կամ մոլորութիւն մըն է*»:

• **Ֆրանսացի ժամանակակից փիլիսոփայ Մ. Ֆուկոյի** (Michel Foucault, 1926 – 1984 թ.) **Համաձայն**, «*ընկերութիւնը ինքնուրոյն ապրելակերպ (կենցաղ) մըն է*»:

Այս բոլորի կողքին, մասնաւոր յիշատակութեան արժանի են (ժամանակագրական կարգով)՝ նախասոկրատեան յոյն փիլիսոփայ Պիլթակորաս (Pythagoras, 570 – 500 մ.թ.ա.), դասական յոյն փիլիսոփայ Արիստոտէլ (Aristotle, 384 – 324 մ.թ.ա.), ընդհանրապէս քրիստոնեայ Միջնադարը (Middle Ages) եւ գերման փիլիսոփայ Կանտ (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) ... որոնց մասին արժէ առանձնապէս անդրդառնալ:

➤ ՊԻԻԹԱԿՈՐԱՍ

Պիլթակորասի եւ Պիլթակորականներուն համար ընկերն ու ընկերութիւնը կարեւոր ու մեծ դեր կը խաղային: Պիլթակորականներու համաձայն, քանի որ տիեզերքը (իր բաղկացուցիչ մասերով), ներդաշնակ համագործակցութեամբ համախմբուած միասնութիւն մը կը նկատուէր, ուրեմն բոլոր կենդանի էակներուն (ներառեալ աստուածները) միջեւ բնականաբար սերտ ընկերութիւն մը պէտք է յառաջանար, որ մասնաւորաբար կը շեշտուէր Պիլթակորականներու միջեւ: Այս սերտ ընկերութիւնը, սակայն, ծայրայեղ խաղաղասիրութիւն կամ խաղաղապաշտութիւն (Pacifism) չէր նշանակեր, որովհետեւ Պիլթակորասի թելադրանքով, նաեւ Պիլթակորականներ կը մասնակցին օրինակ Սիբարիս (Sybaris) քաղաքի դէմ պատերազմին:

Պիլթակորականներու շարժումը ունէր իր գաղտնի ու աղանդանման միութիւնը եւ ընկերասիրական ու հաւաքական ապրելակերպը:

➤ ԱՐԻՍՏՈՏԷԼ

Յոյն դասական փիլիսոփայ Արիստոտէլ, իր «Նիկոմաքոսի բարոյագիտութիւն» (յուն. բնագիր՝ "ethiká nikomácheia") երկին 8-րդ եւ 9-րդ գլուխներուն մէջ կը քննարկէ «ընկերութիւն» հասկացութիւնը, իր ներանձնական եւ քաղաքական ոլորտներուն մէջ, որոշ մանրամասնութեամբ:

Արիստոտէլի համաձայն, մարդու նպատակը ընդհանրապէս լաւ ու բարի կեանք մը ապրիլն ու երջանիկ ըլլալն է եւ ասիկա կարելի է միայն ու միայն առաքինի նկարագիր մը ունենալով: Առաքինութիւններու¹⁹ շարքին է նաեւ ընկերութիւնը, որու պարագային խնդրոյ առարկան, մեզի նման անհատ (ընկեր) մըն է, որու հետ կարելի է հանգիստ ապրիլ, քանի որ Արիստոտէլի համաձայն, «ոչ ոք կ'ուզէ առանց ընկերոջ ապրիլ»: Այլ խօսքով, կարելի չէ նաեւ առանց ընկերոջ բոլորովին երջանիկ ըլլալ:

Ընկերութիւնը, Արիստոտէլի համաձայն, երկու տեսակ կրնայ ըլլալ.–

1. Իրարու-նման (հաւասար) անհատներու միջեւ եւ
2. Իրարու-ոչ-նման (անհաւասար) անհատներու միջեւ:

Արիստոտէլի համաձայն, ընկերութեան այս զանազանութիւնը հիմնուած է իր ուսուցիչ Պլատոնի մէկ երկին, «Լիսիս»ի (յուն.՝ Λύσις) վրայ, ուր գլխաւորաբար կը խօսուի ընկերութեան տարբեր տեսակներուն մասին:

Արիստոտէլ կը քննարկէ ու կը մանրամասնէ վերոյիշեալ ընկերութեան երկու տեսակները, հետեւեալ ձեւով:

1. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐԱՐՈՒ-ՆՄԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ.–

Ինչպէս հայկական առածը կ'ըսէ՝ «նման զնմանն գտանէ», այդպէս ալ Արիստոտէլի համաձայն, երկու նմանօրինակ, առաքինի նկարագիր եւ համանման ու հաւասար արժէք ունեցող անձեր կամ անհատներ կրնան ընկերանալ, այսինքն՝ ընկերներ դառնալ:

Ընկերութեան համար կարեւոր ազդակ կը նկատուի ընկերներու իրարու մօտիկ բնակութիւնը, որպէսզի կարելիութիւն ունենան աւելի յաճախ միասին ըլլալու եւ միասին բարին գործելու: Աշխարհագրական հեռաւորու-

¹⁹ Առաքինութիւն (յուն.՝ aretê, լատ.՝ virtus, անգլ.՝ Virtue, գերմ.՝ Tugend).-

Այս հասկացութիւնը, բարոյական դրական յատկանիշ, բարի նկարագիր ու բարոյական արժէք է: Առաքինութեան հականիշն է՝ մոլութիւնը (յուն.՝ kakia, լատ.՝ vitium, անգլ.՝ Vice, գերմ.՝ Laster) կամ կրօնական հասկացողութեամբ՝ մեղքը (յուն.՝ hamartía, լատ.՝ peccatum, անգլ.՝ Sin, գերմ.՝ Sünde):

Պլատոնի հաստատած չորս գլխաւոր առաքինութիւններն են.- իմաստութիւնը, արիութիւնը, չափաւորութիւնը եւ արդարութիւնը: Իսկ Արիստոտէլ, առաքինութիւնները կը բաժնէր երկու խումբի՝ տեսական (կամ տրամաբանական) եւ բարոյական (կամ նկարագրային):

Առաքինութիւններու վրայ հիմնուած բարոյագիտական տեսութիւնը կը կոչուի Առաքինութեան բարոյագիտութիւն (անգլ.՝ Virtue Ethics, գերմ.՝ Tugendethik):

թիւնը, օրինակ տարբեր քաղաքներու կամ երկիրներու մէջ ապրիլը, թէեւ ընկերներու միջեւ եղած այդ ընկերական կապը բոլորովին չի վերացներ, սակայն կը նուազեցնէ յաճախ միասին ըլլալու շատ կարեւոր ազդակը:

Արիստոտէլի համաձայն, ճարտարութիւնը (անգլ.՝ proficiency, գերմ.՝ Tüchtigkeit) սերտօրէն առնչուած է ընկերութեան, այսինքն ընկերներ իրենց ճարտարութեամբ կրնան յաջողցնել յարատեւ ընկերութիւն մը: Ասոնք կողքին ընկերներ, իրարու հանդէպ մեծ պատասխանատուութեան ու զոհողութեան ոգի պէտք է ցուցաբերեն եւ կարենան հրաժարիլ անձնական որոշ սովորութիւններէն ու նախասիրութիւններէն, որոնք կրնան իրենց ընկերութեան անհամապատասխան ըլլալ ու այդ ընկերութեան շարունակականութիւնը վտանգել:

Արիստոտէլ, ընկերութիւնը՝ իրարու-նմաններու-միջեւ գաղափարը կը բաժնէ գլխաւոր երեք ենթաբաժիններու.

ա) Ընկերութիւնը՝ հաճոյքի սիրոյն (յուն.՝ philía dia to hedy).--

Այստեղ երկու (կամ աւելի) անհատներ իրարու հետ ընկերութիւն կ'ընեն, որովհետեւ կ'ուզեն, իրարու օգնելով, **հաճոյք** ստանալ ու միասնաբար հաճելի կեանք մը ունենալ: Այս պարագային, անոնք պէտք է գրեթէ նոյն հետաքրքրութիւնները ունենան, օրինակ՝ միասին ռսնագնդակ խաղան, որու միջոցով, անոնք կրնան ուրախանալ եւ հաճոյք ստանալ:

Ժամանակի ընթացքին, եթէ այդ միացեալ հետաքրքրութիւնը մեղմանայ կամ չբանայ, այն ատեն իրենց միջեւ եղած մտերիմ ընկերութիւնն ալ կը տկարանայ կամ վերջ կը գտնէ:

բ) Ընկերութիւնը՝ օգուտի սիրոյն (յուն.՝ philía dia to chrêsimon).--

Այստեղ երկու (կամ աւելի) անհատներ իրարու հետ ընկերութիւն կ'ընեն, որովհետեւ իրարմէ **օգուտ** կը ստանան կամ միասնաբար ընկերային հասարակութեան մէջ պաշտօնակից կը դառնան: Նման ընկերութիւն մը կարելի է պատկերացնել քաղաքական կեանքին մէջ, երբ անոնք, օրինակ, նոյն քաղաքական կուսակցութեան անդամներն են:

Ընկերութեան նախորդ օրինակին նման, այս ընկերութիւնն ալ կրնայ ժամանակաւոր բնոյթ ստանալ, երբ փոխադարձ օգուտի հիմնական ազդակը վերանալով, ընկերութիւնն ալ կրնայ տկարանալ ու վերջ գտնել:

գ) Ընկերութիւնը՝ առաքինութեան սիրոյն (յուն.՝ philía di aretên).--

Այլ անհատի մը հետ ընկերութիւն ընել, առաքինութեան ու նոյնինքն այդ անհատի սիրոյն, կը ներկայանայ որպէս իսկական ու կատարեալ ընկերութիւն: **Առաքինութիւն** նկատուող այս ընկերութիւնը կը շարունակուի, այնքան ատեն որ ընկերները իրենց բարի ու առաքինի նկարագիրը պահեն: Այստեղ ընկերները գիրար կ'արժեւորեն, որպէս մարդ, իրենց ամբողջութեանը մէջ եւ ոչ թէ միայն անհատի մասնակի, որոշ (հաճոյքի կամ օգուտի) բաժինները: Նման իսկական ընկերութիւնը կարելի կ'ըլլայ երկու բարի ու

առաքինի նկարագրով անձերու միջեւ, անոնք հաւասարապէս իրարու բարին կը բաղձան, միաժամանակ իրարու կ'օգնեն, իրարու օգտակար կ'ըլլան եւ հաճոյք կը պատճառեն:

Այս ճշմարիտ եւ կատարեալ ընկերութիւնը, Արիստոտէլի համաձայն, պէտք է յաճախակի դառնայ ու գործնական շարունակութիւն ունենալով, սովորութիւն դառնայ:

2. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԻՐԱՐՈՒՎՁ-ՆՄԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ .-

Արիստոտէլ «իրարու-ոչ-նմաններ» բացատրութեամբ նկատի ունի սերունդներու, ինչպէս հայր-զաւակ կամ մայր-զաւակ յարաբերութիւնը, նաեւ պետութիւն-քաղաքացի յարաբերութիւնը: Արիստոտէլի համաձայն բնական է, որ զաւակը հօր եւ մօր հանդէպ աւելի յարգանք ու մեծարանք պէտք է ունենայ, ինչպէս նաեւ քաղաքացին պետութեան աւելի տայ, քան անկէ սպասէ կամ ակնկալէ:

➤ ՄԻՋՆԱԴԱՐ

Հնադարեան փիլիսոփաներ յստակօրէն կը զանազանէին սէր եւ ընկերութիւն հասկացութիւնները: Քրիստոնեայ Միջնադարուն, վերոյիշեալ երկու հասկացութիւնները, սակայն, հետզհետէ կը միանային, ընկերութիւնը կ'առնչուէր Աստուծոյ եւ կը ներկայացուէր սիրով՝ Աստուծոյ ստեղծագործութեան հանդէպ: Աստուածաբան եւ փիլիսոփայ Օգոստինոս Երանելիի (Aurelius Augustinus, 354 – 430 թ.) անդրանցական բացատրութեամբ՝ «ընկերութիւն Աստուծոյ հետ», ուր ընկերներ, միասնաբար եւ «Աստուծոյ սիրոյն» իրենց հաւատքին մէջ կը զօրանան:

Ասոր կողքին, քրիստոնեայ Միջնադարու աստուածաբան-փիլիսոփաները, ստանձնեցին նաեւ Հնադարեան ժամանակաշրջանի ընկերութիւնը յատկանշող կարգ մը ազդակները, միակ, բայց որոշ տարբերութեամբ մը: Մինչ Հին Դարուն ընկերութեան հիմքը կը կազմէր առաքինութիւնն ու խոհեմութիւնը (ընկերութիւն՝ առաքինութեան սիրոյն), Միջնադարուն, ընկերութիւնը կ'առնչուէր Աստուծոյ (ընկերութիւն՝ Աստուծոյ սիրոյն):

Միջնադարէն ետք, Վերածնունդի (Renaissance) եւ յատկապէս Նոր Դարաշրջանի (Modern Era) ընթացքին, տեղի ունեցաւ վերադարձ մը դէպի հնադարեան յունա-հռոմէական մշակոյթը, որով նաեւ վերականգնուեցաւ նախկին, «առաքինութեան սիրոյն ընկերութեան» գաղափարը, ինչպէս նաեւ բանականութեան գերիշխանութիւնը:

➤ ԿԱՆՏ

Գերման փիլիսոփայ Կանտ, իր «Բարոյականութեան բնագանցութիւնը» (գերմ. բնագիր՝ "Die Metaphysik der Sitten", 1798 թ., անգլ.՝ "The metaphysics

of morals") երկին մէջ (երկրորդ մաս.- «առաքինութեանց ուսմունքը» - "Tugendlehre", § 46 – 47), կը ներկայացնէ ընկերութիւնը, որպէս մարդու պարտաւորութիւն²⁰ ինքնիրեն հանդէպ եւ ուրիշներու հանդէպ:

Կանտի համաձայն, պարտաւորութիւնը բարոյական անպայմանական հրամայական²¹ (Categorical Imperative) մըն է, որ կը հակադրէ յոյզերէ կամ զգացական գրգիռներէ յառաջացած հակումներուն: Բարոյական վարմունք մը կ'առաջնորդուի ու կ'իրագործուի միայն ու միայն՝ պարտաւորութեան զգացումէն մղուած:

Կանտի համաձայն, ընկերութիւնը կարելի է բնորոշել, որպէս միացումը երկու առաքինի պարտաւորութեանց.- սիրոյ եւ յարգանքի: Այլ խօսքով, ընկերները իրարու հանդէպ՝ սէր կը տածեն եւ մանաւանդ յարգանք կը ցուցաբերեն:

Կանտ բոլորովին կը մերժէ իրմէ առաջ, Ռոմանթիզմի (Romantism) շրջանին, տարածուած ընկերութեան բնորոշումը: Ռոմանթիզմը ընկերութիւնը կը բացատրէր, որպէս հոգեկան խորունկ յարաբերութիւն մը, հոգեհարազատութիւն մը, ուր ընկերութիւնը եւ սէրը անքակտելիօրէն կը միանան իրարու եւ կը միաձուլուին, այնպէս որ ընկերութիւնը նոյնինքն սէրն է եւ սէրը նոյնինքն՝ ընկերութիւնը... Իսկ ամուսնութիւնը ամուր կապն է՝ սիրով եւ ընկերութեամբ: Կանտ, այս հարցին աւելի խոհեմութեամբ եւ ողջմտութեամբ կը մօտենայ եւ ընկերութեան առնչութեամբ, յոյզերու (անգլ.՝ Emotion, գերմ.՝ Affekt) գերակշռութիւնը նոյնիսկ շատ աւելի խանգարիչ կը նկատէ, որովհետեւ յոյզերը, իր բառերով՝ «ընտրութեան մէջ կոյր են եւ շարունակականութեան հարցով՝ անցողական»:

Արիստոտէլի (կամ Սոկրատէսի) կը վերագրուի «Ո՛վ ընկերներ, ընկեր գոյութիւն չունի» արտայայտութիւնը: Նաեւ Կանտի համաձայն, ճշմարիտ ընկերութիւնը իր «բիւրեղութեամբ եւ ամբողջականութեամբ» անհասանելի է: Այսուհանդերձ, բարոյական պարտաւորութեան տակ երկու ընկերներ կրնան մտերմանալ, բարոյական բարի կամքով եւ փոխադարձ սիրով ու յարգանքով:

²⁰ Պարտաւորութիւն (անգլ.՝ Duty, գերմ.՝ Pflicht) հասկացութիւնը, ընդհանրապէս փիլիսոփայութեան եւ մասնաւորաբար բարոյագիտութեան ոլորտներէն ներս կը նշանակէ ներքին բարոյական օրէնքէն (անգլ.՝ Moral Law, գերմ.՝ Sittengesetz) յառաջացած ինքնակոչ եւ անձնուրաց վարմունքը, որ կը կատարուի հարկադրաբար, ինչպէս նաեւ կրնայ անհատ մը սպասուիլ կամ պահանջուիլ: Իսկ պարտաւորութենէն յառաջացած Կանտի բարոյագիտութիւնը կը կոչուի՝ *պարտագիտական բարոյագիտութիւն* (անգլ.՝ Deontological Ethics):

²¹ **Կանտի** «անպայմանական հրամայականը» (անգլ.՝ Categorical Imperative) ինքնին կանոն մը չէ, այլ՝ չափանիշ մը: Ով որ գիտնալ ուզէ, որ իր մտադրած կամ արդէն կատարած վարմունքը բարոյապէս ճիշդ է, պէտք է փորձէ այդ վարմունքը, որպէս ընդհանրականացած կանոն տեսնել եւ դատել՝ արդեօք կարելի՞ է այդ կանոնը, առանց հակասութեան կամ առարկութեան, որպէս *ընդհանուր կանոն* ընդունիլ եւ ընդունիլ տալ:

Կանտի համաձայն, բաւական դժուար է պահել՝ ընկերներու միջեւ գտնուող սիրոյ եւ յարգանքի հաւասարակշռութիւնը, որովհետեւ մինչ սէրը, իր ձգողութեամբ եւ հրապոյրով մօտեցնող յատկութիւն ունի, յարգանքը, իր դէպի ետ մղումով եւ վանումով՝ հեռացնող յատկութիւն մը կը պարզէ: Ասոր կողքին ընկերներու անհաւասար իրավիճակը խանգարիչ բարդութիւններ կրնայ ստեղծել:

Կանտի «անպայմանական հրամայականը» (Categorical Imperative), մաս կը կազմէ փիլիսոփայի «Պարտագիտական բարոյագիտութիւն» տեսութեան, ուր Կանտ կը ներկայացնէ «անպայմանական հրամայականի» հինգ բանաձեւեր, որոնցմէ երրորդը (մարդկութեան բանաձեւը), որ թէեւ ընդհանուր մարդկութիւնը նկատի ունի, սակայն անհրաժեշտ ու անպայմանական հրամայական մըն է, նաեւ ընկերութեան առնչուած:

Յիշենք այդ բանաձեւը.-

«Այնպէս վարուէ՛, որ դուն մարդկութիւնը, քու անձի եւ ուրիշ անձի համար, երբեւիցէ, որպէս նպատակ եւ երբեք լոկ որպէս միջոց օգտագործես»:

Բանաձեւին մէջ յիշուած «ուրիշ»ը, կրնայ քու ընկերը ըլլալ, զոր երբեք պէտք չէ շահագործել եւ որպէս միջոց օգտագործել, քու նպատակներուդ հասնելու կամ քու նախասիրութիւններդ գոհացնելու համար:

Կանտի համար յստակ է, որ մարդը ընկերային կենդանի էակ (յուն.՝ zoon politikon) մըն է եւ մէկ կողմէ պահանջը ունի իր մասին արտայայտուելու, բայց միւս կողմէ կը վախնայ, որ ուրիշներ իր արտայայտութիւնները կը շահագործեն: Այս պատճառով իր միտքերուն մէկ մասը (մանաւանդ՝ այլ մարդոց հանդէպ ունեցած իր կարծիքները կամ կրօնական իր հակումները) իր մէջ կը պահէ: Այսուհանդերձ մարդ կը փնտռէ այնպիսի անձ մը, որուն հանդէպ վստահութիւն ունենայ եւ կարենայ ազատօրէն արտայայտուիլ, զանազան մտածումներու շուրջ կամ անոր վստահիլ իր անձնական գաղտնիքները: Եթէ գտնէ այդ յարմար անձը, կ'ընկերանայ անոր հետ եւ իր անձնական մտածումներուն հաղորդակից կը դարձնէ զայն, պայմանով որ վստահելի այս յարբերութիւնը փոխադարձ ըլլայ: Նմանօրինակ ճշմարիտ ընկերութիւն մը, սակայն, իր «բիւրեղութեամբ եւ ամբողջականութեամբ» անհասանելի կամ հազուադիւր է:

Կանտի համար յստակ է նաեւ, որ մարդը, որպէս ընկերային կենդանի էակ, իր մէջ կը կրէ բնական մարդասիրութիւն²² (Philanthropy) մը, որ համայն մարդկութեան հանդէպ տածած սէրն է: Այստեղ կարելի է ընդհանրապէս գտնել.- ազնուութիւն, քաղաքավարութիւն, չափաւորութիւն, զրուցա-

²² Մարդասիրութիւն հասկացութիւնը, կ'ընդգրկէ՝ մարդասիրական մտածելակերպն ու վարքագիծը, իսկ սէրը կ'ընդգրկէ ողջ մարդկութիւնը: Մարդասիրութիւն (անգլ.՝ Philanthropy, գերմ.՝ Philanthropie) եզրը ծագում առած է յունարէնէն (Philanthrōpía, ուր ánthrōpos = մարդ էւ philos = ընկերային սէր):

սիրութիւն, հիւրասիրութիւն, փոխըմբռնում եւ որոշ չափի մերձեցում: ... Այստեղ ընկերը պէտք է զանազանուի համայն մարդկութենէն, որովհետեւ ընկերը շատ աւելի մտերիմ ու հարազատ իմաստ մը ունի:

Ընկերութիւնը, ուրեմն, մարդու պարտաւորութիւնն է՝ ինքնիրեն հանդէպ եւ ուրիշներուն հանդէպ: Այլ խօսքով, մարդ պէտք չէ ընկերային համակարգէն հեռանայ կամ հրաժարի ընկեր ունենալէ եւ ինքզինք մեկուսացնէ:

Ճշմարիտ ընկերութիւնը, որ ինչպէս նշեցինք, փոխադարձ վստահութեան, սիրոյ ու յարգանքի ամբողջութիւնն է՝ տրամադրութիւն կը բարձրացնէ, կը քաջայերէ, կը մխիթարէ, յենարան կը պարգեւէ եւ յոյս կը ներշնչէ:

Անապահովութեան, վտանգի ու ընդհանրապէս կեանքի զանազան դժուարին իրավիճակներու մէջ, ճշմարիտ ընկերութիւնը՝ կայունութեան ապաստան մըն է եւ յաճախ այդ դժուարութիւններէն փրկութիւնը:


ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՂԵԱՆԵԱՆ
Գերմանիա



ՆՇԱՆԱԻՈՐ ԽՕՍՔԵՐ Ընկերոջ ու Ընկերութեան մասին

- **Արիստոտէլ** (յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.)-
«Առանց ընկերոջ կեանքը շատ ձանձրալի է . . . քանի որ ընկերը երկրորդ «ես» մըն է»:
- **Գիկերոն** (հռոմ.՝ Marcus Tullius Cicero, 106 – 43 մ.թ.ա.)-
«Ապահով ընկերոջ, կարելի է ճանչնալ, սեփական դժբախտութեան ու անապահով իրավիճակին մէջ»:
- **Լ. Ա. Սենեկա** (հռոմ.՝ Lucius Annaeus Seneca, 4 մ.թ.ա. – 65 թ.)-
«Երկա՛ր մտածելու է, արդեօք կրնա՞ս ինչ որ մէկուն ընկեր դարձնել»:
- **Ֆ. Լա Ռոշֆուկո** (ֆրնս.՝ François de La Rochefoucauld, 1613 – 1680 թ.)-
«Աւելի ամօթալի է սեփական ընկերներուն չվստահիլը, քան անոնց կողմէ խաբուած կամ դաւաճանուած ըլլալը»:

- **Ֆ. Վոլտեր** (ֆրնս.՝ François Marie Voltaire, 1694 – 1778 թ.) .-
 «Լաւ ընկերը շատ աւելի կ'արժէ, քան աշխարհի փառքը»:
- **Ա. Շոպենհաուր** (գերմ.՝ Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.).-
 «Ա՛յն, որ ձեր թշնամին պէտք չէ իմանայ, մի՛ յայտնէք ձեր ընկերոջ»:
- **Արաբական ասացուածք.**-
 «Թշնամիս թշնամին, իմ ընկերն է»:
- **Չինական ասացուածք.**-
 «Խելացի թշնամին գերադաս է՝ յիմար ընկերոջմէն»: Կամ՝
 «Յիմար ընկերը աւելի մեծ վնաս է, քան իմաստուն թշնամին»:
- **Ռուսական ասացուածք.**-
 «Երբեմնի, նախկին ընկեր մը, շատ աւելի վատ է՝ քան թշնամին»:
- **Գերմանական ասացուածք.**-
 «Ընկերոջդ ծածուկ պատժէ, բայց հրապարակայնօրէն գովարանէ»:
 «Աւելի լաւ է բացայայտ թշնամին, քան երկդիմի ընկերը»:
- **Հայկական ասացուածք.**-
 «Ըսէ՛՛ ո՞վ է ընկերդ, ըսեմ՝ ով ես դուն»:



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**ՍԱՐԳԻՍ ՔԷՀԵԱԵԱՆԻ
ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
ԱՐԺԷՔԱԲՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ**

Թէեւ աշխարհի միլիոնաւոր բարեպաշտ մարդիկ ամէն օր տէրունական աղօթքի միջոցով յոյսով դիմում են Աստծուն, շնչալով՝ «Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն», այդուհանդերձ, առայժմ փորձութիւնները տարբեր չարիքների ու աղէտների (բնական ու արհեստածին) տեսքով անպակաս են մարդկութեան կեանքից: Իբր քիչ էր համաշխարհայնացման (Globalisation) գործընթացներու պատճառով յառաջացած բազմաբնոյթ (տնտեսական, սոցիալ-քաղաքական, էթնիկական, հումանիտար եւ այլն...) դժուարութիւնները, անսպասելիօրէն աւելացաւ եւս մէկը՝ պսակավիրուսի համաճարակը (թագավարակը), որը պարզապէս անակնկալի բերեց մարդկութեանը՝ նրան կանգնեցնելով գոյացական (էկզիստենցիալ, Existential) ճգնաժամի եւ բարոյական երկընտրանքի առջեւ: Անշուշտ, փորձութիւնները տրուում են մարդկանց՝ ստուգելու նրանց տեսակային յատկութիւնների կայունութիւնը, մարդկային մտքի հզօրութիւնը, դժուարութիւնները միասնաբար յաղթահարելու, ապրելու եւ արարելու նրանց անկոտրում կամքն ու վճռականութիւնը, հաստատելու այն իրողութիւնը, որ մարդկութիւնը մի մեծ ընտանիք է, որի անդամները ո՛չ թէ առանձին առանձին, այլ միայն համախմբուած կարող են յաղթահարել ցանկացած դժուարութիւն: Եւ մարդկային քաղաքակրթութեան պատուհասած փորձութիւնների յաղթահարման պատմութիւնը ցոյց է տալիս, որ սպասելի ու անսպասելի մարտահրաւէրներին դիմակայելու համար անհրաժեշտ է, որ միջանձնական, միջազգային ու միջպետական գործունէութեան հիմքում ընկած լինեն համամարդկային արժէքներն ու ընդհանրական բարոյականութեան սկզբունքները, որ ազգերի ու պետութիւնների միջեւ տարբերութիւններն ո՛չ թէ պէտք է դառնան հակադրութիւնների ու հակամարտութիւնների, այլեւ համերաշխութեան ու միասնութեան պատճառ, որ անհրաժեշտ են ո՛չ միայն գրեթէ բոլորի շահերը հաշուի առնող քաղաքական, տնտեսական, սոցիալական քաղաքականութիւն, այլեւ խնդիրների լուծման նոր մեթոդաբանական գործիքակազմ, նոր մօտեցումներ, նորովի մեկնաբանուած մարդասիրական

գաղափարներ եւ ընդհանրական բարոյական արժէքներ: Սրա հետ միաժամանակ, հարկաւոր է դրանց մասին բարձրաձայնել, ուսումնասիրել բարոյագիտական այնպիսի հարցեր, որոնք ունեն թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական նշանակութիւն, եւ այդպիսի ուսումնասիրութիւնների արդիւնքները հանրամատչելի ձեւերով ներկայացնել հանրութեան:

Այս տեսանկիւնից, ողջունելի է մասնագիտութեամբ բժիշկ, կոչումով իմաստասէր Սարգիս Քէհեաեանի «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» աշխատութեան արդէն երկրորդ հրատարակութիւնը¹, որ նշանակալից երեւոյթ է հայ բարոյագիտական մտքի պատմութեան մէջ:

Առաջին հրատարակութեան համեմատ, երկրորդը բովանդակային առումով շատ աւելի հարուստ է: Հեղինակը վերստուգել ու խմբագրել է որոշ բաժիններ, կատարել լրացումներ ու յաւելումներ, ներառել նոր գիտաճիւղեր ու հասկացութիւններ:

Ինչպէս հեղինակն է իր գրքի յառաջաբանում ներկայացնում, վերստուգուած ու մասամբ նոր խմբագրուած են (մէջբերում եմ).-

Մաս – 1, «Ներածութիւնը» (էջ 21),

Մաս – 2, «Բարոյագիտութեան պատմութիւնը» (էջ 37),

Մաս – 3, «Մետա-բարոյագիտութիւնը» (էջ 126),

Մաս – 4, «Բարոյագիտութեան հիմնաւորումը» (էջ 139),

Մաս – 5, «Բարոյագիտութեան տեսութիւնները» (էջ 156),

Մաս – 6, «Բարոյագիտութեան ֆնկցիոնալութիւնը» (էջ 231):

Մաս – 7, «Կիրառական բարոյագիտութիւնը» (Applied Ethics, էջ 239) բաւական ընդարձակուած ու վերստուգուած է:

Բժշկական բարոյագիտութիւն բաժնին մէջ, որոշ մանրամասնութեամբ քննարկուած են հետեւեալ նոր ու այժմէական նիւթերը.-

– Համասեռականութիւն (Homosexuality) եւ սեռային այլ հարցեր,

– Համաճարակ (Pandemic) եւ առողջապահական հարցեր:

Ծինաբարոյագիտութենէն (Genethics) առաջ, Կենսաբարոյագիտութիւն (Bioethics) բաժինը եւս ընդարձակուած է, հոն աւելցած են երկու այժմէական հետեւեալ նիւթերը.-

– Անասուններու բարոյագիտութիւնը (Animal Ethics) եւ

– Բնապահպանութեան բարոյագիտութիւնը (Environmental Ethics):

Այնուհետեւ, որպէս նոր նիւթ, այս 7-րդ մասի վերջաւորութեան կը քըննարկուի՝ ընտանիքի բարոյագիտութիւնը (Family Ethics):

¹ Տե՛ս Սարգիս Քէհեաեան, «Բարոյագիտութիւն – փիլիսոփայական ակնարկ», 2-րդ (վերստուգուած եւ ընդարձակուած) հրատարակութիւն, 632 էջ, Անթիլիաս, 2021:

Մաս – 8, որ բոլորովին նոր մաս մըն է (էջ 284), կը կրէ «Արեւելեան կրօնափիլիսոփայութեան բարոյագիտութիւն» ("Ethics in eastern religious philosophy") ընդհանուր վերնագիրը: Այստեղ որոշ մանրամասնութեամբ քննարկուած են ասիական չորս երկիրներու՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի եւ Իրան/Պարսկաստանի մէջ ծնունդ առած ապա լայնօրէն տարածուած գլխաւոր կրօնափիլիսոփայութիւնները (թիւով՝ 10) եւ իրենց յատուկ բարոյագիտութիւնը:

Մաս – 9, «Բարոյագիտութեան հիմնական հասկացութիւններ» (էջ 367) մասին մէջ, վերանայուած եւ մասամբ նոր խմբագրուած են հասկացութիւնները, ինչպէս նաեւ անոնց վրայ աւելցած են նոր հասկացութիւններ, ընդհանուր թիւը հասցնելով 33-ի:

Մաս – 10, «Յաւելուած» (էջ 528) մասի մէջ, մասնաւորաբար ճոխացած են անուններու եւ բառերու զոյգ ցանկերը: Անձնական անուններու ցանկը կը բովանդակէ 255 անուն, իսկ բառացանկը՝ 1430 եզրոյթ: Վերջաւորութեան, առանձին բաժնով ու այբբենական կարգով կը նշուի «Արեւելեան կրօնափիլիսոփայութեան եզրերը, աստուածներն ու անունները» ցանկը²:

Որո՞նք են գրախօսուող աշխատութեան արժանիքները:

Առաջին.–

Հարկ է նշել, որ մեզանում առհասարակ սակաւ են բարոյագիտական բնոյթի հետազօտութիւնները, թէեւ մենք «բարոյական աւանդոյթներով ապրող ազգ ենք», հակուած ենք իրականութիւնը իմաստաւորել՝ առաջին հերթին բարոյագիտական հասկացութիւններով, երեւոյթներն ու իրադարձութիւնները գնահատել բարոյական արժէքների տեսանկիւնից, հայոց պատմութեան մէջ առանձնացնել «բարոյական» յղթանակներ, բարոյականութեան դասեր տալ ուրիշներին, եւ այլն...: Գուցէ դրա հետեւանքն է այն վիճակը, որ մենք ոչ միայն չունենք բաւարար տեսական գիտելիքներ բարոյագիտութեան, ազգային բարոյական աւանդոյթների վերաբերեալ, այլեւ, լինելով անձնապաշտ ու ձեւապաշտ, յաճախ պարզապէս խուսափում ենք մասնակցել կենսական նշանակութիւն ունեցող բարոյական հարցերի քննարկմանը՝ թաքնուելով կեղծ աւանդապահութեան ու կաղապարուած դիրքորոշումների խրամատներում: Սարգիս Քէհեանի բարոյագիտութեան գիրքը հնարաւորութիւն է տալիս լրացնել այդ բացը՝ հարստացնելով բարոյագիտութեան մասին մեր ունեցած գիտելիքների պաշարը:

Երկրորդ.–

Գրախօսուող աշխատութիւնն ունի հանրագիտարանային բնոյթ, այսինքն՝ այս գրքի միջոցով, ընթերցողը կարող է ամբողջական ու համակող-

² Անդ, էջ 15-16:

մանի պատկերացում կազմել համաշխարհային բարոյագիտական մտքի զարգացման հիմնական փուլերի, բարոյագիտութեան տեսութիւնների, նշանաւոր բարոյագէտ-փիլիսոփաների ուսմունքների, բարոյագիտութեան տարբեր ոլորտների եւ բարոյագիտական հիմնաւորումների ու բարոյագիտական հասկացութիւնների մասին: Հարկ է նշել, որ եթէ գրքում բարոյագիտական մտքի պատմութիւնը հասկանալի պատճառներով շարադրուած է համառօտ, ապա բարոյագիտական տեսութիւններն ու հասկացութիւնները՝ անհամեմատ ընդարձակ են: Օրինակ, «պարտագիտութիւն» բարոյագիտութեան տեսութեանը յատկացուած է աւելի քան 20 էջ (էջ 160–180), ինչը բաւարար է լիարժէք պատկերացում ունենալու այդ տեսութեան առանցքային գաղափարների ու սկզբունքների վերաբերեալ եւ թերեւս հաստատելու հեղինակի նախասիրութիւնը՝ ընդհանրապէս գերման փիլիսոփայ Կանտի նկատմամբ:

Երրորդ.–

Թէեւ գրախօսուող գրքում գերակշռում է պատմողական ու տեսական նիւթը, այնուհանդերձ հեղինակը «Կիրառական բարոյագիտութեան» (էջ 239) 7-րդ մասում, ներառել է գործնական ու այժմէական նշանակութիւն ունեցող բարոյագիտական այնպիսի ճիւղեր, ինչպիսիք են «բժշկութեան բարոյագիտութիւնը» (որում քննարկուած են այլ նիւթերու կողքին, նաեւ՝ համասեռականութեանը, համաճարակին, ընդհանուր առողջապահութեանն աղերսուող տարբեր հարցեր), «կենսաբարոյագիտութիւնը», «ծինաբարոյագիտութիւնը», բնապահպանական ու ընտանիքի բարոյագիտութիւնները, եւ այլն...: Այս առումով հեղինակը, որպէս բժիշկ, իրաւացիօրէն նկատում է, որ հետաքրքրութիւնը «կիրառական բարոյագիտութեան» նկատմամբ գնալով աճում է (մէջբերում եմ):-

«20-րդ դարու երկրորդ կեսին սկսեալ, տարբեր բնագաւառներու յատուկ կիրառական բարոյագիտութիւնը աւելի տարածուեցաւ, որովհետեւ արդիական ընկերութիւնները բարոյագիտութենէն, զանազան հարցերու մասին՝ բարոյական գործնական ու կիրառելի դիրքորոշումներ կը պահանջէին: Եթէ սկզբնական շրջանին, բժշկական ու կենսաբանական բնագաւառներու բարոյագիտութիւնը հետաքրքրութեան կիզակեղրոն կը հանդիսանար, շուտով սակայն, ասոնց վրայ կու գային աւելնալ բազմաթիւ այլ բնագաւառներու յատուկ բարոյագիտութիւնը, ինչպէս՝ տնտեսական, բնապահպանական, ծինաբանական, ընտանեկան, քաղաքական ու գիտական զանազան ճիւղերու վերաբերեալ կիրառական բարոյագիտութիւնը»:

Բնագաւառներու արագօրէն բազմացման եւ հարցերու զանազանութեան հետ, ժամանակի ընթացքին, մեծապէս փոփոխութեան ենթարկուեցան նաեւ կիրառական բարոյագիտութեան կարեւորութիւնն ու դիմագիծը...»³:

³ Անդ, էջ 239:

Զորքորդ.–

Սարգիս Քէհեաեանի «Բարոյագիտութիւն – փիլիսոփայական ակնարկ» գիրքը ուշագրաւ է նաեւ այն առումով, որ հեղինակը օտարահունչ փիլիսոփայական-բարոյագիտական եզրոյթները փոխարինում է հայերէն համարժէք եզրոյթներով, իսկ եթէ որոշները բոլորովին նոր են յայտնուել շրջանառութեան մէջ, ապա հենց ինքն էլ փորձում է դրանք թարգմանել ու գտնել հայերէն համապատասխան տարբերակը:

Օրինակ, մեզանում յաճախ առանց թարգմանելու օգտագործւում են՝ «մոնիզմ» (Monism), «դուալիզմ» (Dualism), «պլուրալիզմ» (Pluralism), «դեոնտոլոգիա» (Deontologia), «էմոտիվիզմ» (Emotivism), «էփտանազիա» (Eutanasia) եւ այլ եզրոյթները, մինչդեռ հեղինակը ներմուծում է նրանց հայերէն իմաստալի համարժէքները՝ «միապաշտութիւն», «երկապաշտութիւն», «բազմապաշտութիւն», «պարտագիտութիւն», «յուզապաշտութիւն», «հեշտամահութիւն» եւ այլն...:

Ի հարկէ, երբեմն հանդիպում ենք ըստ իս նաեւ ոչ այնքան յաջող թարգմանութիւնների (օրինակ՝ «ֆունդամենտալիզմ» (Fundamentalism), «հիմնականապաշտութիւն», գուցէ աւելի ճիշտ կը լինէր «հիմնապաշտութիւն» եզրոյթը. կամ «լեգալիզմ» (Legalism), «օրինականութիւն», գուցէ՝ «լեգիզմ» – «օրինապաշտութիւն»):

Հիմնգերքորդ.–

Առհասարակ հանրագիտարանային բնոյթի աշխատութիւններում (առաւել եւս եթէ դրանք նախատեսուած են կրթական հաստատութիւնների համար, որպէս ուսումնա-օժանդակ ձեռնարկներ) շատ կարեւոր է ոչ միայն նիւթի գրագէտ ընտրութիւնը, մտքի դիպուկ ձեւակերպումները, այլեւ ընթերցողի համար ասելիքը պարզաբանող օրինակներով, յստակ տրամաբանութեամբ եւ մատչելի ու գրաւիչ լեզուով շարադրանքը: Այս առումով, գրախօսուող գիրքը գտնւում է շահեկան վիճակում:

Հեղինակ Սարգիս Քէհեաեանին յաջողուել է խուսափել խճողուած ու մանուածապատ արտայայտութիւնների օգտագործումից, բառերի ու մտքերի անիմաստ թանձրացումներից եւ նիւթը շարադրել լաւագոյն դասագրքերին բնորոշ պարզութեամբ ու յաւելեալ բացատրութիւն չպահանջող մեկնաբանութեամբ: Ուսանելի է յատկապէս նիւթի մատուցման ձեւը: Օրինակ, լուսաբանելով «Օգտապաշտութիւն» բարոյագիտական տեսութիւնը, հեղինակը նախ ստուգաբանում ու սահմանում է «օգտապաշտութիւն» (Utilitarianism) եզրոյթը, շարադրում դրա զարգացման պատմական ընթացքը, թրւարկում այդ տեսութեան հիմնադիրներին ու ներկայացուցիչներին, ներկայացնում ինչպէս դասական օգտապաշտութեան հիմնական սկզբունքները, այնպէս էլ այդ տեսութեան այլ տարբերակները, օրինակներով պարզաբանում հիմնական սկզբունքների բովանդակութիւնը, իսկ ամենավերջում ներկայացնում այդ տեսութեան վերաբերեալ առկայ քննադատական դիտո-

դուժիւնները: Այլ խօսքով՝ ընթերցողը գրեթէ ամբողջական պատկերացում է կազմում այդ բարոյագիտական տեսութեան պատմութեան, սկզբունքների, առաւելութիւնների ու թերութիւնների մասին:

Անշուշտ, ինչպէս ամէն մի աշխատութիւն, այնպէս էլ Սարգիս Քէհեանի աշխատութիւնն ունի լաւացնելու տեղ: Անձամբ, ճանաչելով հեղինակին, համոզուած եմ, որ նա արդէն մտածում է իր գրքի երրորդ հրատարակութեան մասին: Այդ կապակցութեամբ նախ նրա ուշադրութիւնը կը հրաւիրէի երկրորդ հրատարակութեան որոշ վրիպակների վրայ, այնուհետեւ կ'անեմ մի քանի առաջարկ:

Այսպէս, գրախօսուող գրքում ամէն անգամ երբ յիշատակում է որեւէ մտածող կամ փիլիսոփայ, ներկայացնում է նաեւ նրա օտարալեզու անունումը, որը հետագայ էջերում նոյնութեամբ կրկնում է, ինչը աւելորդութիւն մըն է: Օրինակ, էջ 22-ում, երբ առաջին անգամ կարդում ենք՝ Պլատոն (Plato, յուն.՝ Πλάτων, 427 – 347 մ.թ.ա.), այնուհետեւ այդ նոյն ձեւով Պլատոնը ներկայացնում է նաեւ այլ էջերում:

Թէեւ հեղինակը բծախնդիր է անունների ու եզրոյթների գրելաձեւի ընտրութեան հարցում, այդուհանդերձ երբեմն միեւնոյն անունը գրում է տարբեր ձեւերով (օրինակ, մի դէպքում գրում է՝ Աւրելիոս Օգոստինոս, իսկ մի այլ դէպքում՝ Օգոստինոս Երանելի):

Իսկ ցանկութիւն-առաջարկներս հետեւեալները կարող են լինել.–

• Գիրքը վերնագրուած է «Բարոյագիտութիւն – փիլիսոփայական ակնարկ» անունով, ինչը ենթադրում է, որ հեղինակը փիլիսոփայութեան տեսանկիւնից է ներկայացնում բարոյագիտութիւնը: Հեղինակը գործածում է նաեւ «փիլիսոփայական բարոյագիտութիւն» բառակապակցութիւնը, ինչը, ըստ իս կարիք ունի լրացուցիչ բացատրութեան: Նման մօտեցման դէպքում ծագում են մի շարք հարցեր, ինչպէս օրինակ՝ որո՞նք են «փիլիսոփայական բարոյագիտութեան» իւրայատկութիւնները, միշտ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բարոյագիտութիւնը դարձել է բաւականին ինքնաբաւ գիտակարգ եւ ծաւալային առումով կուտակուել ու անընդհատ կուտակում է այնքան նիւթ, որ արդէն դժուար է նոյնիսկ մէկ գրքով համառօտ ներկայացնել:

Այս հարցին, որոշ չափով, պատասխանում է նոյնինքն հեղինակը, իր գրքի առաջին մասի («Ներածութիւն») մէջ, մէջբերում եմ⁴. –

«Բարոյագիտութիւնը, որպէս փիլիսոփայական գիտական ճիւղ, կառուցուած է բանականութեան սկզբունքին վրայ. սկզբունք մը, որ ըմբռնելի է բանաւոր էականքէն եւ կը բխի Գերագոյն Բարիի (յուն.՝ το αγαθον, լատ.՝ summum bonum, անգլ.՝ The Highest Good, գերմ.՝ das höchste Gut) վսեմ գաղափար»

⁴ Անդ, էջ 29-30:

րեն: Այս իմաստով ան կը զանազանուի դասական *աստուածաբանական բարոյագիտութենէն* եւ այլ բարոյականութիւններէ, որոնց համար հիմք կը ծառայեն զանազան կրօնական սկզբունքներ եւ այլ հեղինակութիւններէ կամ ասանդութիւններէ բխող կողմնորոշումներ:

Մարդկային վարմունքը կը յառաջանայ ո՛չ միայն կենսական (բնագոյի միջոցով), պատմական (պատմական կանոններով), ընկերային (ընկերային յարաբերութիւններով) ու մշակութա-կրօնական (բնագանցական կարգով) ազդակներէն, այլեւ ու մանաւանդ ան կը յառաջանայ մարդու *ազատութեան* ազդակէն: Այլ խօսքով, փիլիսոփայական բարոյագիտութիւնը, առանց այլ միջոցներու եւ կարգերու դիմելու, կը հիմնուի մարդկային բանականութեան սկզբունքին վրայ. այս պատճառով ալ ան ճանաչողական բնոյթ կը կրէ, այսինքն՝ անդրադարձային նկարագիր ունի եւ ճիշդ այս պատճառով ալ կարելի է հարցաքննութեան ու մանրակրկիտ գնումի ենթարկել:

Այս իմաստով, ինչպէս վերը յիշուեցաւ, ան կը զանազանուի դասական *աստուածաբանական բարոյագիտութենէն*, որ կը հիմնուի կրօնի ու եկեղեցւոյ կողմէ ընդունուած հաւատքին վրայ, ուր փոխան ապացոյցներու առանձնաշնորհում կը ստանայ՝ աստուածայայտնութեան վարդապետութիւնը: Այս իմաստով, եթէ բաղդատենք փիլիսոփայական եւ աստուածաբանական բարոյագիտութիւնները, պիտի տեսնենք, որ փիլիսոփայական բարոյագիտութիւնը՝ կը հիմնաւորուի գիտութեամբ՝ փոխան հաւատքի, պարզաբանութեամբ՝ փոխան յայտնութեան եւ քննարկումով՝ փոխան հնազանդութեան:»

• *Հեղինակը, գրքի երկրորդ հրատարակութիւնում աւելացրել է «Արեւելեան կրօնափիլիսոփայութեան բարոյագիտութիւն» (էջ 284 – 366) 8-րդ մասը, ինչը ճոխացրել է գրքի բովանդակութիւնը: Այդտեղ քննարկուած են ասիական 10 կրօնափիլիսոփայութիւններ եւ նրանց բարոյագիտութիւնը. Հինդուականութիւն (Hinduism), Ջայինականութիւն (Jainism), Բուդդայականութիւն (Buddhism), Սիկհականութիւն (Sikhism), Դաոյականութիւն (Daoism), Կոնֆուցիականութիւն (Confucianism), Օրինականութիւն (Legalism), Մոհականութիւն (Mohism), Շինտոյականութիւն (Shintoism) եւ Զրադաշտականութիւն (Zoroastrianism):*

Կարծում եմ, որ յաջորդ հրատարակութեան դէպքում նպատակայարմար է մի քանի էջ յատկացնել նաեւ «հայ բարոյագիտական մտքին»:

Քանի որ այս ցանկութիւն-առաջարկը ժամանակատար է եւ մօտակայ տարիներին գուցէ անիրականալի (հարկ է նշել, որ թէեւ թէ՛ միջնադարեան եւ թէ՛ հետագայ դարերի հայ փիլիսոփայական միտքը առաւելապէս ունեցած է բարոյագիտական բնոյթ, սակայն դրա վերաբերեալ շատ քիչ են վերլուծական անդրադարձութիւնները⁵, ամենայն դէպս հրապարակի վրայ չկայ

⁵ *Տե՛ս*, օրինակ, *Զաքարյան Ս.Ս.*, «Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքը», Երեւան, 2020 (196 էջ):

ամբողջական ու համապարփակ մի հետազոտութիւն), ուստի հեղինակին պիտի առաջարկէի ընտրել հայկական նիւթը ներկայացնելու թերեւս այլ ձեւեր:

Օրինակ, մաս 9-ի մէջ, բարոյագիտական հիմնական հասկացութիւնները վերլուծելուց յետոյ, երբ նա մէջբերում է դրանց վերաբերեալ նշանաւոր կամ անծանօթ ու անանուն մտածողների ասոյթներն ու ժողովրդական ասաց-
 ուածքները, ապա կարող է մէջբերել նաեւ այդ նիւթերի վերաբերեալ հայ
 մտածողների մտքերը կամ հայկական ժողովրդական ասացուածքները⁶: Սրա
 կողքին, նա կարող է քննարկել հայութեանը յուզող այնպիսի կենսական հար-
 ցեր, ինչպիսիք են, օրինակ՝ արտագաղթին եւ գաղթին, ազգային արժէքնե-
 րի պահպանմանը, օրինապահութեանը, պետական մտածողութեանն առնչը-
 ւող կիրառական բարոյագիտական զանազան հարցերը:


Աւարտելով գրախօսութիւնս, ցանկանում եմ մէկ անգամ եւս շեշտել, որ Սարգիս Քէհեանի կողմից նոր լոյս է տեսել բարոյագիտութեան վերա-
 բերեալ արժէքաւոր եւ 632 էջանոց մի աշխատութիւն՝ «Բարոյագիտութիւն
 – փիլիսոփայական ակնարկ» վերնագրով, որ օգտակար կարող է լինել ո՛չ
 միայն կրթական բարձրագոյն հաստատութիւններում սովորող ուսանողնե-
 րին, այլեւ բոլոր նրանց համար, որոնք հետաքրքրում են բարոյագիտու-
 թեան պատմութեան, հիմնաւորման, տեսութիւններին, հասկացութիւննե-
 րին եւ բարոյագիտական գաղափարների կիրառելիութեան հարցերով:

ՍԷՅՐԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ)
 փիլիսոփայութեան պատմութեան,
 տեսութեան եւ տրամաբանութեան
 ամբիոնի վարիչ, փիլիսոփայական
 գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր

⁶ Տե՛ս, օրինակ, Միրզոյան Վ., «Առաձանին՝ գործնական փիլիսոփայութիւն», Երեւան, 2019 (432 էջ):

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆՆԵՐ




ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ ՑԱՆԿԱԳՐՈՒՄԻ «ԼԻՐԱՆԱՀԱՀԱՅ ԳԻՐՔԸ...» (Յաւելուած)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի 102-րդ հրատարակութիւնը՝ «Մատենագիտութիւն Ընդհանր Ցուկնաբանութիւն «Լիբրանահայ Գիրքը...» (Յաւելուած)», աշխատութեամբ՝ Ժիրայր Դանիէլեանի եւ խմբագրութեամբ՝ Կարօ Յովհաննէսեանի:

Հատորը կը պարունակէ յաւելումներ, մատնանշումներ, սրբագրութիւններ եւ անհրաժեշտ ցանկեր, որոնց մասին Դանիէլեան իր յառաջաբանին մէջ կը մանրամասնէ դիտել տալով, որ այս աշխատանքը կու գայ ամբողջացնելու 2013 թուականին լոյս տեսած «Լիբրանահայ Գիրքը 1894-2012 Մատենագիտական Ցանկ» աշխատասիրութիւնը եւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի 27-րդ հատորին «Յաւելումներ. Լիբրանահայ Գիրքը. Մատենագիտական Ցանկ 1894-2012 հատորին» ուսումնասիրութիւնը: Այսպիսով, Դանիէլեան այս հրատարակութեամբ կը լրացնէ վերոնշեալ աշխատութիւններուն բացթողումները:

Շուրջ 200 էջերու մէջ ներկայացուած գործը ունի Նոր Անուններ, Հին Կրկրնութիւններ, Նոր Կրկնութիւններ, Հին Սրբագրութիւններ, Նոր Սրբագրութիւններ, Ցանկեր՝ Գիրքերու Ցանկեր եւ Անճանաչուներու Ցանկեր բաժինները:

Հատորէն օրինակներ կրնաք ապահովել Կաթողիկոսարանի գրախանութէն, ինչպէս նաեւ այցելելով www.ciliciabookstore.com կայքը:



**ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – Փիլիսոփայական Ակնարկ –
ETHICS – philosophical approach –**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն, Հոկտեմբերի կիսուն լոյս տեսաւ Գերմանիոյ մեր աշխատակից՝ Դոկտ. Սարգիս Քէհեանի բարոյագիտութեան վերաբերեալ վերոյիշեալ արժէքաւոր գիրքը, մեկենասութեամբ՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական բաժանմունքին:

632 էջնոց հատորը կը բովանդակէ յառաջաբան մը, վերջաբան մը եւ հետեւեալ տասը մասերը.-

1. Ներածութիւն, 2. Բարոյագիտութեան պատմութիւն, 3. Մետա-Բարոյագիտութիւն, 4. Բարոյագիտութեան հիմնաւորում, 5. Բարոյագիտութեան տեսութիւններ, 6. Բարոյագիտութեան քննադատութիւն, 7. Կիրառական բարոյագիտութիւն, 8. Արեւելեան կրօնափիլիսոփայութեան բարոյագիտութիւն, 9. Բարոյագիտութեան հիմնական 33 հասկացութիւններ եւ 10. Յաւելուած, ուր կը ներկայացուին՝ 255 անուններու ցանկը եւ 1430 եզրերու բառացանկը:

Ներկայանալի եւ համայնագիտարանի բնոյթ կրող այս գիրքը, որպէս ուսումնասօժանդակ ձեռնարկ, հասցէագրուած է նախ հայկական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու ուսանողութեան, ինչպէս նաեւ ընդհանրապէս բարոյագիտութեամբ հետաքրքրուող ընթերցասէր հասարակութեան:

Այս հրատարակութեան մասին, տե՛ս նաեւ Երեւանի Պետական Համալսարանէն պրոֆ. Սէյրան Զաքարեանի մանրամասն գրախօսականը, ՀԱՍԿի այս համարին մէջ (էջ 573):

Գիրքը կարելի է ձեռք ձգել հեղինակի համացանցի հետեւեալ հասցէին միջոցով kehyayans@hotmail.com, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի գրախանութի եւ կաթողիկոսարանի հետեւեալ առցանց կայքի միջոցներով.-

*bookstore@armenianorthodoxchurch.org
www.ciliciabookstore.com:*




ՄԱՏՆԱՀԵՏՔԵՐ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի թիւ 103-րդ հրատարակութեան կ'արժանանայ Պերճուհի Ալետեանի «Մատնակինտեր»-ը:

Հատորը կ'ամփոփէ Ալետեանին փորձութիւնները, ապրումներն ու ներաշխարհը՝ Սուրբոյ պատերազմին ընթացքին եւ անկէ ետք: Օրագիրի ոճով ներկայացուած սոյն հատորը ընթերցողը դէմ յանդիման կը դնէ աղէտներու հետեւանքով բխած մարդկութիւնը, ինչպէս նաեւ՝ հայութիւնը յուզող հարցերու հետ – գոյապայքար, ինքնութիւն, տուն հասկացողութիւն եւ այլն:

Գիրքը ունի չորս հիմնական բաժիններ՝ Պատերազմական Մթնոլորտ, Հրապարակագրական, Գեղարուեստական եւ Երգիծական, որոնք շուրջ 250 էջերու վրայ կը տարածուին: Հատորէն օրինակներ կրնաք ապահովել Կաթողիկոսարանի գրախանութէն կամ այցելելով www.ciliciabookstore.com կայքէջը:



ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի հրատարակութեամբ լոյս տեսաւ Մեծն Սուրբ Մակարի «Հոգեւոր Քարոզներ»ը՝ թարգմանութեամբ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանի եւ մեկենասութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին:

Շուրջ 350 էջերէ բաղկացած հատորը կը պարունակէ ճգնաւորական շարժումի հիմնադիր եւ Դ. դարու ընդհանուր քրիստոնէական կեանքի պատմութեան հոգեւոր աստղերէն Մեծն Մակարի խորհրդածութիւնները, որոնք, բովանդակութեան իմաստով, պարզ քարոզախօսական գրութիւններ չեն, այլ կը շօշափեն զանազան թեմաներ, ինչպէս՝ իմաստասիրական, հոգեբանական, աստուածաշնչական, վարքաբանական, այլաբանական, խորհրդաբանական, ընկերաբարոյական, խրատաբանական եւ դաստիարակչական:

Հատորին ճամբով ընթերցողը ոչ միայն կը սորվի սուրբին ունեցած կարողութիւններուն եւ իմաստութեան մասին, այլեւ կը ստանայ կեանքի զանազան փորձութիւնները դիմագրաւելու գաղտնիքը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**ՈԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ՀՈԳԵՒՐ ՏԵՐԸ ԱՅՑԵԼԵՑ
ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երկուշաբթի, 29 Նոյեմբերին, հինգ հոգիներէ բաղկացած կրօնական պատուիրակութեան հետ միասին, Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տերը այցելեց Անթիլիասի Մայրավանք: Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր կողքին ունենալով Շահան եւ Նարեկ Սրբազանները, եղբայրական սիրով ընդունեց Հոգեւոր Տերը:



Աւելի քան ժամ մը մտերմիկ գրոյց մը տեղի ունեցաւ երկու հոգեւոր պետերուն միջեւ՝ հայ ժողովուրդը, Հայաստանն ու Լիբանանը յուզող հարցերու շուրջ: Անոնք շեշտեցին եկեղեցիներու գործակցութիւնը ամրապնդելու, մեր ժողովուրդին միասնականութիւնը ամրացնելու եւ միասնաբար մեր ազգն ու հայրենիքը տագնապեցնող մարտահրաւերները դիմագրաւելու անհրաժեշտութիւնը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԵՄԻՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱԳԱՐԸ

Ուրբաթ, 3 Դեկտեմբերին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Արաբական Միացեալ Էմիրութեանց (Ա.Մ.Է.) Ազգային Տօնի 50 ամեակին առիթով, հետեւեալ շնորհաւորական նամակ մը յղեց երկրի նախագահ՝ վսեմաշուք Շէյխ Խալիֆա Պըն Չայետ Ալ Նահեանին:

Նորին Սրբութիւնը իր շնորհաւորական նամակին մէջ կը գրէ, որ Ա.Մ.Է. մէջ բնակութիւն հաստատած հայ գաղութը անբաժան մասը կը կազմէ Ա.Մ.Է. ընկերութեան եւ իր կարեւոր նպաստը կը բերէ յատկապէս անոր տնտեսութեան զարգացման:



ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆԵՑՈՒԿԸ ՀՐԱՄԱՅՈՒՄԵՆ Ե ԼԻՔԱՆԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻՆ

Երկուշաբթի, 20 Դեկտեմբերին, կարճ այցելութեամբ Լիբանան ժամանած Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) Ընդհանուր Զարտուղար՝ Անթոնիօ Կուրիերես, աւելի քան երկու ժամ տեւող հանդիպում մը ունեցաւ մարոնիթ, յոյն ուղղափառ, հայ, սիւննի, շիիթ եւ տիրզի համայնքներու հոգեւոր պետերուն հետ: Հանդիպումը սկսաւ ընդհանուր քարտուղարին բացման խօսքով, ուր ան յայտնեց՝ թէ միջազգային համայնքը մտահոգ է Լիբանանով, ան պետք է աւելին կատարէ Լիբանանին համար, եւ թէ ինք եկած է լսելու համայնքային ու քաղաքական ղեկավարներու տեսակետները եւ զանոնք համադրելով ներկայացնելու Մ.Ա.Կ.-ի յատուկ մարմիններուն:

Դռնփակ հանդիպումի ընթացքին համայնքապետերը յաջորդաբար խօսք առին եւ պարզեցին իրենց մտահոգութիւններն ու սպասումները:



Վեհափառ Հայրապետը Նիւ Եորքի ու Պեյրուֆի օդակայանին մէջ ընդհանուր քարտուղարին խօսքէն մեջբերում մը կատարելով ըսաւ, որ Դուք եկած էք Ձեր զօրակցութիւնը յայտնելու Լիբանանին. ա՛յս է Ձեր պատգամը Լիբանանին: Մեր պատգամն է Ձեզի՝ օգնեցէք Լիբանանին, որովհետեւ ծանր հիւանդ է Լիբանանը: Շարունակելով իր խօսքը, Վեհափառը ըսաւ, որ Լիբանանցիները եւ Լիբանանի բարեկամները խօսելով Լիբանանը դիմագրաւող տագնապներու մասին, կ'անդրադառնան անոնց հետեւանքներուն միայն՝ զգուշանալով անոնց տուն տուող հիմնական պատճառները քննելու: Ներկայ կացութիւնը պատահական եւ անակնկալ երեւոյթ մը չէ, այլ՝ տարիներու վրայ տարածուած բազմազան ու այլազան պատճառներու հետեւանք: Փաստօրէն կարելի չէ Լիբանանեան տագնապը լուծել առանց անդրադառնալու այդ հիմնական պատճառներուն: Ապա, ան չորս կէտերու մէջ հակիրճ կերպով անդրադարձաւ Լիբանանի տագնապներու ետին կանգնող պատճառներուն.-

Առաջին՝ Լիբանանի քաղաքական դրուածքին համայնքային դրութիւնը թէ՛ Լիբանանի հարստութիւնն է եւ թէ իր խոցելիութիւնը, որ առիթ կու տայ ուրիշներուն միջամտելու Լիբանանի ներքին հարցերուն: Արդ, ինչպէ՞ս կարելի է համայնքային դրութիւնը պահելով հանդերձ զայն դարձնել ապակեդրոն, թափանցիկ եւ համարատու:

Երկրորդ՝ քաղաքական պատասխանատուներուն յաճախ անպատասխանատու ու շահադիտական մօտեցումները, որոնք պատճառ դարձած են անարդարութեան ու փտածութեան: Ինչպէ՞ս կարելի է

պետական պաշտոններ ստանձնած մարդոց համար համարատուութեան յստակ ուղեգիծ ճշդել՝ ներառնելով նաեւ պատժական միջոցներ:

Երրորդ՝ Լիբանանի բարեկամ երկիրներէն սպասելի է, որ յարգեն Լիբանանի անկախութիւնն ու գերիշխանութիւնը՝ պահելով հանդերձ իրենց պատմական ու կրօնական յարաբերութիւնները:

Չորրորդ՝ Լիբանանը պետք է վերահաստատէ իր ինքնաճանաչումը իբրեւ պետութիւն՝ շեշտելով օրէնքի գերակայութիւնն ու պետութեան կեդրոնական հեղինակութիւնը:

Նորին Սրբութիւնը յայտնեց, որ յիշեալ եւ անչակից խնդիրները անհրաժեշտ է, որ քննարկուին Լիբանանցիներու կողմէ՝ լուրջ, պատասխանատու ու համապարփակ երկխօսութեան ճամբով:

Իր խօսքի երկրորդ բաժնին մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Մ.Ա.Կ.-ի դերակատարութեան: Ան ըսաւ, որ որոշ չափով ծանօթ ըլլալով Մ.Ա.Կ.-ի պատասխանատուութեան, կը խորհիմ, թէ երեք ուղղութեամբ ան կրնայ օգտակար դառնալ Լիբանանին, կարճաշունչ ու երկարաշունչ աշխատանքներով ու ծրագիրներու մշակումով: Այս շրջագծէն ներս Վեհափառ Հայրապետը յատկապէս շեշտեց հետեւեալ երեք կետերը.-

Ա) Անհրաժեշտ է, որ Մ.Ա.Կ.-ը կոչ ուղղէ միջազգային համայնքին եւ միջազգային կազմակերպութիւններուն՝ անմիջական օգնութիւն կատարելու Լիբանանին մասնաւորաբար մարդասիրական, ընկերային ծառայութեան, առողջապահական ու կրթական մարզերէն ներս:

Բ) Անհրաժեշտ է, որ Մ.Ա.Կ.-ը մղէ Լիբանանի կառավարութիւնը հիմնական բարեկարգութեան գծով անմիջական ու շօշափելի քայլեր առնելու, յառաջիկայ ընտրութիւններու թուականը ճշդելու եւ այս ուղղութեամբ նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկելու, ինչպէս նաեւ պետական կազմալուծուած կառոյցները վերակազմակերպելու եւ օգտակար դառնալու ժողովուրդի հիմնական կարիքներուն:

Գ) Անհրաժեշտ է, որ Մ.Ա.Կ.-ը յիշեցնէ Լիբանանի բարեկամ երկիրներուն, որ գործնապէս աջակից դառնան Լիբանանին, որպէսզի ան կարենայ իր վերջերը դարմանել, տնտեսութիւնը վերականգնել եւ իր քաղաքական դերը վերստանձնել յատկապէս Միջին Արեւելքէն ներս:

Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ այս բոլոր քայլերէն առաջ եւ անդին Մ.Ա.Կ.-ը պետք է զգուշացնէ միջազգային համայնքը, թէ խաղաղ ու բարգաւաճ Լիբանան մը կարելոր նպաստ մըն է մարդկային քաղաքակրթութեան, կրօններու ու մշակոյթներու երկխօսութեան ու գոյակցութեան. սակայն տագնապալից Լիբանան մը կրնայ ծանր հետեւանքներ ունենալ թէ՛ շրջանէն ներս եւ թէ՛ նոյնիսկ անդին:

Յայտնենք, որ պաշտօնական հանդիպումէն առաջ եւ յետոյ, Վեհափառ Հայրապետը առիթը ունեցաւ կարճ խօսակցութիւն մը ունենալու ընդհանուր քարտուղարին հետ՝ Հայաստանի ու Արցախի մասին:

ՏՕՆԱԿԱՆ

**ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿԻՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Օրհնութեամբ եւ տնօրինութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսարանիս «Կիլիկիա» Թանգարանին մէջ ի պահ դրուած Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին մասունքը դուրս բերուեցաւ եւ զետեղուեցաւ Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Արդարեւ, Ուրբաթ, 17 Դեկտեմբերին, Երեկոյեան Ժամերգութեան աւարտին, կատարուեցաւ նախատօնակը սրբոցն Յակոբ Մծբնայ Հայրապետին, Մարուգէ ճգնաւորին եւ Մելիտոս եպիսկոպոսին, մասնակցութեամբ վանաբնական եպիսկոպոսներու եւ միաբան հայրերու:

Նախատօնակի սկզբնաւորութեան, լուսարարապետ Սրբազան Հայրը, Ս. Խորանէն վար բերելով Ս. Յակոբի մասունքը՝ զետեղեց Մայր Տաճարի ատեանին մէջտեղ, ուր միաբան հայրեր Ս. Աւետարանն ու Ս. Խաչը համբուրելէ ետք, նաեւ ստացան սուրբին օրհնութիւնը՝ խնդրելով անոր բարեխօսութիւնը Աստուծոյ Միածին Որդիին մօտ, որպէսզի իրենք եւս իրենց ծառայութեան մէջ Ս. Յակոբի նման ըլլան հաստատակամ, իսկ հաւատքի առաքելութեան մէջ՝ ամրակուռ:



**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ՄԻԱՅԱԻ
«ՆԱՐԵԿԱՅԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՄԱՔԻՆ**

Շաբաթ, 25 Դեկտեմբերի առաւօտեան, Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբի փոքրիկները Անթիլիասի Մայրավանքի շրջափակին մէջ տօնախմբեցին Նոր Տարին:

Հաւաքի ընթացքին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անակընկալ կերպով միացաւ փոքրիկներուն եւ իր հայրական գուրգուրանքով ու հոգատարութեամբ բաժնեկից դարձաւ անոնց ուրախութեան:



Աւանդական կարկանդակի հատումէն ետք, «Նարեկացի» երգչախումբին անունով փոքրիկներէն երկու անդամ՝ քոյր-եղբայր, Վեհափառ Հայրապետին նուիրեցին Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին նմանակը:

Նոր Տարուան եւ մեր Փրկիչին Ս. Ծննդեան զոյգ տօներուն առիթով, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները փոխանցեց փոքրիկներուն ու անոնց ընտանիքներուն:

**Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕԼԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Ս. Ստեփանոս նախասարկալազի եւ նախավկայի առաքելութիւնը իր յատուկ դրոշմը ունի Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ: Մեր եկեղեցւոյ տօնացոյցը 25 Դեկտեմբերը նուիրուած է անոր յիշատակութեան, իբրեւ անշարժ տօն, որ հանդիսաւորապէս կը նշուի Հայ Եկեղեցւոյ բոլոր եկեղեցիներէն ներս:

Առ այդ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կիրակի, 26 Դեկտեմբերին, Անթիլիբասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ վկայակոչելով Ս. Ստեփանոսի կեանքը եւ խրատելով սարկալազները հետեւելու սուրբին օրինակին՝ ի մասնաւորի Քրիստոսի հանդէպ անոր անսահման սիրոյն եւ նուիրումին: Սրբազանը ըսաւ, որ նախասարկալազին սաղաւարտը հաւատքի փրկութեան նշանն է եւ, ուրեմն, սարկալազները պարտին օրինակ առնել սուրբին մէջէն ճառագայթող ճշմարտութենէն, սէրէն եւ անվախութենէն:

Պատարագէն ետք, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարանի դահլիճ, ուր տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր՝ Դպրեվանքի սարկալազներուն պատրաստութեամբ: Անոնք «Ստեփանոս Բաղդրիկ տատրակ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեցին դահլիճ: Աւետարանական ընթերցումէն, երգեցողութենէն եւ աղօթասացութենէն ետք, Բարշ. Շանթ Սրկ. Գատէհճեան սարկալազներուն անունով ուղերձ ընթերցեց: Ան ըսաւ, որ Սարկալազին էական դերը կը մնայ խոնարհ ծառայութիւնը: Այս աւիթով, եղբայրական կոչ ուղղեց հայ երիտասարդութեան՝ գալու եւ խտացընելու շարքերը Դպրեվանքի սարկալազաց դասուն ու քալելու այն հաւատքի, յոյսի ու սիրոյ ճանապարհէն, ուրկէ մեր հայրերը քալած են դարերը շարունակ եւ միանալու Քրիստոսի հսկայական բանակին՝ թրծուած Ս. Ստեփանոսի ոգիով:

Հոսկ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հաւատացեալ բազմութեան ուղղեց իր Հայրապետական պատգամը: Նորին Սրբութիւնը յայտնեց, որ «Մարդկային պատմութեան մէջ ումանք կը դառնան հոմանիշ ու խորհրդանիշ վեհ արժէքներու, երկնային գշմարտութիւններու եւ յաւիտեանական իտեպներու: Այսպէս էր պարագան Ս. Ստեփանոսի, որ իբրեւ սարկալազ ապրեցաւ, գործեց ու նահատակուեցաւ՝ մնալով ծառայութեան խորհրդանիշ՝ թէ՛ քրիստոնէութեան եւ թէ՛ մարդկային կեանքին մէջ»: Նորին Սրբութիւնը վերջիչեցուց, որ եկեղեցին ինքզինք կ'իրագործէ Աստուծոյ խօսքին եւ գործին վկան դառնալով: Ան նշեց, որ վկայութիւնն ու ծառայութիւնը գիրար կ'ամբողջացնեն ու կը հարստացնեն. ուրեմն, ա՛յս պէտք է ըլլայ հո-

գեւոր մշակի մը կոչումը: Շարունակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը սաւ, որ «Այնպէս ինչպէս սովորական ծառայութիւն չէր Ս. Ստեփանոսի ծառայութիւնը, նոյնպէս ալ մեր եկեղեցւոյ եւ հոգեւորականներուն ծառայութիւնը պէտք է սովորական ծառայութեան սահմաններուն մէջ մնայ: Եկեղեցւոյ նամբէն բոլորով եւ ժողովուրդին գացող ծառայութիւնը պէտք է դառնայ Քրիստոսակեդրոն: Հոգեւորականի ծառայութեան մղումը պէտք է ըլլայ Քրիստոսի սէրը՝ ըլլալով անանձնական: Այս օրերուն մանաւանդ, մեր ժողովուրդը, ամէն տեղ, կարիքը ունի մեր ծառայութեան: Սքեմը չէ, որ հոգեւորականը հոգեւորական կը դարձնէ, այլ այդ սքեմին ետին կանգնող այն կոչումը, որ ինքզինք կ'արտայայտէ ծառայութեամբ եւ վկայութեամբ»:

Իր խօսքի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս իր գնահատանքը յայտնեց



սարկաւազներուն՝ ի տես անոնց ծառայասիրութեան եւ խօսքը ուղղելով անոնց, յորդորեց անանձնական եւ նուիրեալ ծառայութեամբ Ս. Ստեփանոսը ապրեցնելու իրենց եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ: Ան յանձնարարեց, որ ժողովուրդը եկեղեցի տանելու կողքին, անոնք նաեւ եկեղեցին ժողովուրդին տանին՝ ինչպէս որ Քրիստոսու ինք գնաց ժողովուրդին, ինքզինք նոյնացելով ժողովուրդի տառապանքին հետ: Նորին Սրբութիւնը խօսքը աւարտեց աղօթելով առ բարձրեալն Աստուած, որ Ս. Ստեփանոսի ծառայական սիրոյ ոգիով ու հաւատքով լեցնէ անոնց կեանքը, միտքը ու հոգին:

Հանդիսութեան աւարտին ներկաները միաբերան երգեցին «Կիլիկիա» քայլերգը, որմէ ետք Հայրապետը իր հայրական օրհնութիւնը փոխանցեց սարկաւազներուն:

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԷՊԷՃԵԱՆԸ**

Կիրակի, 19 Դեկտեմբերին, Ս. եւ Անմահ պատարագէն անմիջապէս ետք, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով գնահատեց հրապարակագիր ու Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերութեան ընդհանուր քարտուղար՝ դոկտ. Հրայր Ճէպէճեանի մտաւորական ու ծառայական աշխատանքը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Կաթողիկոսարանի «Հայագիտական Կեդրոն»-ին պատասխանատու՝ Ահարոն Շիրտմեան: Ան իր խօսքին մէջ շեշտեց



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համահայկական առաքելութիւնը: Այս ծիրէն ներս ան կեդրոնացաւ յատկապէս Կաթողիկոսարանի մշակութային առաքելութեան՝ անդրադառնալով զանազան բնագաւառներուն: Շխրտմեան նաեւ յիշեց, որ Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն նախաձեռնողն է կարեւոր աշխատանքներուն ու եզակի իրագործումներուն, այլ նաեւ՝ գնահատողը անոնց իրագործման մասնակից դարձող մտաւորականներուն: Ներկայ հաւաքը, պատուելու համար դոկտ. Հրայր Ճէպէճեանը, պերճախօս վկայութիւն մըն է այս ուղղութեամբ:

Բացման խօսքին յաջորդեց Նորին Սրբութեան պատգամը: Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ շեշտեց, որ «Մարդը արժէք կը դառնայ ոչ թէ իր ունեցածով, այլ՝ ծառայութեան ցամաքով իր տուածով, ցախ Աստուծոյ ապա իր եկեղեցւոյ ու ազգին»: Նորին Սրբութիւնը նաեւ յիշեց, որ «Նահանջի ու անտարբերութեան մթնոլորտը սկսած է իր ներկայութիւնը զգալի դարձնել հայ կեանքին ներս, ամէն տեղ: Որեւէ ժամանակէ աւելի մենք կարիք ունինք Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծառայողներուն՝ մեր հաւաքական կեանքին իրենց նուիրեալ ու գործօն մասնակցութեամբ»: Խօսելով Հրայր Ճէպէճեանի մասին, Նորին Սրբութիւնը ըսաւ, որ ան իր ծառայութիւնը բերաւ գիրի ու գրականութեան ճամբով: Ան Աստուածաշունչը հասնելի դարձուց թէ՛ մտաւորականին եւ թէ՛ մանուկին ու պատանիին: Իր ծաւալուն աշխատանքներուն կողքին, մնայուն ներկայութիւն դարձաւ հայ մամուլին մէջ՝ մտաւորական վաստակ ձեռք բերելով այդ բնագաւառէն ներս: Այսպէ՛ս արժեւորեց ան իր կեանքը եւ այսօր արժանի է Մեր գնահատանքին:

Նորին Սրբութեան խօսքէն ետք ընթերցուեցաւ Հայրապետական սրբատառ Կոնդակը, ուր Վեհափառ Հայրապետը բարձր կը գնահատէր դոկտ. Ճէպէճեանի երկար տարիներուն վաստակն ու ծառայութիւնը: Կոնդակի ընթերցումէն ետք Նորին Սրբութիւնը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով զարդարեց դոկտ. Հրայր Ճէպէճեանի կուրծքը:

Հանդիսութեան աւարտին, դոկտ. Ճէպէճեան՝ իր որդիական երախտագիտութիւնը յայտնելով Վեհափառ Հայրապետին, ըսաւ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իբրեւ փարոս հայ մշակութային կեանքի ու հաւատքի առաքելութեան, միշտ կը մնայ բոլորին տունը: Հետեւաբար, այսօրուան պարգեւատրումը ինձի համար վերանորոգող մղիչ ոյժ կը դառնայ իմ ծառայութիւնս աւելիով կատարելու հայ կեանքէն ներս, յայտնեց ան:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Չորեքշաբթի, 1 Դեկտեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ամբողջ օրուան տեւողութեամբ, Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովը ունեցաւ իր լիակատար նիստը: Ժողովական աշխատանքներուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ կարգ մը թեմերու առաջնորդները: Կրօնական Ժողովի ատենապետութիւնը վարեցին՝ Օշական եւ Նարեկ արքեպիսկոպոսները:

Ժողովի ընթացքին յաջորդաբար քննարկուեցան Դպրեվանքին, քրիստոնէական դաստիարակութեան, ընկերային ծառայութեան, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց, ծիսական բարեկարգութեան, Աստուածաշունչի Արեւմտահայերէնի թարգմանութեան, Կաթողիկոսարանի «ՀԱՍԿ» պաշտօնաթերթի, քահանայից պատրաստութեան առնչուած



չարք մը հարցեր: Յատուկ զեկոյցներ տրուեցան վերանորոգուած թանգարանին, մատենադարանին, ձեռագրատան ու հնատիպներու բաժանմունքներուն մասին: «Թուչնոց Բոյն»-ի ու տեղեկատուականի բաժանմունքի պատասխանատու հայր սուրբերը, այլ բաժանմունքներու պատասխանատուներու կողքին, զեկոյցներ տուին իրենց աշխատանքներուն մասին: Երիտասարդութեան ու ծիսական բարեկարգութեան հետ աղերս ունեցող հարցերու քննարկումները յատուկ տեղ գրաւեցին ժողովի ընթացքին: Ժողովականները առիթ ունեցան իրենց գործօն մասնակցութիւնը բերելու բոլոր քննարկումներուն: Կարգ մը ծրագիրներու գծով առնուեցան համապատասխան որոշումներ եւ նշանակուեցան այդ որոշումները գործադրութեան ընթացքի մէջ դնելու կոչուած յանձնախումբեր: Շեշտուեցաւ Կաթողիկոսարան-թեմ սերտ գործակցութիւնը:

Նորին Սրբութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց կատարուած լուրջ աշխատանքներուն գծով՝ թէ՛ Կաթողիկոսարանի բաժանմունքներուն եւ թէ՛ թեմերուն կողմէ՝ հակառակ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն: Ան իր գոհունակութիւնը յայտնեց, որ մեր միաբանութիւնը վերանորոգ կերպով կը շարունակէ մեր եկեղեցւոյ հոգեւոր արժէքները ժողովուրդին տանելու առաքելութիւնը՝ զանազան ծրագիրներու մշակումով: Վեհափառ Հայրապետը մասնաւորապէս ընդգծեց քրիստոնէական դաստիարակութեան ու ընկերային ծառայութեան կարեւորութիւնը, յատկապէս ներկայ ժամանակներուն եւ թելադրեց թեմերուն առաջնահերթ կարեւորութիւն տալ եկեղեցւոյ առաքելութեան յիշեալ մարզերուն:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հինգշաբթի, 2 Դեկտեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովը ունեցաւ իր լիակատար հանդիպումը Անթիլիասի Մայրավանքին մէջ: Կրօնական Ժողովին յաջորդող յիշեալ հանդիպումին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ այլ թեմերու պատկանող անդամները: Հանդիպումին ատենապետութիւնը յաջորդաբար վարեցին՝ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գրիգոր Մահսերէճեան:

Ժողովին բացումը կատարելով, Վեհափառ Հայրապետը ընդհանուր անդրադարձ մը կատարեց անցող ամիսներուն Կաթողիկոսարանի գործունէութեան՝ վարչական, տնտեսական, յարաբերական, շինարարական եւ այլ երեսներուն: Ան շեշտեց, թէ հակառակ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն, Կաթողիկոսարանը իր համազգային առաքելութիւնը շարունակեց:



Լայն քննարկումի նիւթ դարձաւ Կաթողիկոսարանի ընկերային ծառայութեան առնչուած Ֆանարի ժողովրդային տուններու, Պուրճ Համուտի ժողովրդային բնակարաններու, կարիքաւորներու օժանդակութեան, ինչպէս նաեւ կրթական ծրագիրներու Կաթողիկոսարանին կողմէ կատարուած նիւթական ներդրումները: Յիշեալ եւ այլ ծրագիրներ առանցքային տեղ գրաւեցին Կաթողիկոսարանի առաքելութեան մէջ: Ժողովականները գնահատանքով անդրադարձան Վեհափառ Հայրապետին նախաձեռնութեամբ թէ՛ Կաթողիկոսարանին եւ թէ՛ բարերարներու ներդրումով, ընկերային ծառայութեան մարզէն ներս կատարուած աշխատանքներուն: Զեկոյց տրուեցաւ Կաթողիկոսարանի տնտեսական ընդհանուր կացութեան մասին, ուր պարզուեցաւ, թէ Լիբանանէն ներս ստեղծուած տնտեսական եւ դրամատնային տագնապը իր ժխտական ազդեցութիւնը ունեցած է Կաթողիկոսարանին տնտեսական կացութեան վրայ: Այս ծիրէն ներս Կաթողիկոսութեան թեմերու ու բարերարներու օժանդակութիւնը կարեւոր նկատուեցաւ: Նորին Սրբութիւնը յատուկ գնահատանքով անդրադարձաւ զուիցերիաբնակ ազգային բարերար Տէր եւ Տիկին Ալեքքօ եւ Անի Պէգիբեանի կողմէ Կաթողիկոսարանին միջոցաւ Լիբանանի հայութեան կատարուած օժանդակութեանց, յատկապէս ընկերաբժշկական բնագաւառէն ներս:

Իր օրակարգի երկրորդ բաժինին մէջ ժողովը հանդիպումներ ունեցաւ «Թռչնոց Բոյն»ի, Ազգ. Բուժարանի, Ազգ. Ծերանոցի, հայագիտական կեդրոնի, «Խաչեր Գալուստեան» Մանկավարժական Կեդրոնի եւ յարակից այլ կառույցներու տնօրէններուն ու խնամակալներուն հետ: Ժողովը լսեց անոնց զեկոյցները, իր գնահատանքը յայտնեց ու միաժամանակ անհրաժեշտ թելադրութիւններ կատարեց: Ապա, քննարկուեցան թեմերու առնչուած շարք մը հարցեր:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ու ֆաղաքական ժողովներու լիակատար նիստերէն ետք, Ուրբաթ, 3 Դեկտեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, յիշեալ ժողովները միացեալ հանդիպում ունեցան Անթիլիասի Մայրավանքին մէջ: Նիստին իրենց մասնակցութիւնը բերին կարգ մը թեմերու առաջնորդները: Կաթողիկոսութեան կանոնադրութեան համաձայն, նման միացեալ հանդիպման օրակարգին մաս կը կազմեն Կաթողիկոսութեան, Հայ Եկեղեցւոյ, Հայաստանին, Արցախին եւ ընդհանրապէս մեր ժողովուրդին առնչուած ընդհանրական հարցեր:



Իր բացման խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը ընդհանուր գիծերով պարզեց մեր ժողովուրդին, եկեղեցւոյ եւ հայրենիքին դիմադրաւած ներկայ մարտահրաւէրները: Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Շահէ Արք. եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Մասիս Եպս. յաջորդաբար զեկոյցներ ներկայացուցին իրենց թեմերուն մասին: Զեկոյցները ներառեցին կրօնական, վարչական, տնտեսական ու յարաբերական աշխատանքներ ու հարցեր: Ապա, առաջնորդ սրբազան հայրերը ժողովականներուն հարցումներուն պատասխանեցին: Վեհափառ Հայրապետը իր եզրափակիչ խօսքին մէջ շեշտեց, թէ Սփիւռքի յիշեալ մայր գաղութներուն զօրակցութիւնը հրամայական է: Ան իր գնահատանքը յայտնեց անցնող տարիներուն Լիբանանի ու Սուրիոյ հալածեան վերականգնումին օժանդակող կառույցներուն, բարերարներուն ու

ազգայիններուն եւ վստահեցուց, որ յիշեալ գաղութներու վերականգնումը պիտի շարունակէ առաջնահերթութիւն մնալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար:

Նկատի ունենալով, որ կարգ մը թեմեր թեմական կանոնադրային որոշ յօդուածներու փոփոխութիւններ առաջարկած էին, Վեհափառ Հայրապետը թեւադրեց, որ բոլոր թեմերը իրենց փորձառութեան լոյսին տակ ճշդէն կանոնադրութեանց մէջ վերատեսութեան կարօտ բաժինները, որպէսզի Ազգ. Կեդրոնական Վարչութիւնը եւ յառաջիկային գումարուելիք Ազգ. Ընդհանուր Ժողովը անհրաժեշտ քննարկումն ու վաւերացումը կատարեն:

Դոկտ. Նորա Պայրազտարեան, իբրեւ անդամ Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի դատական յանձնախումբին, զեկուցեց դատի ներկայ հանգըրուանին մասին: Նորին Սրբութիւնը յայտնեց, որ յառաջիկայ հանգըրուանին կարեւոր է մեր ժողովուրդին անհրաժեշտ տեղեկութիւնները փոխանցել այս գծով, որովհետեւ յիշեալ դատը մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին դատն է:

Կաթողիկոսարանի դիւանապետ Խաչիկ Տէտէեան զեկուց ներկայացուց Կաթողիկոսութեան կողմէ Արցախի մէջ կառուցուած «Նոր Կիլիկիա» գիւղին մասին: Ան յայտնեց, որ գիւղը Արցախի եւ Ազրպէյճանի բաժանման գիծին վրայ կը գտնուի՝ մաս կազմելով Արցախի ներկայ տարածքին: Հարցումներուն պատասխանելով՝ ան տեղեակ պահեց ժողովը, որ գիւղը կը կարօտի որոշ օժանդակութեան: Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ անհրաժեշտ է որ այս գծով մեր ստանձնած յանձնառութիւնը շարունակուի՝ խորհրդակցաբար Արցախի իշխանութեան հետ:

Նորին Սրբութիւնը անդրադարձաւ Նուիրապետական Աթոռներու գործակցութեան՝ ընդգծելով անոր հրամայական անհրաժեշտութիւնը, իբրեւ մղիչ ոյժը մեր եկեղեցւոյ առաքելութեան առաւել կենսաւորման: Ան յիշեցուց, թէ Նուիրապետական Աթոռները տարբեր պայմաններու մէջ կ'ապրին, տարբեր դրուածքներ ունին ու տարբեր մարտահրաւէրներ կը դիմագրաւեն, սակայն այս բոլորէն վեր՝ մեր եկեղեցւոյ ու ազգին հաւաքական արժէքներուն ու իտէալներուն ամուր կապուածութիւնը հիմքն է մեր եկեղեցւոյ ներքին միասնականութեան եւ անոր հոգեւոր ու ազգային առաքելութեան:

Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Արցախի վերջին պատերազմէն ետք ստեղծուած կացութեան եւ այդ ծիրէն ներս Հայաստան-Սփիւռք գործակցութեան: Ժողովը շեշտեց, թէ մեր հաւատարմութիւնն ու զօրակցութիւնը Հայաստանի պետութեան, անոր անկախութեան, հողային ամբողջականութեան, գերիշխանութեան ու անվտանգութեան պէտք է մնայ ամուր ու ներհայաստանեան խնդիրներէն վեր: Մեր ազգի կեանքին ներկայ ճակատագրական հանգըրուանը պէտք է բոլորս մղէ մէկդի դնելու բաժանարար մօտեցումները եւ մեր հայրենիքին հզօրացման նպաստող աշխատանքները պէտք է դառնան միացուցիչ շաղախը մեր ժողովուրդի զաւակներուն:

Արամ Ա. Կաթողիկոս նաեւ ընդհանուր գիծերով ներկայացուց Կաթողիկոսարանի յառաջիկայ աշխատանքներուն գլխաւոր երեսները: Այս շրջա-

գիծէն ներս ան յիշեց.- առաջին՝ մինչեւ 1972 թուականը երկարող Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պատմութեան պատրաստութիւնը պիտի շարունակուի. երկրորդ՝ պատրաստութեան ընթացքի մէջ է Կաթողիկոսարանի հնատիպ-ներու ու ձեռագիրներու ամբողջացումը ու ապա հրատարակութիւնը. եւ երրորդ՝ կը ծրագրուի «Կիլիկիա» եւ Հայոց Յեղասպանութեան Որբերու «Արամ Պէգիբեան» թանգարաններուն յատուկ առանձին լայնածաւալ քաթալոկներ պատրաստել: Այս ծրագիրները կը կարօտին լուրջ աշխատանքի, որուն անմիջապէս պիտի ձեռնարկենք, ինչպէս նաեւ՝ մեկենասներու, ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Հայր Յովակիմը ներկայացուց Վեհափառ Հայրապետին գահակալութեան 25 ամեակին առնչուած աշխատանքներուն ընդհանուր պատկերը: Ան ըսաւ, որ 2020 թուականը Վեհափառ Հայրապետին գահակալութեան 25 ամեակն էր, սակայն թէ՛ Վեհափառ Հայրապետին փափաքին ընդառաջելով եւ թէ՛ ներկայ պայմանները նկատի ունենալով հրապարակային ձեռնարկները ջնջուեցան: Սակայն, այս կարեւոր առիթով շուտով երկու հատորներ լոյս պիտի տեսնեն՝ Նորին Սրբութեան գահակալութիւնը արժեւորող յօդուածներ ներառող շուրջ 600 էջերէ բաղկացած հատոր մը եւ երկլեզու նկարագրող գաթալոկ մը: Թեմակալ առաջնորդները առաջարկեցին, որ Վեհափառ Հայրապետը այցելէ թեմերը՝ իր գահակալութիւնը նշելու եւ ժողովուրդին իր պատգամը ուղղելու համար: Նորին Սրբութիւնը ներկայ պայմաններուն մէջ յարմար չտեսաւ թէ՛ իր հովուապետական այցելութիւնը եւ թէ՛ իր գահակալութեան 25 ամեակի նշումը՝ յայտնելով, որ էականը մեր ժողովուրդին ու հայրենիքին ծառայելն է:

Նորին Սրբութիւնը տեղեակ պահեց ժողովը, որ 2022 թուականը որոշած է հռչակել «Սփիւռքի Տարի» եւ այս մասին իր Հայրապետական պատգամը Յունուար 2022-ին սկիզբը պիտի հրատարակուի: Ժողովականները իրենց գոհունակութիւնը յայտնեցին Վեհափառ Հայրապետին այս իմաստուն որոշման համար՝ շեշտելով Սփիւռքի վերակազմակերպման անյետաձգելի անհրաժեշտութիւնը: Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ յառաջիկային այս ուղղութեամբ աւելի լայն բացատրութիւններ պիտի տրուին մեր ժողովուրդի զաւակներուն: Ապա, Հայրապետին առաջարկին ընդառաջելով, ժողովը ճշդեց Միւռնոնօրհնէքի եւ Ազգային Ընդհանուր Ժողովի թուականները:

Իր փակման խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ հակառակ ստեղծուած դժուար պայմաններուն, Աստուծոյ օրհնութեամբ ու մեր ժողովուրդին զօրակցութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վերանորոգ հաւատքով ու նուիրումով պիտի շարունակէ իր ծառայական առաքելութիւնը:

ԴՊՐԵՎԱՆՔ

**ՄԻՐՈՅ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՁ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**


Ուրբաթ, 24 Դեկտեմբերի երեկոյեան, Դպրեվանեցիները նշեցին Ս. Ստեփանոս նախասարակաւազին տօնը՝ գլխաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ներկայութեամբ տեսչական կազմին ու միաբան հայրերու:

Սիրոյ Սեղանին շուրջ սրտի խօսք առին՝ Ս. Աստուածածին Վանքի վանահայր Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեանն ու Դպրեվանքի տեսուչ Հոգշ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը: Անոնք գոհութիւն յայտնեցին Աստուծոյ՝ անփորձանք տարիին համար, եւ երախտագիտութիւն՝ Վեհափառ Հայրապետին, որուն շուքին տակ Դպրեվանքը կը շարունակէ իր առաքելութիւնը:



Դպրեվանեցիները զուարճացուցին երեկոն կաղանդի ու սիրոյ սեղանի յատուկ երգերով, ասմունքներով, թատերական ներկայացումով, ինչպէս նաեւ՝ իրենց բարեմաղթութիւնները փոխանցեցին Վեհափառ Հայրապետին:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը, ջերմ սիրով ողջունելէ ետք Դպրեվանքի տեսչութիւնն ու աշակերտութիւնը, իր բարձր գնահատանքը յայտնեց Ս. Աստուածածին Վանքի վանահօր, Դպրեվանքի տեսուչին եւ տեսչական կազմին, որոնք նուիրական թափով կը շարունակեն Դպրեվանքի առաքելութիւնը: Խօսքը ուղղելով սաներուն, Հայրապետը ըսաւ. «Դպրեվանքը դպրոցէ մը աւելի տուն ու ընտանիք է, ուր դպրեվանեցին կը սորվի ու կ'ուռնանայ՝ ապագային դառնալու Հայ Եկեղեցւոյ եւ հայ ազգին նուիրեալ պաշտպանը»: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը շնորհաւորեց դպրեվանեցիներուն ու անոնց ծնողներուն նոր տարին, մաղթելով խաղաղութիւն, երջանկութիւն, իմաստութիւն, առողջութիւն եւ համերաշխութիւն:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԵՐԱՓԱՌ ԶԱՅՐԵՊԵՏԸ ԺՆՆԵՒԻ ՄԵՉ

Ժրնեւ կատարած իր այցելութեան ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց հետեւեալ այցելութիւնները .-

Երկուշաբթի, 1 Նոյեմբերին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) ընդհանուր քարտուղար՝ դոկտ. Եոան Սաուքայի այցելութիւնը: Դոկտ. Սաուքա Վեհափառ Հայրապետին պարզեց Ե.Հ.Խ.-ին դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւէրները, ինչպէս նաեւ յառաջիկայ տարի տեղի ունենալիք համաժողովին նախապատրաստական աշխատանքներուն ընթացքը:

Նորին Սրբութիւնը Ե.Հ.Խ.-էն ներս ունեցած երկար տարիներու իր փորձառութեան լոյսին տակ, ընդհանուր քարտուղարին ներկայացուց իր տեսակէտները կարգ մը կարեւոր խնդիրներու ու ծրագիրներու գծով: Յայտնենք, որ համաժողովի պատրաստութեան աշխատանքներու լծուած յանձնախումբերուն մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները իրենց կարեւոր նպաստը պիտի բերեն:



Հանդիպումին Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էր ժընեւի մէջ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական յարաբերութեանց ներկայացուցիչ՝ փրոֆ. Թենի Փիրի-Սիմոնեանը:

Երեքշաբթի, 2 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լուտերական Եկեղեցիներու Խորհուրդի ներկայացուցիչ՝ դոկտ. Տրըք Լանճը: Հանդիպման նպատակը Նորին Սրբութեան հետ խորհրդակցել էր, ընդհանրապէս միջ-եկեղեցական հարցերու ու մասնաւորաբար ուղղափառ եկեղեցիներուն հետ Լուտերական Եկեղեցիներու Խորհուրդին աստուածաբանական երկխօսութիւն սկսելու կարելութեան մասին:



Երկար տարիներու միջ-եկեղեցական ու յատկապէս աստուածաբանական երկխօսութեանց փորձառութեան լոյսին տակ, Վեհափառ Հայրապետը իր հիւրին հետ բաժնեց նման նախաձեռնութեան թէ՛ առաւելութիւններն ու կարելիութիւնները եւ թէ՛ անպատեհութիւններն ու դժուարութիւնները:

Չորեքշաբթի, 3 Նոյեմբերին, հանդիպում մը տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Զուլիցերիոյ Հին Կաթողիկ եկեղեցւոյ պետ՝ Հարըլտ Եպիսկոպոսին միջեւ: Հանդիպումին նպատակն էր քննել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ յիշեալ եկեղեցւոյ ներկայացուցիչներուն միջեւ սկսած ժամանակակից ընկերային-բարոյական հարցերու քըննարկման նուիրուած հանդիպումներու ընթացքը, ինչպէս նաեւ Պեռնի համալսարանին հետ կարգ մը ծրագիրներու շուրջ գործակցութեան կարելիութիւնները:

Յայտնենք, որ Հին Կաթողիկ եկեղեցին Զուլիցերիոյ աշխոյժ եկեղեցիներէն մէկն է: Ան գործօն մասնակցութիւն կը բերէ միջ-եկեղեցական շարժու-

մին: Հին Կաթողիկ եկեղեցւոյ ներկայացուցիչները զանազան առիթներով այցելած են Անթիլիասի Մայրավանք:

Յիշեալ հանդիպումին ներկայ էր նաեւ Ժընեւի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջ-եկեղեցական յարաբերութեանց պատասխանատու՝ փրոֆ. Թենի Փիրի-Սիմոնեանը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԳՆԱՀԱՏԵՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՏԱՄԱՍԿԻՆՈՍԻ ՆՊԱՍՏԸ ՄԻՋ-ՕՐԹՈՏՈՔՍ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, 5 Նոյեմբերին, Զուիցերիոյ Շամպէզի քաղաքին մէջ գտնուող Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ կեդրոնէն ներս, տեղի ունեցաւ յիշատակի յատուկ հանդիսութիւն մը՝ նուիրուած Մետրոպոլիտ Տամասկինոսի: Հանդիսութեան սկիզբը կարգացուեցաւ Պենետիքթոս Պապին, Պարթոլոմէօ Տիեզերական Պատրիարքին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին (ընթերցուած փրոֆ. Թենի Փիրի-Սիմոնեանի կողմէն), Զուիցերիոյ նախագահին եւ Յորդանանի Հասան Իշխանին պատգամները:

Նորին Սրբութիւնը մօտէն ճանչցած ըլլալով Մետրոպոլիտ Տամասկինոսը, իր խօսքին մէջ անդրադարձաւ ընդհանրապէս միջ-եկեղեցական ու յատկապէս միջ-ուղղափառ Աստուածաբանական երկխօսութեան անոր բերած նպաստին: 1980-ական թուականներուն, որպէս յիշեալ երկխօսութեան նախաձեռնողներէն մէկը, Նորին Սրբութիւնը ընդգծեց Մետրոպոլիտ Տամասկինոսի կատարած աշխատանքին կարեւորութիւնը, միաժամանակ կոչ ուղղեց, որ հակառակ գոյութիւն ունեցող ներքին տարակարծութիւններուն, անհրաժեշտ է, որ աւելի ամրապնդուի ուղղափառ եկեղեցիներու ներ-



քին միասնականությունը՝ յատկապես գործակցութեան ճամբով:

Յայտնենք, որ Մետրոպոլիտ Տամասկինոս երկար տարիներ Յոյն Ուղղափառ Կեդրոնին պատասխանատուն եղած է, ինչպէս նաեւ առաջնորդը՝ Չուրիցերիոյ Յոյն Ուղղափառ Համայնքին եւ յաճախակի այցելութիւններ տուած է Անթիլիասի Մայրավանք: Ան վախճանած է 10 տարիներ առաջ:



ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ ԱՆԿԼԻՔԱՆ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԵՍՈՍՈՒԹԵԱՆ

Անկլիքան-Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Աստուածաբանական Երկխօսութեան Միջազգային Յանձնախումբը իր տարեկան ժողովը առցանց գումարեց 26-28 Հոկտեմբերին: Օրակարգի վրայ էր եկեղեցիներուն տեղեկագիրներու եւ ծրագիրներու ներկայացումը, ինչպէս նաեւ «Տիեզերական Ժողովներուն Ժառանգութիւնը» թեմայով թղթածրարին աշխատանքներուն շարունակութիւնը:



Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժողովին մասնակցեցաւ միջ-եկեղեցական յարաբերութեան բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան:

**«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՆԽԱՐԳԻԼՄԱՆ ԵՒ
ՉՈՅՈՒԱԾՆԵՐԸ ՄՈՌԱՑՈՒԹԵՆԷ ՓՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ
ՏԱՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ» ԱՌՑԱՆՑ ԼՍԱՐԱՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ ընդհանուր ժողովին նախապատրաստական աշխատանքներու ծիրէն ներս, Ուրբաթ, 19 Նոյեմբերին, Ե.Հ.Խ.-ի Միջազգային Գործունէութեան Յանձնաժողովը (Commission of International Affairs), գործակցաբար Ե.Հ.Խ.-ի Հոգեւոր Կեանքին (Spiritual Life), կազմակերպեց շարք մը առցանց լսարաններ՝ նշելու 75 ամեակը Ե.Հ.Խ.-ի միջազգային հարցերով զբաղող յանձնաժողովին:

Կազմակերպուած առցանց լսարանները որպէս կեդրոնական նիւթ առած էին աշխարհի բազմաթիւ շրջաններու մէջ՝ յատկապէս Ամերիկայի, Ափրիկէի, Լատին Ամերիկայի, Գանատայի եւ Միջին Արեւելքի, բնիկ ժողովուրդներու դէմ գործուած բռնութիւնները, սպաննութիւններն ու ջարդերը եւ յատկապէս գաղութարարութեան ժամանակահատուածէն ետք տեղի ունեցած ցեղասպանութիւններն ու ներկայիս շարունակուող, պարտադիր տեղափոխութիւններն ու կրօնափոխութիւնները, հողերու եւ ջուրերու վարակումները, բնիկ աղջիկներու եւ տղոց անհետացումներն ու իրաւունքներու ջատագովներու սպաննութիւնները:



Միջին Արեւելքի նուիրուած առցանց լսարանին կեդրոնական նիւթն էր ինչպէ՞ս նանայնայ այս ողբերգութիւնները եւ ոգեկոչել յիշատակը գոհուածներուն. ինչպէ՞ս արժեւորել վերապրողներու հերոսութիւններն ու անոնց դիմակայելու ոյժը, նկունութիւնը՝ ապրելու եւ գոյատեւելու. ինչպէ՞ս վերապրողները կը յարգեն ու կը պատուեն իրենց նահատակները. ի՞նչ միջոցներ կ'օգտագործեն մոռացութենէ փրկելու ու յաւերժացնելու յիշատակը իրենց նահատակներուն եւ պայքարելու ժխտողականութեան դէմ:

Իբրեւ եկեղեցիներու տիեզերական կոչում (Ecumenical Calling), Ե.Հ.Խ.-ը կը հրաւիրէ աշխարհի բոլոր եկեղեցիները յանձնառու դառնալու եւ հաւա-

քաբար պայքարելու խաղաղութիւնն ու արդարութիւնը կործանող սպառնալիքներուն դէմ: Այս նպատակով կազմակերպուած առցանց լսարանին իրենց մասնակցութիւնը բերին Միջին Արեւելիքի մէջ ցեղասպանութեան եւ հալածանքներու ենթարկուած ժողովուրդներէն ներկայացուցիչներ՝ արտայայտուելու իրենց փորձառութիւններուն եւ ազգային դիրքորոշումներուն մասին, ինչպէս նաեւ անոնց վարած քաղաքականութեան եւ օգտագործած միջոցներուն՝ զոհուածները մոռացութենէ փրկելու եւ անոնց յիշատակը յարգելու:

Առցանց լսարանի մասնակիցները ներկայացուց Ե.Հ.Խ.-ի Միջազգային Յանձնաժողովի (International Affairs) բաժանմունքի պատասխանատու՝ Ասֆաու Սէմէնկիչ Կրոժան եւ «Հոգեւոր Կեանք» բաժանմունքի պատասխանատու՝ դոկտ. Մայք Ռոպրթց:

Լսարանը վարեց եւ բացման ու փակման խօսքերը արտասանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Ժողովի անդամ եւ Ե.Հ.Խ.-ի Առաքելութիւն Դէպի Արդարութիւն եւ Խաղաղութիւն ծրագիրին մէջ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ՝ Սեդա Խտըշեան:

Առցանց լսարանին հանդէս եկաւ Ժընեւի մէջ Կաթողիկոսարանի միջեկեղեցական յարաբերութեանց ներկայացուցիչ եւ Ե.Հ.Խ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ փրոֆ. Թենի Փիրի-Սիմոնեան: Փրոֆ. Սիմոնեան ներկայացուց Հայոց Ցեղասպանութիւնն ու անոր յիշողութիւնը պահելու հայ ժողովուրդին ճիգերը՝ կեդրոնանալով այս ծիրին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աշխոյժ գործունէութեան եւ յատկապէս Սիսի պատմական Կաթողիկոսարանի կալուածներու պահանջքի գծով տարուած աշխատանքներուն ու Թուրքիոյ դէմ բացուած իրաւական դատական հայցին վրայ:

Յայտնենք, որ յաջորդաբար զեկոյցներ ներկայացուցին Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) ընդհանուր քարտուղար՝ դոկտ. Միշէլ Ապսը, Սպարի Աթմանը եւ Իրանքի քիւրտերու շրջանի ներկայացուցիչ՝ դոկտ. Քարամանթ Օսմանը:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՀԱՐԻՐԱՍԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Կազմակերպութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Առաքելութիւն եւ Աւետարանչութիւն Յանձնաժողովին (Commission on World Mission and Evangelism) եւ համագործակցութեամբ Միջազգային Միսիոնարական Ժողովին (International Missionary Council), 2021-2022 տարե-

չրջանի ընթացքին շարք մը ծրագրերնեքո ընդմէջէն պիտի նշուի միսիոնարական համաժողովին 100 ամեակը՝ տարբեր հանդիպումներու եւ գրական աշխատութիւններու ընդմէջէն, անդրադառնալով անոր պատմութեան, ներկայ իրավիճակին եւ ապագայի տեսլականին: Սոյն ծրագրերին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իր մասնակցութիւնը կը բերէ Կարէն Սրկ. Եօսուէքանեան:



16–18 Նոյեմբերին, աշխարհի տարբեր շրջաններէ մասնակիցներ, (Միջին Արեւելք, Եւրոպա, Լատին Ամերիկա, Նոր Զեւանտա, Խաղաղական Ովկիանոսի երկիրներ, Ափրիկէ, Ասիա, Քարիպեան կղզիներ), յատուկ յանձնախումբերու ճամբով գիտաշխատութիւններ ներկայացուցին վերոնշեալ շրջաններու մէջ միսիոնարական աշխատանքներու մասին: Միջին Արեւելքի յանձնախումբը, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (Մ.Ա.Ե.Խ.) հետ գործակցաբար, տեսերիզով մը ներկայացուց Ճիպէյի «Թոչնոց Բոյն»-ն ու Հայոց Յեղասպանութեան Որբերու «Արամ Պեգիբեան» թանգարանը, խօսեցաւ առաքելութիւն հասկացողութեան մասին՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու դիտանկիւնէն, ինչպէս նաեւ տեղեկութիւն փոխանցեց վերջին 100 ամեակին յատկանշական դէպքերու մասին:

Նշենք, որ միսիոնարական շարժումին կատարած մարդասիրական աշխատանքներուն մեծագոյն վկաներէն կը հանդիսանայ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, նկատի ունենալով Հայոց Յեղասպանութեան յաջորդող տարիներուն միսիոնարներուն կատարած հայնպաստ աշխատանքը:

Այս ծրագրերին յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Յունիս 2022–ին:

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

**Հ.Հ. ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԲԱԹԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻՆ ՀԵՏ**

Ուրբաթ, 10 Դեկտեմբերի երեկոյեան, Քաթարի մօտ Հայաստանի Հանրապետութեան (Հ.Հ.) դեսպանատան մէջ, Հ.Հ. վսեմաշուք նախագահ Արմէն Սարգիսեան յատուկ հանդիպում մը ունեցաւ Քաթարի հայ գաղութի հոգեւոր հովիւ՝ Գերշ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեանի եւ Ազգային Գործադիր Մարմինի անդամներուն հետ:



Հանդիպման ընթացքին, Քաթարի մօտ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Արմէն Սարգիսեան բարի գալուստի խօսք արտասանեց, եւ ապա, Հայր Սուրբը հրաւիրեց ողջոյնի խօսք արտասանելու:

Իր խօսքին մէջ, Հայր Սուրբը պրն. նախագահին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյններն ու օրհնութիւնները, ինչպէս նաեւ՝ Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Քաթարի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանին բարեմաղթութիւնները:

Նախագահ Սարգիսեան, իր կարգին, խօսելով Հայաստանի ներկայ իրավիճակին մասին, անդրադարձաւ Քաթարի պետութեան հետ նորագոյն գործակցութեանց ծրագիրներուն: Ապա, ան Ազգ. Գործադիր Մարմինին յանձնեց յուշանուէր մը:

Աւարտին, յանուն Ազգ. Գործադիր Մարմինին եւ գաղութի ազգային մարմիններուն Հայր Սուրբը իր կարգին, պրն. նախագահին յանձնեց յուշանուէր մը:

**ԵՐԿՈՒ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ ՍՏԱՅԱՆ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ**

Հրամանաւ եւ բարձր տնօրինութեամբ Սուրբ Աթոռոյս զահակալ Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան հայրերէն Հոգշ. Տ. Վարդան Վրդ. Թաշճեան (Թորոնթոյի Ս. Աստուծածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւ) եւ Հոգշ. Տ. Պետրոս Վրդ. Մանուէլեան (Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական փոխանորդ) ստացան ծայրագոյն վարդապետութեան աստիճանները՝ իրենց ծառայութեան թեմերէն ներս:



Արդարեւ, Կիրակի, 18 Ապրիլին, Թորոնթոյի Ս. Աստուծածածին եկեղեցոյ մէջ, ձեռամբ՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի եւ խարտաւիլակութեամբ՝ Վանգուվրրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Շիրամեանի, իսկ Ուրբաթ, 17 Դեկտեմբերին, Քուէյթի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, ձեռամբ՝ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեանի եւ խարտաւիլակութեամբ՝ Քուէյթի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեայեանի, տեղի ունեցան ծայրագոյն վարդապետութեան աստիճաններու տուուչութեան արարողութիւնները:



Յիշենք, որ թագաժահր համաճարակին պատճառով Հայր Վարդանն ու Հայր Պետրոսը չէին կարողացած ներկայ գտնուիլ Կիրակի, 11 Ապրիլին Անթիլիասի Մայրավանքի Մ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ կատարուած ծայրագոյն վարդապետութեան աստիճաններու տուուչութեան արարողութեան՝ վեց միաբանակից հայրերու հետ:



ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ
ՎԵՐԱՆՈՐՈՉ ԿԱՄՔՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ
ԻՐԵՆՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ**

Հայ Եկեղեցւոյ առաքելութեան իրագործման մէջ կարեւոր դեր ունին հաւատացեալները եւ անոնց նիւթաբարոյական ներդրումը: Վերջին երկու տարիներու ընթացքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, իրագործուեցան վերանորոգութեան ու վերադասաւորման զանազան ծրագիրներ՝ մեր Ս. Աթոռի զաւակներուն բարերարութեան շնորհիւ: Թէեւ Վեհափառ Հայրապետին փափաքն էր իւրաքանչիւր ծրագրի իրագործման աւարտին տեղի ունենար վերաբացման արժանի հանդիսութիւն, բարերարներուն ներկայութեան, սակայն վերջին տարիներուն թէ՛ համաճարակը, թէ՛ Արցախի պատերազմը եւ թէ՛ Լիբանանի իրավիճակը չարտօնեցին անոնց իրականացումը:

Արդարեւ, Հինգշաբթի, 2 Դեկտեմբերի երեկոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու աւարտին, Վեհափառ Հայրապետին գլխաւորու-





Թեամբ, տեղի ունեցաւ Կաթողիկոսարանին կարեւոր կառույցներու վերանորոգութեան առիթով հակիրճ հանդիսութիւն:

«Կիլիկիա» Թանգարանի մուտքին, շրջապատուած առաջնորդ սրբազաններով, ժողովականներով ու միաբան հայրերով, Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր պատգամը եւ ըսաւ, որ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարերարները գործնապէս մասնակից կը դառնան մեր Ս. Աթոռին համագգային առաքելութեան: Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնը հաւաքական առաքելութիւն է եւ իւրաքանչիւր հայորդի իր իւրայատուկ տեղն ու դերը ունի այդ առաքելութեան ցանապարհին վրայ»: Իր խօսքի ակարտին, Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց բարերարները՝ աղօթելով, որ Աստուած մեր եկեղեցւոյ ու ազգի բոլոր բարերարներուն պարգեւէ առողջութիւն ու արեւշատութիւն, որպէսզի անոնք կարենան շարունակել իրենց Աստուածահաճոյ ծառայութիւնը:

Նշենք, որ նախորդ երկու տարուան ընթացքին իրագործուեցան հետեւեալ կառույցներու աշխատանքները.-

ա) Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի վերանորոգում, բարերարութեամբ Տէր եւ Տիկ. Յովսէփ Պոյաճեանի (Լոս Անճելըս):

բ) «Կիլիկիա» Թանգարանի վերանորոգում եւ վերադասաւորում, բարերարութեամբ Տէր եւ Տիկ. Կարօ Էշկիեանի (Լոս Անճելըս):

գ) «Կիլիկիա» մատենադարանի վերանորոգում եւ վերադասաւորում, բարերարութեամբ Տէր եւ Տիկ. Տիգրան Ճիյէրճեանի (Մոնաքօ):

դ) Հնատիպներու եւ ձեռագիրներու բաժանմունքներու հաստատում եւ վերադասաւորում, բարերարութեամբ դարձեալ Տէր եւ Տիկ. Տիգրան Ճիյէրճեանի (Մոնաքօ):

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՕՐՀՆԵՑ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Կիրակնօրեայ վարժարաններու տարեմուտին, ամէն տարի մանուկներն ու ուսուցիչները կ'այցելեն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ ստանալու համար անոր հայրական օրհնութիւնն ու յորդորները: Համաճարակին պատճառած անբնական պայմաններուն ու մեր ժողովուրդի զաւակներուն առողջական ապահովութեան նկատմամբ Նորին Սրբութեան ունեցած նախանձախնդիր մօտեցումին բերումով, անցնող երկու տարիներուն զանց առնուեցաւ Հայրապետին այցելելու աւանդութիւնը:

Ներկայ տարեմուտին, առաւել խանդավառ թափով եւ մեծ թիւով աշակերտներու ներկայութեամբ, Կիրակի, 28 Նոյեմբերին, Ս. Եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, գլխաւորութեամբ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի եւ Կիրակնօրեայ Վարժարաններու վարիչ՝ Հրգչ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեանի, Կիրակնօրեայ վարժա-



րանի աշակերտներէն խոսմբ մը եւ ուսուցչական կազմը այցելեցին Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Կիրակնօրեայ Վարժարանի տնօրէնուհին՝ Ժանին Դանիէլեան-Մարգարեան խօսք առնելով, յայտնեց, որ աշակերտներուն համար մեծ ուրախութիւն է Նորին Սրբութեան օրհնութիւնը ստանալը, ինչպէս նաեւ ուսուցիչներու եւ պատասխանատուներու համար կրկնակի ուրախութիւն ու պատիւ է, Հայրապետին սիրոյն ու նախանձախնդրութեան առարկան դառնալը: Այս առիթով, ան նաեւ անդրադարձաւ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներու ծնողներուն ցուցաբերած գործակցութեան ոգիին, որովհետեւ անոնք դիտողի դերակատարութեան մէջ չեն, այլ մասնակցողի ու աջակցողի:

Ապա, մանուկները իրենց սորված շարականներէն ու աղօթքներէն փունջ մը ներկայացուցին Վեհափառ Հայրապետին:

Աւարտին, Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնն ու յորդորները փոխանցեց մանուկներուն, ուսուցիչներուն եւ ծնողներուն: Ան իր բարձր գնահատանքը յայտնեց վարժարանի վարիչ հայր սուրբին եւ ուսուցիչներուն՝ անոնց կատարած նուիրական աշխատանքին եւ մանուկներուն նկատմամբ հարազատ հոգածութեան համար: Վեհափառ Հայրապետը անդրադառնալով ներկայ դժուար պայմաններուն ու կիրակնօրեայ դպրոցին ջամբած դաստիարակութեան՝ ըսաւ, որ Հակոբակ համաճարակին ստեղծած անբնական կացութեան, կիրակնօրեայ վարժարանները կը շարունակեն իրենց առաքելութիւնը՝ առաւել՝ հաւատքով ու առաւել խանդավառութեամբ: Մեր սպասումն է, որ մեր բոլոր կիրակնօրեայ վարժարանները լեցուին մանուկներով ու պատանիներով, որովհետեւ կիրակնօրեայ վարժարաններուն մէջ մեր նոր սերունդը կը լիցքաւորուի աղօթքով, բարոյական արժէքներով ու ազգային ականդրութիւններով:

Ապա, Նորին Սրբութիւնը գնահատելով աշակերտներուն ծնողները՝ շեշտեց, թէ հրամայական է նոր սերունդը եկեղեցի ուղղել եւ հաղորդակից դարձնել եկեղեցւոյ կեանքին, որպէսզի Աստուծոյ ներկայութեամբ ուռճանան ու իրենց կեանքը լեցնեն երկնային արժէքներով:

Հ. Ե. Հ. Ո. Մ.

**ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ (Հ. Ե. Հ. Ո. Մ.) ՀԵՏ**

Վեհափառ Հայրապետը բազմաթիւ առիթներով շեշտած է հայ կեանքին մէջ հայ երիտասարդին բերելիք կարեւոր ներդրումներուն մասին. աւելին՝ իր իսկ փափաքով, զանազան հանդիպումներ ունեցած է երիտասարդութեան հետ, միշտ յիշեցնելով, թէ «Երիտասարդութիւնը միայն մեր ներկան չէ, այլ՝ մեր ապագան»: Նորին Սրբութիւնը ընդգծած է երիտասարդներուն հետ երկխոսութիւն կատարելու հրամայական անհրաժեշտութիւնը, ուր ոչ միայն լսողի կրաւորական դիրքը պէտք է գրաւէ երիտասարդը, այլ՝ արտայայտուողի ու ներգործողի դիրքը: Վեհափառ Հայրապետին նախաձեռնող ոգին՝ ներշնչող ազդեցութեամբ, հայ երիտասարդը մօտեցուցած է եկեղեցւոյ, եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Վերջին տասնամեակներուն հետեզհետէ աճող երիտասարդութեան թիւը, ընդհանրապէս հայ եկեղեցական կեանքէն ներս ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շուրջ, պերճախօս վկայութիւն մըն է Նորին Սրբութեան՝ հայ երիտասարդին նկատմամբ ցուցաբերած կարեւորութեան, խնամքին ու աշխատանքին:

Արդարեւ, ընդառաջելով «Հ. Ե. Հ. Ո. Մ.»-ի վարչութեան փափաքին, Շաբաթ, 11 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:30-ին, Վեհափառ Հայրապետը «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ հանդիպում ունեցաւ Կաթողիկոսարանի հովանին վայելող «Հ. Ե. Հ. Ո. Մ.»-ի անդամներուն հետ: Հանդիպումը ուղիղ սիւնուեցաւ Կաթողիկոսարանի Cilicia TV-ի դիմատետրի էջէն:

Բացման խօսքով հանդէս եկաւ Փօլ Տօնիկեան, որ մէջբերեց 2018 թուականի Ազգ. Ընդհանուր Ժողովի ընթացքին Նորին Սրբութեան արտասանած խօսքը, ուր ան կը շեշտէր Սփիւռքը վերակազմակերպելու ու անոր նոր թափ տալու անյետաձգելի հրամայականը: 2022 թուականը «Սփիւռքի Տարի» հռչակման Նորին Սրբութեան իմաստուն որոշումին գծով, ան երիտասարդութեան անունով իրենց խանդավառութիւնն ու ուրախութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին:

Իր կարգին, Նորին Սրբութիւնը ողջունեց երիտասարդութեան ներկայութիւնը եւ գնահատեց անոնց առաջարկած հանդիպում-զրոյց ունենալու նախաձեռնութիւնը: Ապա, Վեհափառ Հայրապետը իր խօսքը ամփոփեց հիմնական երեք կէտերու շուրջ: Առաջին հերթին Վեհափառ Հայրապետը շեշ-



տեց, թէ «Երիտասարդութեան մասին պէտք է խօսիլ, այլ երիտասարդութեան հետ պէտք է խօսիլ, այլ խօսուով անոնց հետ երկխօսութիւն ունենալ: Երկխօսութիւն ունենալ կը նշանակէ ո՛չ միայն խօսիլ, այլ՝ լսել: Այսօր դեկավար դիրքի վրայ գտնուող անճանաչութիւններ պարտին լսել երիտասարդութեան ձայնը, որովհետեւ անոնք մեր առօրեայ կեանքը յուզող հարցերը տարբեր մօտեցումով ու հայեցակէտով կ'արժեւորեն ու կը քննարկեն: Հետեւաբար, անոնց ներգործող ներկայութիւնը անհրաժեշտ հրամայական է»: *Նորին Սրբութիւնը անցնելով երկրորդ կէտին՝ երիտասարդութիւնը հրաւիրեց մասնակից դառնալու հայ կեանքը ղեկավարող կառոյցներէն ներս: Ան ըսաւ, թէ՛ «պէտք է երիտասարդութիւնը ներառել հայ ընկերութեան կեանքէն ներս: Երիտասարդութիւնը, ընդհանրապէս, ընկերութեան կեանքի լուսանցքին վրայ գտնուած է: Հոն չէ տեղը: Երիտասարդութեան տեղը ընկերութեան մայր էջին վրան է: Երիտասարդութիւնը դիտողի ու հետեւողի կրաւորական դիրքին վրայ պէտք է ըլլայ, այլ մասնակցողի, եւ մանաւանդ, դեկավար դառնալու դերակատարութեան մէջ պէտք է ըլլայ: Հետեւաբար, երիտասարդութեան ներկայութիւնը հայ ընկերութեան բոլոր կառոյցներէն ու դիրքերէն ներս համապարփակ ու ամբողջական պէտք է ըլլայ»:* *Իր խօսքին երրորդ բաժնին մէջ Վեհափառ Հայրապետը յայտնեց, թէ՛ «Երիտասարդութիւնը մեր կեանքին մէջ ներկայութիւն դարձնելու համար յոյժ կարիքը ունինք վերանորոգման ու վերակազմակերպման: Երբ կը խօսինք վերանորոգման անյետաձգելի կարեւորութեան մասին, չենք կրնար երիտասարդութիւնը զանց առնել: Այսօր, ընկերութիւնը ընդհանրապէս եւ հայ կեանքը մասնաւորաբար, կարիքը ունի վերանորոգման, վերաշնչաւորման ու վերակենսաւորման: Համաշխարհայնացումի մասին կը խօսուի: Նախապէս կ'արժարժուէր համաշխարհայնացման յղացքին ու տեսութեան մասին, սակայն այսօր, ան մարդկային ընկերութեան մէջ ամենուրեք իրա-*

կանութիւն դարձած է: Մեր իւրաքանչիւր քայլափոխին կը հանդիպինք համաշխարհայնացման, դրական կամ բացասական, հետեւանքներուն ու հետքերուն: Ներկայ ընկերութեան կեանքին մէջ կառոյցները չեն կրնար գործել այնպէս՝ ինչպէս կը գործէին նախապէս: Անոնց նոր ոյժ, նոր աւիւն, նոր շունչ, նոր ոգի ու նոր մօտեցում հարկ է ներարկել: Հետեւաբար, կարիք ունինք վերանորոգման ու վերակազմակերպման, մանաւանդ Սփիւռքեան մեր կեանքէն ներս: Այս բոլորին լոյսին տակ, Մենք յառաջիկայ տարին «Սփիւռքի Տարի» պիտի հռչակենք: Պիտի խնդրենք մեր բոլոր կազմակերպութիւններէն ու կառոյցներէն, որ միասնաբար՝ բոլորս մտածենք ու քննարկենք, թէ ինչպէս կրնանք վերակազմակերպել ու վերարժեւորել մեր կեանքը Սփիւռքէն ներս: Սա հրամայական անհրաժեշտութիւն է, այլապէս մեր երիտասարդութիւնը պիտի հեռանայ հայ կեանքէն»:

Վեհափառ Հայրապետին խօսքէն անմիջապէս ետք, հանդիպման ներկայ երիտասարդները իրենց հարցումները ուղղեցին Նորին Սրբութեան: Ան, պատասխանելով «2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակելու նպատակը ի՞նչ է» հարցումին, ըսաւ՝ թէ վերակազմակերպման ու վերանորոգման հրամայական անհրաժեշտութիւնները հանդիսացան այն խթանները 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակելու: Մենք՝ բոլորս, պէտք է քաջութիւնը ունենանք մեր հարցերն ու թերութիւնները յստակ կերպով տեսնելու եւ զանոնք քննարկելու, որպէսզի կարողանանք զանոնք սրբագրել: Սփիւռքի մեր կառոյցները այսօր կը կարօտին գործնական քայլերով վերակազմակերպուելու ու վերանորոգուելու աշխատանքին՝ պահելով մեր ազգային ու հոգեւոր ինքնութիւնն ու արժէքները: Երբ կը շեշտենք վերակազմակերպման անհրաժեշտութեան վրայ, ըսել կ'ուզենք կառոյցի մը պայմաններն ու պարագաները վերատեսուցեան ենթարկելով՝ անոր առաքելութիւնը դարձնել առաւել կենսունակ: Ահա թէ ինչու մենք հայ Սփիւռքը արծարծելի նիւթ ու մտահոգութիւն կը փորձենք դարձնել ողջ հայութեան կեանքէն ներս: Ինչպէս Հայաստանն ու Արցախը մեր կեանքի օրակարգին վրայ մնայուն ներկայութիւն են, նոյնպէս Սփիւռքի վերակազմակերպումն ու հզօրացումը պէտք է դառնայ մեր առօրեայ մտահոգութիւնը, որովհետեւ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը կը կազմեն հայ կեանքի անքակտելի երրամիութիւնը:

Նորին Սրբութիւնը պատասխանելով «ինչպէ՞ս կարելի է տեսնել հայ երիտասարդը նախ ի՞նչ պէտք է մօտենայ հայ կեանքին: Ան, թերութիւններն ու պակասութիւնները հեռուէն դիտողն ու քննադատողը պէտք չէ ըլլայ, այլ մասնակցելով այդ թերութիւնները սրբագրողը: Հայ երիտասարդը մասնակցելով պէտք է իր լուծման ձգէ հայ կեանքին մէջ, մասնակցելով իր դերակատարութիւնը պէտք է ունենայ եւ մասնակցելով ղեկավար դառնայ: Սփիւռքի հայութեան կեանքը լեցուն ու հարուստ է զանազան կազմակերպութիւններով ու կառոյցներով: Իւրաքանչիւր երիտասարդ իր նախասիրած դաշտին

մէջ պէտք է մշակէ հայ կեանքի անդաստանը: Այսօր, երիտասարդներն ու ղեկավարները, երկուստեք ընելիք ունին: Ղեկավարները, եկեղեցիէն սկսեալ, պարտին իրենց կառոյցները վերանորոգութեան ենթարկել՝ զանոնք դարձընելով առաւել գրաւիչ:

Վեհափառ Հայրապետին ուղղուած հարցումներէն մէկն էր, թէ «հայ երիտասարդը ինչպէ՞ս կրնայ գործօն մասնակցութիւնը բերել համազգային առաքելութեան մէջ՝ եկեղեցւոյ ցամաքով»: Ան տուեալ հարցումին պատասխանեց, ըսելով՝ թէ եկեղեցին սովորական կառոյց մը չէ, անոր տեղն ու դիրքը մեր կեանքին մէջ կեդրոնական է: Սակայն, այսօր եկեղեցին եւս վերանորոգութեան, վերակազմաւորման ու բարեկարգութեան կարիքը ունի: Անցեալ օրերուն, երբ գումարեցին Ազգ. կեդրոնական Վարչութեան լիակատար ժողովները, հոն Մենք կազմեցինք յանձնախումբ մը, որ յատուկ կերպով պիտի զբաղուի եկեղեցւոյ բարեկարգութեան հարցով: Հոս հարկ կը զգանք յատկացնել, թէ նման աշխատանքներ հապճեպօրէն կատարելը վտանգաւոր արդիւնքներ կրնայ ծնիլ, հետեւաբար բարեկարգման գծով լուրջ աշխատանքներ կը ձեռնարկուին մեր կողմէ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակները, յատկապէս մեր երիտասարդ-երիտասարդուհիները, գործօն ներկայութիւն դառնան հայ եկեղեցիէն ներս:

Ներկայ դարու մտաւորականութիւնն ու երիտասարդ խաւը հետաքրքրող հարցումներէն մէկը եղող «Ո՞վ է հայը, ի՞նչ է հայկականութիւնը եւ դէպի ո՞ւր կ'ընթանայ հայրենի հողերէն դուրս գտնուող հայ անհատը» հարցումին Նորին Սրբութիւնը, հետեւեալ պատասխանը տուաւ ըսելով՝ «Այս հարցումները տեսական հարցումներ չեն, այս պատճառով դիւրաւ պատասխանելի չեն: Ի՞նչ են այն չափանիշերն ու արժեքափերը, որոնցմով մենք կը սահմանենք հայուն իսկական հայ ըլլալը: Ժամանակին հայերէնն էր հայը հայ պահող ազգակը: Սակայն, այսօր պայմաններու բերումով մեր գանազան գաղթօճախներուն մէջ. օրինակ, Միացեալ Նահանգներ, հայը հայ կը զգայ, սակայն հայերէն չի խօսիր: Նախապէս մեզ ուրիշներէն գանազանող ազգակներ կային, որոնք մեր ինքնութիւնը կ'արտայայտէին: Այսօր այդ ազգակները հետզհետէ սկսած են մաշիլ, գունաթափիլ ու անհետանալ: Սփիւտքի մէջ մենք ապրեցանք փակ ընկերութեան մէջ, որ կը բաղկանար եկեղեցի, ակումբ ու դպրոց երրորդութեանն էր մեր հայութիւնը պահեցինք: Այսօրուան համաշխարհայնացած ընկերութեան մէջ սահմաններ, պատեր ու սահմանագծեր գոյութիւն չունին: Երբ համաշխարհայնացումը մշակոյթի վերածուած բոլոր ազգերը սկսած է միաձուլել՝ մեզի պէս փոքր ազգերուն համար վտանգաւոր հորիզոն մը սկսած է պարզուիլ: Այսուհետեւ մենք չենք կրնար պատերու ետին մեր հայկականութիւնը պահել: Ինչպէս միշտ կը շեշտենք Մեր պատգամներուն ու խօսքերուն մէջ, եկեղեցին պատէն անդին պէտք է տանիլ, նոյնպէս ալ այսօր մեր բոլոր կառոյցները պէտք է պատէն անդին տանիլ ու գանձնք բանալ աշխարհին: Այս կացութեան մէջ ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ: Եթէ հայը պայմանաւորենք հայ լեզուով՝ սա վտանգա-

ւոր հետեւանքներ կրնայ ունենալ, նոյնպէս եթէ անտեսենք լեզուն՝ այդ պարագային եւս հարցերու դուռ կը բանանք: Մենք այսօր առաւել քան երբեք պէտք է կառչինք հայ լեզուին, յատկապէս արեւմտահայերէնի: Հայաստանին մէջ հայկականութեան հարց չկայ, հոն ամէն ինչ հայ է: Սակայն, Սփիւռքի մէջ հայ ըլլալը ամէնօրեայ տագնապ է, ամէնօրեայ պայքար է: Երբ մենք այսօր կը քալենք օտար հողերու վրայ, կը շնչենք օտար օդ, մեր դրացին ու գործընկերը օտար են, եւ երբ նոյնիսկ օտարը թափանցած է մեր ընտանիքէն ներս, կը նշանակէ որ մենք այլեւս օտարանալու եզրին կանգնած ենք: Այո՛, այսօր պայմանները դժուար են. հոս է որ մեզի կը պարտադրուի ըլլալ աւելի նկուն մեր արժեքափերու ու նկատմամբ: Հետեւաբար, Մեր կարծիքով, հայ ըլլալ կ'ենթադրէ մասնակից ըլլալ հայ կեանքին»:

Վեհափառ Հայրապետը պատասխանելով «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ի՞նչ ծրագիրներ ունի, իբրեւ կեդրոնական դերակատար Սփիւռքահայութեան կեանքին մէջ» հարցումին, ըսաւ՝ *Թէ եկեղեցին առաքելութիւն է, հետեւաբար մեր Ս. Աթոռը նաեւ առաքելութիւն ունի: Մեր առաքելութիւնը զանազան երեսներ ունի, կրօնական ու հոգեւոր առաքելութեան կողքին: Մեր կեանքը յուզող բոլոր հարցերը, հայ կեանքին հետ աղերս ունեցող բոլոր բնագաւառները, առաւել կամ նուազ չափով, ներկայութիւն են մեր Ս. Աթոռի առաքելութեան մէջ: Մենք ունինք հիմնական առաջնահերթութիւններ, օրինակ՝ քրիստոնէական դաստիարակութիւն, Դպրեվանք ու ընկերային ծառայութիւն: Մեր առաջնահերթութիւնը կը ճշդուի նաեւ մեր գաղութներուն պարզած պատկերով, օրինակ՝ Լիբանանի ներկայ կացութիւնը: Հետեւաբար, մեր ժողովուրդի կեանքին առնչուած մտահոգութիւններն ու մարտահրաւէրները կը դառնան մեր Ս. Աթոռին առաքելութեան, այլ խօսքով՝ ծրագիրներու մշակման աշխատանքներուն առանցքը:*

Հանդիպման մասնակից երիտասարդներուն մտահոգութիւններէն մէկն էր նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կայք հաստատած հայութեան ապագան: Մասնակից երիտասարդներէն մէկը իր հարցումը ուղղելով Նորին Սրբութեան հարցուց թէ՛ «Ո՞ր կ'ընթացան Սուրիոյ եւ Լիբանանի հայութիւնը եւ ինչպէ՞ս պէտք է տեսնել այս գաղութներուն ապագան»: Վեհափառ Հայրապետը պատասխանելով տուեալ հարցումին ըսաւ, թէ՛ «երբ մենք ունեցանք անկախ Հայաստան, կը սպասէինք որ Սփիւռքը հետզհետէ նստանայ եւ Հայաստանը լեցուի հայ ժողովուրդով, սակայն հակառակը պատահեցաւ: Հետեւաբար, հայրենադարձութիւնը պէտք է մեր բոլորին համար մնայ վախճանական նպատակ: Սփիւռքը պէտք է պահել եւ ո՛չ թէ քանդել, զայն կազմակերպել եւ ոչ թէ կազմալուծել: Այս պէտք է ըլլայ իրաւաւնչիր Սփիւռքահայութեան հիմնական նպատակն ու աշխատանքի կիզակետը»:

Հանդիպման աւարտին Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց երիտասարդներուն եւ թեւադրեց որ իրենց իսկ նախաձեռնութեամբ յառաջիկային կազմակերպեն Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն գծով համագումար մը:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳՆԱՀԱՏԵՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ
ՔՐԻՍՏԻԱՆՈՐ ՀԻՆՏԱՊՈՒՆՏ ԻՍ ՕՐԻԵՆԹ
(CHRISTLICHER HILFSBUND IM ORIENT)
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ**

Յիշեալ բարեսիրական կազմակերպութիւնը Գերմանիոյ մէջ նշեց իր գործունէութեան 125-ամեակը: Կազմակերպութիւնը Համիտեան Ջարդերէն սկսեալ, յատկապէս Կիլիկիոյ Ատանա ու Մարաշ քաղաքներու մէջ, իր մարդասիրական նպաստը բերած է մեր ժողովուրդի գաւակներուն: Ընկերային կեդրոններ հաստատած է յիշեալ քաղաքներուն մէջ եւ ապա իր ծառայութեան դաշտը եղած է Սուրիա, Լիբանան եւ Հայաստան: Լիբանանի պարագային Այնճարի մէջ հիմնած է գիշերօթիկ դպրոց: Մինչեւ վերջին տարիներուն իր օժանդակութիւնը շարունակած է Հայ Աւետարանական եկեղեցւոյ ճամբով:

Ընդառաջելով ընկերակցութեան փափաքին, Նորին Սրբութիւնը հայրապետական յատուկ գիրով իր գնահատանքը յայտնեց յիշեալ կազմակերպութեան, որ մեր ժողովուրդի կեանքի ճակատագրական ժամանակներուն իր մարդասիրական օգնութիւնը կատարած է:

**ԱՆԳՆԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ
ՎԵՐԱՓՈՒՆ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ**

Հինգշաբթի, 11 Նոյեմբերին, Լիբանանի մօտ Անգլիոյ դեսպան՝ դոկտ. Իան Զոլարտ այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ

Ա. Վեհափառ Հայրապետին եւ երկար հանդիպում մը ունեցաւ: Զննարկումի նիւթ դարձան ընդհանրապէս Միջին Արեւելքի ու մասնաւորաբար Լիբանանի առնչուած շարք մը հարցեր:

Նորին Սրբութիւնն ու դեսպանը շեշտեցին Լիբանանի օժանդակութեան հրամայականը՝ քաղաքական, տնտեսական ու մարդասիրական բնագաւառներէն ներս: Անոնք սաեւ ընդգծեցին կառավարութեան կողմէ աշխատանքի վերսկզբման անհրաժեշտութիւնը, որպէսզի կարելի ըլլայ ժողովուրդի առօրեային առնչուած շարք մը հարցերուն լուծում տալ: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը ողջունելով վերջերս Անգլիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման գծով առնուած առաջին քայլը, իր գնահատանքը յայտնեց Անգլիոյ՝ հայ ժողովուրդին դատին գծով ցուցաբերած զօրակցութեան համար:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
Հ.Յ.Դ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Հինգշաբթի, 11 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի ներքին կացութեան եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց հետ աղերս ունեցող շարք մը հարցեր:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԻՏԱԼԻՈՅ ԴԵՍՊԱՆՈՒՅԻՆ**

Ուրբաթ, 12 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Իտալիոյ դեսպանուհի՝ դոկտ. Նիքոլեթա Պոմպարտիեր:

Հանդիպումը առիթ հանդիսացավ առաջին հերթին անդրադարձ կատարելու Յուլիսին Վատիկանի մէջ տեղի ունեցած Լիբանանի քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպումին եւ ապա՝ Լիբանանի դիմագրաւած մարտահրաւերներուն: Դեսպանուհին պարզեց Իտալիոյ կատարած աշխատանքները թե՛ Լիբանանի գծով եւ թե՛ Լիբանանէն ներս:

Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնեց Իտալիոյ՝ լիբանանեան բանակին, ինչպէս նաեւ բարեսիրական ու առողջապահական ծրագիրներուն կատարած օժանդակութիւններուն համար: Այս ծիրէն ներս, ողջունելով Պուրճ Համուտին առնչուած ծրագիրներուն օգտակար ըլլալու Իտալիոյ յանձնառութիւնը, Վեհափառ Հայրապետը շեշտեց նման նախաձեռնութեան յոյժ կարեւորութիւնը՝ յիշեցնելով, որ այս հանգրուանին ժողովուրդին ընկերային-տնտեսական կարիքներուն օգտակար ըլլալը առաջնահերթութիւն կը կազմէ Լիբանանի համար:

Դեսպանուհին փափաք յայտնեց Նորին Սրբութեան հետ խորհրդակցութիւնները շարունակելու:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
ԱՉԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ԱԼԵՔՔՕ ԵՒ ԱՆԻ ՊԵՉԻՔԵԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ
ԻՐ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅՈՒԹԵԱՆ**

Ինչպէս նախապէս հաղորդած էինք, Լիբանանի մէջ ստեղծուած ընկերա-

յին-տնտեսական դժուար պայմաններու լոյսին տակ եւ հայորդիներուն առողջապահական կարիքներուն օգտակար ըլլալու նախանձախնդրութենէն մղուած, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցաբար ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ, տէր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիքեան պիտի հոգան լիբանանահայ կարիքաւոր ազգայիններու հիւանդանոցային եւ ախտաճանաչման քննութիւններու առնչուած ծախսերը:

Գոհունակութեամբ կ'ուզենք արձանագրել, որ աշխատանքի առաջին հանգրուանը՝ 1 Յուլիս-1 Հոկտեմբեր 2021, աւարտած է եւ ֆոնտը հոգացած է 529 պարագայի առողջապահութեան վերաբերող ծախսերը թե՛ ախտաճանաչման, թե՛ բժշկական տարբեր տեսակի քննութիւններու եւ թե՛ հիւանդանոցային բուժման առումով:

Աշխատանքի երկրորդ հանգրուանին համար նկատի առնուած է 15 Նոյեմբեր- 31 Մարտ 2022:

Ֆոնտը պիտի հոգայ միայն ծանր հիւանդութիւններ ունեցողներու բուժման հիւանդանոցային ծախսերը: Դիմումները պիտի կատարուին ԱՖՀԻԼ-ի գրասենեակը, Պուրճ Համուտի «Արին» շէնք, 3-րդ յարկ, ամէն Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ մինչեւ 13:00:

Անցնող տարիներու ընթացքին տէր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիքեան զանազան կերպերով օգտակար հանդիսացան լիբանանահայ կարիքաւոր ընտանիքներուն:

Վեհափառ հայրապետը անգամ մը եւս բարձրօրէն կը գնահատէ եւ հայրապետական օրհնութեամբ կ'ողջունէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաւատարիմ բարերարներէն ազգային բարերար տէր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեգիքեանի ազգա-

նուէր ու հոգածու վերաբերումը, յատկապէս լիբանանահայութեան նկատմամբ:

**ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ԱՐՑԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՍԻՆ
ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒՆ**

2020-ի Սեպտեմբեր 27-էն Նոյեմբեր 9-ը երկարող 44-օրեայ ճակատագրական եւ բախտորոշ պատերազմը հայ ժողովուրդի յիշողութեան մէջ թողուց իր արիւնսախառն յիշատակը: Այս պատերազմով վերաշէտուեցաւ թուրքին ծաւալապաշտական քաղաքականութիւնը, որ անդրկովկասեան երկիրներուն ներքին ու արտաքին անդորրութեան, սահմանային անվտանգութեան ու հողային ամբողջականութեան դէմ վտանգալից ազդակ մը կը ներկայացնէ: Ողջ հայութիւնը յուզող պատերազմին հետեւանքը եղաւ՝ աւելի քան 5000 նահատակներ, 200-է աւելի գերեվարուած զինուորներ ու քաղաքացիներ, հարիւրաւոր հետակորոյս հայորդիներ, ինչպէս նաեւ հողային հսկայ տարածքներու կորուստ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, պատերազմի բոլոր հանգրուաններուն, Արցախին նկատմամբ արտայայտեց իր ամբողջական նեցուկը՝ համազգային ոյժերը համախմբման հրաւիրելով, Արցախի միջազգային ճանաչողութեան գծով գործօն քայլերու նախաձեռնելով ու հայ ազգի արդար իրաւունքը բարձրաձայնելով:

Այս իմաստով, Վեհափառ Հայրապետը պատերազմի ընթացքին բազմիցս հանդէս եկաւ իր Հայրապետական ոգեւորիչ պատգամներով, ինչպէս նաեւ Անթիլիասի Մայր Տաճարին մէջ հայրենիքի ու Արցախի խաղաղութեան համար աղօթք բարձրացնելով առ Աստուած ու Արցախի ճանաչողութեան համար միջազգային կապեր

հաստատելով:

Կիրակի, 14 Նոյեմբերին, Նախագահութեամբ Սուրբ Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին ի խնդիր հայրենի հողի պաշտպանութեան քաջաբար իրենց արիւնը թափած հերոս հայորդիներու հոգիներուն խաղաղութեան համար:

Ս. եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, Կաթողիկոսարանի Cilicia TV լրատուամիջոցը դիմելով Արամ Ա. Կաթողիկոսին՝ փափաքեցաւ իմանալ Նորին Սրբութեան մտածումները, արցախեան պատերազմին զոհուած հայորդիներուն համար կատարուած հոգեհանգիստին առիթով: Վեհափառ Հայրապետը կատարուած արարողութեան կարեւորութիւնն ու իմաստը ամփոփեց հետեւեալ տողերով. «Մեր նահատակները իրենց արիւնը թափեցին ի խնդիր Հայրենիքի պաշտպանութեան: Հայրենիքը ամէն բանէ առաջ հող է: Հետեւաբար, հայրենի հողին պաշտպանութիւնը իւրաքանչիւր հայուն սրբազան պարտաւորութիւնն է: Մեր նահատակները յիշել, կը նշանակէ հայրենիքի պաշտպանութեան նկատմամբ մեր յանձնառութիւնը աւելի ամրապնդել»:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՕՏ**

Շաբաթ, 13 Նոյեմբերին, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը՝ զխաւորութեամբ Դոկտ. Մկրտիչ Մկրտ-

տիչեանի այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Հանդիպման ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը Վեհափառ Հայրապետին զեկուցեց Համազգայինի մասնաճիւղերուն գործունէութեան եւ անոնց դիմագրաւած այլազան դժուարութիւններու առնչուած հարցերու մասին:

Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց Համազգայինի գործունէութիւնը՝ հաստատելով, որ անիկա կարելոր դերակատարութիւն ունեցած է Սփիւռքի տարածքին՝ ընդհանրապէս հայապահպանման ու յատկապէս հայ մշակոյթի տարածման առաքելութեան մէջ:

Իսկ Երկուշաբթի, 15 Նոյեմբերին, Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը՝ ընկերակցութեամբ դոկտ. Խաչատուր Ռոստոմ Ստեփանեանի, այցելեց Արամ Ա. Կաթողիկոսին: Դոկտ. Ստեփանեան հեղինակն է «Հայաստանում Խորհրդային Իշխանութեան Հաստատման Հիմնահարցը Սփիւռքահայ Հասարակական-Քաղաքական Մտքի Գնահատմամբ (1920-1930-ական թթ.)» հատորին, որ վերջերս լոյս ընծայուեցաւ Անթիլիասի Մայրավանքի տպարանէն: Վեհափառ Հայրապետը գնահատեց դոկտ. Ստեփանեանի կատարած աշխատանքը եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց անոր յառաջիկայ ծրագիրներուն: Այս առիթով, Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ շեշտեց մեր մշակութային արժէքներուն կենսագործման կարեւորութիւնը, որուն լծուած է Համազգայինը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Հինգշաբթի, 18 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի հայ համայնքի

ընկերային ծառայողներու միութեան նորընտիր վարչութիւնը:

Վարչութիւնը եկած էր Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը ստանալու եւ զինք տեղեակ պահելու ընկերային ծառայութեան լծուած վարչութեան կազմակերպութիւններու աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Նորին Սրբութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց ընկերային ծառայողներուն եւ մեր ժողովուրդի կարիքաւոր զաւակներուն ծառայութեան լծուած բոլոր կազմակերպութիւններուն:

Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Անբնական պայմաններու մէջ կ'ապրինք: Ընկերատնտեսական մտահոգութիւնները բազմաթիւ են ու բազմազան: Հետեւաբար, մեր ժողովուրդի կարիքներուն օգտակար հանդիսանալը մեր բոլորին առաջնահերթ պարտաւորութիւնը պէտք է դառնայ»: Այս առիթով, Նորին Սրբութիւնը նաեւ իր ջերմ գնահատանքը յայտնեց այն բոլոր կազմակերպութիւններուն ու նուիրատուներուն, որոնք զանազան կերպերով կ'օժանդակեն մեր կառոյցներուն ու կարիքաւոր ընտանիքներուն:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՅԱՋՈՐԴԱԲԱՐ
ՆԱԽԱԳԱՅԵՑ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՈՒ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ**

Շաբաթ, 20 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր աշխատանքային օրակարգը ամբողջութեամբ յատկացուցած էր միաբանական յանձնախումբերու հետ հանդիպումներու:

Այս ծիրէն ներս, Նորին Սրբութիւնը նախագահեց ծիսական կեանքի բարելաւման նուիրուած յանձնախումբին, նորանշանակ տնօրէն ժողովին

եւ հինգ Նորընծայ արեղաներու հանդիպումներուն, որոնք կը հետապնդեն Անթիլիասի Մայրավանքի ներքին վանական կեանքի առաւել կազմակերպման եւ միաբան հայրերու աշխատանքներուն առաւել աշխուժացման: Սոյն հանդիպումներուն ընթացքին, Հայրապետը անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց, իր հայրական օրհնութիւնը տուաւ եւ գնահատեց միաբան հայրերու աշխատանքը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԵՆ
ՉՈՐՍ ԳՆԱԴՊԵՏՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 27 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Հայաստանի Հանրապետութեան Չինուած Ոյժերու խաղաղապահ բրիգադի հրամանատար ժեներալ-մայոր Արտակ Տօնոյեանի գլխաւորած պատուիրակութիւնը, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան զինուորական կցորդ գնդապետ՝ Ալեքսան Մուշեղեանի ընկերակցութեամբ:

Ողջունելով հայ սպաները Անթիլիասի Մայրավանքէն ներս, Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական օրհնութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց հայոց քաջարի բանակին՝ շեշտելով, թէ մեր ժողովուրդի միասնականութեան ու հզօրութեան, հայրենիքի գերիշխանութեան, հողային ամբողջականութեան ու անվտանգութեան երաշխիքը հայոց բանակն է: Նորին Սրբութիւնը նաեւ կարեւորութեամբ ընդգծեց հայոց բանակին զօրավիգ կանգնելու հրամայականը:

Յայտնենք, որ Հայաստանի բանակի սպաները կարճ այցելութեամբ Լիբանան կը գտնուին հանդիպում ունենալու Միացեալ Ազգերու Կազմակերպութեան խաղաղապահ ոյժերուն

մաս կազմող հայկական ջոկատին հետ:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Շաբաթ, 27 Նոյեմբերին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Կիպրոսի հայութեան պետական ներկայացուցիչ՝ Վարդգես Մահտեսեանը, իր տիկնոջ ընկերակցութեամբ: Մահտեսեան յատուկ կերպով ժամանած էր Լիբանան՝ իր վերընտրութեան առիթով Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը ստանալու եւ թելադրանքները լսելու համար:

Նորին Սրբութիւնը իր ջերմ շնորհաւորութիւնը յայտնեց Մահտեսեանին, ինչպէս նաեւ իր բարձր գնահատանքը՝ Կիպրոսի հայութեան մատուցած ծառայութեան համար՝ շեշտելով, որ անոր վերընտրութիւնը ինքնին պերճախօս վկայութիւն մըն է անոր նկատմամբ Կիպրոսի հայութեան ունեցած գնահատանքին ու վստահութեան: Նորին Սրբութիւնը առաւել յաջողութիւն մաղթեց պետական ներկայացուցիչին՝ գաղութին համար ունեցած ծրագիրներուն ու յառաջիկայ աշխատանքներուն մէջ:

**ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՔ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երեքշաբթի, 30 Նոյեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ միաբան հայրերու հաւաք:

Հանդիպման սկիզբը Նորին Սրբութիւնը ողջունեց Մայրավանք ժամանած թեմակալ առաջնորդները: Խօսելով միաբանական կեանքին առնչուած

երեւոյթներուն, ան շեշտեց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութիւնը այսօր ամբողջական նուիրումով լծուած է հայ ժողովուրդի ծառայութեան՝ թէ՛ թեմերէն ներս եւ թէ Կաթողիկոսարանին մէջ: Ապա, ան անդրադարձ կատարեց յառաջիկային տեղի ունենալիք Կրօնական եւ Զաւարակական ժողովներուն: Հանդիպման ընթացքին Նորին Սրբութիւնը նաեւ խօսեցաւ հայ ազգն ու հայրենիքը յուզող հարցերու մասին:

Աւարտին, հաւաքին մասնակից միաբաններ համահունչ կերպով կատարեցին «Կիլիկիա» քայլերգի ու «Կիլիկեան Ուխտի» Հայրապետական մաղթերգի երգեցողութիւնը:

**«ՁԱՅՆ ԵՐԿՆԱՅԻՆ» ԸՄՐՔԻՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԽՏԱՍԱԼԻԿԸ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱԻ**

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» երգչախումբը կը ձեռնարկէ Հայ Եկեղեցւոյ շարականներու երգեցողութեան ձայնագրեալ արձանագրութեան՝ «Ձայն Երկնային» վերնագիրով խտասալիկներու շարքով: Ծրագիրին նպատակն է Հայ Եկեղեցւոյ հազարմեայ երաժշտական հարստութիւնը նկատուող շարականները կենդանի պահել եւ փոխանցել նոր սերունդներուն:

«Շնորհալի» երգչախումբին նախաձեռնութեամբ հրապարակուած յիշեալ անդրանիկ խտասալիկը կը պարունակէ Միջինքէն ետք Խաղաղական ժամերգութիւններու ավարտին երգուող ստեղիները՝ մեներգութեամբ «Շնորհալի» երգչախումբի անդամ՝ սփրանսօ Շողիկ Թորոսեանի եւ դաշնակահարութեամբ՝ Յասմիկ Գասպարեանի:

Այսպիսով, «Շնորհալի» երգչա-

խումբը վերանորոգ թափով կը շարունակէ իրեն վստահուած առաքելութիւնը: Արամ Ա. Վեհափառ Հայրապետը այսպէս բնորոշած է երգչախումբը. «Ներսէս Շնորհալիի անունով կնքուած «Շնորհալի» երգչախումբը իր լուման ձգած է ու պիտի շարունակէ ձգել հայ մշակոյթի գանձանակին մէջ: Երգչախումբի անդամները կամաւոր զինուորներ են, որոնք Կաթողիկոսութեան ճամբով կը պահպանեն ու կը տարածեն հայ երաժշտութիւնը»:

**Հ.Յ.Դ. ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Չորեքշաբթի, 8 Դեկտեմբերին, Հ.Յ.Դ. Բիւրոյի կազմակերպած դաշնակցական կազմակերպական աշխարհատարած կառոյցի մարմիններու խորհրդաժողովին մասնակիցները, գլխաւորութեամբ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանի, այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Մէկուկէս ժամ տեւած հանդիպումին, առաջին առիթով Վեհափառ Հայրապետը ողջունեց խորհրդաժողովին մասնակիցները եւ Լիբանանի ապրած տագնապալի այս փուլին բարձր գնահատեց խորհրդաժողովին կայացումը Պէյրութի մէջ:

Ապա Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ այն իրողութեան, որ իր հոգեւոր ծառայութեան ընթացքին՝ իբրեւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ եւ ապա՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, մօտէն ճանչցած է Դաշնակցութիւնը, եւ տարբեր օրինակներով վկայած՝ անոր առանցքային դերին եւ նշանակութեան՝ Հայոց պատմութեան վերջին արեւի քան 130 տարիներու ընթացքին: Ապա ան անդրադարձաւ համահայկական ժամանակակից գեր-

խնդիրներուն՝ անհրաժեշտ նկատելով համահայկական միացեալ ուժերով դիմակալել հայութեան սպառնացող նորոտեայ վտանգները եւ ապառնալիքները:

Այս առիթով Նորին Սրբութիւնը լուսարձակի տակ առաւ լիբանանահայութեան դիմագրաւած աննախընթաց ճգնաժամը՝ հաստատելով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, ինչպէս անցեալին, այսօր եւս կը շարունակէ ժողովրդանուէր իր ծառայութիւնը եւ պատմական առաքելութիւնը: Հայրապետը հաստատեց, որ բոլոր միջոցներով պետք է անսալ լիբանանահայութեան կարիքներուն եւ սատարել անոր վերականգնումին, որպէսզի երաշխաւորուի անոր համահայկական դերակատարութեան շարունակականութիւնը:

Հանդիպումը առիթ մը հանդիսացաւ անդրադառնալու արցախեան 44-օրեայ պատերազմին եւ անոր իբրեւ հետեւանք հայութեան, Հայաստանի եւ Արցախի պարզած այսօրուան տըխուր եւ վտանգաւոր կացութեան, ինչպէս նաեւ քաղաքական եւ անվտանգային տագնապներուն:

Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան, իր կարգին կարեւոր նկատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անշըջանցելի պատմական դերակատարութիւնը եւ անոր ունեցած առանցքային դերը հայոց պատմութեան բոլոր փուլերուն: Ապա ընդհանուր ակնարկով մը անդրադարձաւ համազգային հրատապ օրակարգերուն եւ այդ բոլորին գծով Դաշնակցութեան ունեցած արժեւորումներուն:

Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բագրատունի, իր կարգին խօսք առնելով վկայեց Վեհափառ Հայրապետին ժողովուրդի կողքին կանգնելու ու անոր ցաւերը, տագնապներն

ու դժուարութիւնները կիսելու եւ անոնց դարմանումին համար իր ցուցաբերած հայրական ոգիին ու գուրգուրանքին մասին: Ան անելցուց, որ Հայրապետը, իբրեւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ, քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթացքին մնաց իր ժողովուրդի կողքին, անտեսելով բոլոր վտանգները: Կանգնեցաւ պատնէշի առաջին դիրքերուն վրայ եւ հակառակ իրեն տրուած խորհուրդներուն, նախընտրեց մնալ Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանին մէջ՝ իր ժողովուրդի կողքին: Այսօր նաեւ ան իբրեւ Կաթողիկոս, ի տես լիբանանահայութեան ապրած ծանր ճգնաժամին, խորապէս կը տագնապի հայորդիներու ապրած դառն կացութեամբ եւ ամէն ճիգ ի գործ կը դնէ հասնելու անոնց կարիքներուն, եւ զօրակոչի ենթարկելով թեմերը կ'ապահովէ համահայկական օժանդակութիւն՝ ի խընդիր լիբանանահայութեան գոյերթի անխափան շարունակականութեան:

Հանդիպումի ընթացքին անդրադարձ եղաւ նաեւ Սփիւռքի դիմագրաւած մարտահրաւերներուն: Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ նկատեց Սփիւռքի վերակազմակերպումը եւ անոր երթին նոր որակ եւ լիցք հաղորդելու անհրաժեշտութիւնը: Նորին Սրբութիւնը յայտնեց, որ այս առաջադրանքէն մեկնած որոշած է 2022 թուականը յայտարարել «Սփիւռքի տարի»:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԽՍՏՕՐԵՆ
ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ
ԿԱՏԱՐՈՒՈՂ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը խոր մտահոգութեամբ կը հետեւի Հայաստանի արեւելեան սահմանին վրայ Ազրայէճանի կողմէ նախա-

ծեռնուած եւ Հայաստանի հողային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը վտանգող մարտական գործողութիւններուն:

Ազրպէյճանը արհամարհելով մարդկային իրաւանց հիմնական սկզբունքները, ոտնակոխելով միջազգային օրէնքի տուեալները եւ անտեսելով Նոյեմբեր 9-ին կայացած եռակողմ համաձայնութեան պայմանները, կը շարունակէ իր ոճրային արարքները Հայաստանի ինքնիշխան Հանրապետութեան նկատմամբ:

Արդարեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը խստօրէն կը դատապարտէ Ազրպէյճանի կողմէ կատարուող զինուորական յաճախակի ոտնձգութիւնները, իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ հայկական քաջարի բանակին ու հայրենի մեր ժողովուրդին եւ կոչ կ'ուղղէ միջազգային համայնքին, անմիջապէս միջամտելու եւ դադրեցնելու Ազրպէյճանի կողմէ կատարուող զինուորական գործողութիւնները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նաեւ կոչ կ'ուղղէ մեր ժողովուրդի զաւակներուն նեցուկ կանգնելու եւ անվերապահ աջակցութիւն ցուցաբերելու հայրենիքին եւ հայոց բանակին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կ'աղօթէ առ բարձրեալն Աստուած, որ Իր Ս. Աջը անպակաս ընէ մեր ազգին, հայրենիքին ու հայոց բանակին վրայէն:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԸՆԴՀ. ԶԱՐՏՈՒՂԱՐԸ

Կիրակի, 12 Դեկտեմբերին, Ս. եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդէն (Ե.Հ.Խ.)

պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին՝ Գարլա Խիժոյեան, Դոկտ. Աբրահամ Ուիլըր եւ Եոլէնի Ռեպելէ: Գարլա Խիժոյեանը կը ներկայացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Խորհուրդէն ներս եւ պատասխանատու է Միջին Արեւելքի առնչուած հարցերուն: Իսկ Դոկտ. Աբրահամ Ուիլըր եւ Եոլէնի Ռեպելէ յատուկ պատասխանատուութիւն ունին Ե.Հ.Խ.-ի միջ-կրօնական ու քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան բաժանմունքին մէջ:

Պատուիրակութիւնը եկած էր իմանալու Վեհափառ Հայրապետին տեսակետը յատկապէս քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան ու գործակցութեան շուրջ: Նորին Սրբութիւնը ընդհանուր ակնարկ մը կատարելով վեր առաւ Ե.Հ.Խ.-ի գործունեութիւնը քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան ծիրէն ներս եւ անդրադարձաւ այս ուղղութեամբ անցեալին տեղի ունեցած երկու միջազգային համագումարներու, ինչպէս նաեւ այլ աշխատանքներու: Հայրապետը նաեւ իր թելադրութիւնները փոխանցեց ներկայ ժամանակներու քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան առաջնահերթութիւններու ու շեշտաւորումներու գծով, որոնք հրամայական դարձած են ոչ միայն Միջին Արեւելքի, այլ նաեւ բազմակրօն դարձած արեւմտեան ընկերութեան մէջ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՏԵԼԵՑ ԱՆԹԻԼԻԱՍ

Շաբաթ, 11 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեան:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան հայութիւնը յուզող հարցեր՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքա-

կան եւ դաւանաքաղաքական ծիրէն ներս:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ
ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ**

Չորեքշաբթի, 22 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը աւելի քան ժամ մը տեւողութեամբ հանդիպում ունեցաւ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնի աշակերտութեան հետ:

Նորին Սրբութիւնը գնահատեց Կեդրոնի աշակերտութեան ցուցաբերած նախանձախնդրութիւնն ու գործօն մասնակցութիւնը դասընթացքներուն: Ան իր խօսքին մէջ շեշտեց Կեդրոնին կարեւոր դերը՝ հայագիտական նիւթերուն զարգացման գծով, ապա անդրադարձաւ հայ ժողովուրդը ընդհանրապէս եւ Սփիւռքը մասնաւորաբար՝ դիմագրաւող մարտահրաւերներուն:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը յայտնեց Կեդրոնի երկար տարիներու ժրաշան տնօրէն՝ Ժիրայր Դանիէլեանին, որ առողջապահական պատճառով կը գտնուի Միացեալ Նահանգներու մէջ, եւ Նորանշանակ տնօրէն՝ Ահարոն Շիրտմեանին մաղթեց յարատեւ յաջողութիւն:

**ԼԻՔԱՆԱՆԻ ՄՕՏ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ
ԱՆԹԻԼԻԱՍ**

Հինգշաբթի, 23 Դեկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը Լիբանանի Սօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչին, մշակոյթի կցորդին եւ տեղեկատուական բաժնի տնօրէնին: Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էր Ազգային Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան:

Հանդիպումը առիթ մը հանդիսացաւ անդրադարձ կատարելու ընդհանրապէս Իրանի եւ Լիբանանի յարաբերութեանց եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Իրանի պետութեան միջ-կրօնական ու մշակութային երկխօսութեան բաժանմունքի միջեւ շարունակուող երկխօսութեան: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Թեհրանի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան մօտէն կը հետեւի երկխօսութեան գործընթացքին եւ հաւանաբար յառաջիկայ Մայիսին տեղի ունենայ յաջորդ հանդիպումը՝ Թեհրանի կամ Անթիլիասի մէջ:

Հիւրերը յիշատակի նուէր մը յանձնեցին Նորին Սրբութեան եւ ապա այցելեցին «Կիլիկիա» թանգարան եւ մօտէն ծանօթացան թանգարանին մէջ ցուցադրուող պատմական իրերուն:

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 7 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2021: Թ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Երեմիա Աբղ. Տէկիրմէնճեան:

ԿԻՐԱԿԻ, 14 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2021: Ժ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 21 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2021: ԺԱ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ՏՕՆ ԸՆԾԱՅՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՐԻՑ ԱՄԱՑ Ի ՏԱՃԱՐՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 28 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2021: Ա. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան:

ԿԻՐԱԿԻ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021: Բ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021: Գ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուպերթեան:

ԿԻՐԱԿԻ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021: Դ. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021: Ե. ՅԻՍՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան: